ՀՅԴ Պատմական

ԴՐՕՇԱԿ

Փետրվար N02 (1617)

2010

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմաթերթ

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պաշտօնաթերթ



"Դրօշակ"
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեւավորումը՝ **Մ. Հովսեփյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Միհր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Ուղենիշերից ոլլաֆորմ՝ գաղափարակցական փորձագիտութեան ճանապարհով 2

Հարցազրույց

«Ի՞նչ շարունակություն կունենա գործընթացը» 4

Խորհրդաժողով

Հայ-թուրքական հարաբերությունների ներկա գործընթացը և դրա ազդեցությունը ՀՀ ներքաղաքական զարգացումների վրա 8

Սոցիալ-տնտեսական

Պետութեան վախճանը (կամ ազատ շուկայի ութոփիան) 15

ՀՀ Ազգային ժողով

Միջազգային պայմանագրերը վերադահումով վավերացնելու Հայաստանի օրենսդրության զարգացման մասին 24

Անդրադարձ

Վասն տգիտության 28

Խմբագրի անկյուն

Խալիլ բեյի կոշիկները 43

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Ռուսիա. պետական հարուած 45

Նոր գրքեր

Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում 46

Պատկերասրահ

Թաքոս (Հրանտ Թադևոսյան) 48

Digitized by ARF PR Office

Ուղենիշերից պլատֆորմ՝ գաղափարակցական փորձագիտութեան ճանապարհով

2009 թ. հոկտեմբերին հրապարակուած «ՀՅԴ Հայաստանի կազմակերպութեան գործունէութեան ուղենիշեր»-ն առաւել բիւրեղացնելու եւ հանրութեանը ներկայացնելու նպատակով ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինը, ՀՅԴ Բիւրոյի աջակցութեամբ, առաջիկայում կը կազմակերպի երեք միջազգային խորհրդաժողով, որոնցից իւրաքանչիւրը կ՝անդրադառնայ «Ուղենիշերի» երեք հիմնական գլուխներից մէկին:

Առաջին խորհրդաժողովը տեղի կ՝ունենայ 2010 թ.-ի Մարտի 25-26-ին, Երեւանում, ուր կ՝արծարծուեն «Ուղենիշերի» «Սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ» գլխում ամփոփուած խնդիրներն ու առաջադրանքները: Երկօրեայ այդ խորհրդաժողովում կը քննարկուեն սոցիալիզմի գաղափարական հիմքերը, գործադրական ժամանակակից մօտեցումները, ինչպէս նաեւ Հայաստանում առկայ սոցիալ-տնտեսական մարտահրաւէրները եւ դրանց հնարաւոր լուծումները սոցիալիստական մտքի տեսանկիւնից:

Խորհրդաժողովին զեկոյցներով հանդէս կը գան փորձագէտներ՝ Հայաստանից եւ Սփիւռքից, ինչպէս նաեւ մի շարք այլ երկրների սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական եւ լեյբորիստական կուսակցութիւնների ներկայացուցիչներ:

Անտարակոյս, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմնի այս նախաձեռնութեան ոգին աւանդական է եւ, ըստ ամենայնի, օրինաչափ մօտեցում ՀՅԴ գաղափարախօսական կեանքում:

Թերեւս այս մօտեցման սկիզբը դրուեց դեռ անցեալ դարասկզբին: Ելնելով ՀՅԴ երրորդ Ընդհանուր Ժողովի (1904 թ.) որոշումների ոգուց՝ ՀՅԴ Խորհուրդը 1905 թուականին հրապարակեց «ՀՅԴ կովկասեան գործունէութեան նախագիծ»-ը, որը տեսաբանական լայն քննարկումների նիւթ դարձաւ Դաշնակցութեան շարքերում: «Նախագծի» հիման վրայ եւ դրա շուրջ ծաւալուած խորհրդածութիւնների արդիւնքում կուսակցութեան չորրորդ Ընդհանուր Ժողովը (1907 թ.) մշակեց եւ հրապարակեց ՀՅԴ ծրագիրը, որը պարունակում էր ինչպէս Դաշնակցութեան աշխարհայեացքային հիմնադրոյթնե-

ը, այնպէս էլ ազգային-քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ սոցիալ-մշակութային նուազագոյն պահանջները՝ այդ օրերի Հայաստանի երկու հատուածների համար: ՀՅԴ չորրորդ Ընդհանուր Ժողովի իսկ գնահատմամբ, եթէ չլինէին երկամեայ բուռն քննարկումները, 1907 թուականի ծրագիրը, անտարակոյս, չէր լինի բազմակողմանի, հարուստ ու համապարփակ մի փաստաթուղթ եւ չէր հանդիսանայ համակուսակցական գաղափարական կուռ կամքի արտայայտութիւն:

Հետեւողական քննարկումների միջոցով կուսակցութեան գաղափարա-քաղաքական համոզումների բիւրեղացման աւանդոյթը շարունակուեց նաեւ հետագայում եւ գոյատեւեց ՀՅԴ ողջ պատմութեան երկայնքով: Այս աւանդոյթը լաւագոյնս դրսեւորուել է նաեւ այն ժամանակաշրջանում, երբ Դաշնակցութիւնը «վտարանդի» էր. կուսակցութեան քսանմեկերորդ Ընդհանուր Ժողովը (1978 թ.) հրապարակեց ՀՅԴ վերամշակուած ծրագրի տարբերակը, որն էլ ներկուսակցական եւ հրապարակային լայն քննարկումների առարկայ դարձաւ քառամեայ շրջանում եւ ի վերջոյ, համապատասխան նկատառումներով, հաստատուեց ՀՅԴ քսաներկուերորդ Ընդհանուր Ժողովում (1982 թ.):

Այս յատկանշական աւանդոյթի եւ էական օրինաչափութեան իմաստով, ՀՅ Դաշնակցութիւնը իւրայատուկ տեղն ունի հայ քաղաքական իրականութեան մէջ:

ՀՅԴ-ն լիարժէք ընդդիմադիր ուժ է Հայաստանում եւ ձգտում է քաղաքական իր պայքարը վարել նախ եւ առաջ գաղափարախօսական ճակատում, առաջադրելով համակարգային բարեփոխման իրատեսական լուծումներ: Այսօր տուեալ լուծումներն առաջադրուել են «Ուղենիշեր»-ում եւ, ՀՅԴ ծրագրի հիմնարար սկզբունքների լոյսի ներքոյ, քննարկման եւ ձեւաւորման գործընթացում են: Գերագոյն Մարմնի նախաձեռնութիւնը, հետեւաբար, անհրաժեշտ քայլ է այս գործընթացի արդիւնաւորման ուղղութեամբ:

Հայաստանի եւ այլ երկրների գաղափարակից հոսանքների պետական եւ քաղաքական փորձառութիւնն օգտագործելու տեսակէտից, տուեալ նախաձեռնութիւնը կարող է նոր գործելակերպի հիմք դնել եւ, ինչ խօսք, կը նպաստի մեր նորանկախ հանրապետութեան զարգացման համազգային ճիգերին:

Բոլոր ազգերն էլ մշտնջենական շարժման մէջ են՝ համամարդկային արժէքների, արդարութեան եւ ազատութեան իրականացման ուղղութեամբ: Շատ ազգերի մէջ դեմոկրատական սոցիալիզմի, սոցիալ-դեմոկրատիայի եւ լեյբորիզմի գաղափարներն աւանդաբար խորհրդանշել են այդ համամարդկային արժէքները: Իսկ դրանց իրականացման ճանապարհի մաքառումները եւ դրանց արդիւնքում ձեռք բերուած յաղթանակները, որպէս կանոն, թողել են օրէնսդրական եւ գործադրական իրենց անջնջելի հետքերը այդ ազգերի պետական կեանքում:

Ի տարբերութիւն միւսների, նշուած գաղափարները կրող հոսանքներն իրենց յարատեւ պայքարի փորձառութիւնը, սովորաբար, կուտակել եւ ի մի են բերել միջազգային մակարդակում՝ Սոցիալիստական ինտերնացիոնալում: Այսպիսով նրանք տասնիններորդ դարից սկսեալ ձգտել են, մտքերի լայն փոխանակմամբ, գաղափարակցական հողի վրայ սատարել միմեանց:

Ի թիւս գաղափարական այլ առանձնայատկութիւնների, միջազգային նման ընկերակցութեան շնորհիւ է նաեւ, որ այսօր սոցիալիստական գաղափարների ճշմարիտ կրողները, յաճախ, պետական ընտրութիւնների սոսկական արդիւնքներից առաւել մեծ կշռով ու ներկայացուածութեամբ են հանդէս գալիս իրենց երկրների պետական համակարգերում:

ՀՅ Դաշնակցութիւնը որպէս Սոցինտերնի լիիրաւ անդամ, հաւատարիմ իր գաղափարական արժէքներին եւ աւանդոյթներին, ձգտում է միւս ազգերի սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական եւ լեյբորիստական հոսանքների փորձը ներդնել սեփական պլատֆորմային մշակումների մէջ եւ գործունէութեան իր «Ուղենիշերը» բիւրեղացնել նաեւ գաղափարակցական փորձագիտութեան ճանապարհով:

«Ի՞նչ շարունակություն կունենա գործընթացը»

«Դրօշակի» հարցերին պատասխանում է ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի գրասենեակի և քաղաքական հարցերի պատասխանատու ընկ. Կիրօ Մանոյեանը

«Դրօշակ» - Վերջերս, 2010 թ. յունուարի 28-29-ին, մասնակցեցիք Թեհրանի Հայկական Հարցերի Ուսումնասիրութեան Կենտրոնի կազմակերպած՝ «Հայ Դատն այսօր» 7-րդ խորհրդաժողովին, որի քննարկման նիւթն էր՝ «Հայ-թուրքական յարաբերութիւնները վերջին իրադարձութիւնների լոյսի ներքոյ»: Ըստ Ձեզ ո՞րն է այս խորհրդաժողովի քաղաքական նշանակութիւնը: Ինչպէ՞ս կը բնութագրէք խորհրդաժողովում արծարծուած հիմնական մտքերն ու մտահոգութիւնները:

Կ. Մ. - Հայ Դատի Թեհրանի յանձնախմբի՝ ՀՈՒՍԿ-ի կողմից կազմակերպուած «Հայ Դատն այսօր» ամենամեայ խորհրդաժողովների գլխաւոր յատկանիշներից մէկն այն է, որ այնտեղ արծարծուել եւ արծարծւում են այնպիսի խնդիրներ, հիմնականում ներկայացւում են այնպիսի զեկոյցներ, որոնք ինչ որ չափով նպաստում են այդ խնդիրների արծարծմանը հայկական շրջանակներում: Խորհրդաժողովներին մասնակցում են Թեհրանից եւ Իրանի հայկական միւս կենտրոններից՝ Ջուղայից ու Թաւրիզից ազգային-եկեղեցական մարմինների ներկայացուցիչներ, մտաւորականներ ու հասարակական գործիչներ, երիտասարդներ: Բայց խորհրդաժողովների ազդեցութիւնը չի սահմա-

նափակում այս շրջանակով, որովհետեւ զեկոյցները հրապարակում են եւ տարածում նաեւ Իրանից դուրս:

Այս տարուայ խորհրդաժողովի քաղաքական նշանակութիւնը այն է, որ կայացաւ Հայաստան-Թուրքիա բանակցութիւնների մէկ կարեւոր հանգրուանին, երբ գործընթացի շարունակութիւնը կարելի է ասել կասկածի տակ է: Զեկոյցներում, մասնակիցների հարցերում եւ կարծիքներում, միշտ առկա էր այդ հարցականը. ի՞նչ շարունակութիւն կունենայ գործընթացը:

«Դրօշակ» - Թեհրանի «Ալիֆից» տեղեկացանք, որ խորհրդաժողովում զեկուցել են նաեւ Իրանի պետական եւ գիտական շրջանակների ներկայացուցիչներ: Յատկանշական ինչպիսի՞ կէտեր էին պարունակում տուեալ զեկոյցները: Հնարաւո՞ր է արդեօք խորհրդաժողովում արծարծուած մտքերից հետեւութիւններ անել հայ-թուրքական յարաբերութիւնների հանդէպ Իրանի պետական դիրքորոշման մասին:

Կ. Մ. - Այս խորհրդաժողովների միւս իւրայատկութիւններից մէկն էլ այն է, որ վերջին 2-3 խորհրդաժողովներին, առաջին նիստերին որպէս զեկուցաբեր մասնակցում են նաեւ Իրանի պետական եւ գիտական շրջանակների ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ ՀՀ դեսպանը: Նրանք ներկայացնում են զեկոյցներ խորհրդաժողովի գլխաւոր նիւթի մասին, մասնակցում են քննարկումներին: Հայաստանից գնացածներս, լեզուի չիմացութեան պատճառով, չմասնակցեցինք խորհրդաժողովի առաջին օրուայ նիստին, որն ի դէպ ունեցել էր աւելի մեծ լսարան, քան յաջորդ օրուայ նիստը, որովհետեւ ներկայ էին եղել նաեւ շուրջ 40-50 ներկայացուցիչներ իրանական մի շարք վերլուծական կենտրոններից ու համալսարաններից, ինչպէս նաեւ անհատ մտաւորականներ: Կազմակերպիչները մտածում են, որ յառաջիկայում, անհրաժեշտ կարգադրութիւններն անեն, որպէսզի հնարաւոր լինի Հայաստանից կամ արտասահմանից պարսկերէն չիմացող զեկուցաբերների մասնակցութիւնը խորհրդաժողովի պարսկերէն բաժնում, որտեղ հնարաւորութիւն կը ստեղծուի նաեւ հասարակական երկխօսութեան:

Տեղեկացանք, որ այս խորհրդաժողովի առաջին օրուայ զեկոյցները հիմնականում կենտրոնացել են փան-թուրանիզմի եւ փան-ազերիզմի վրայ եւ անդրադարձել են տարածաշրջանի կայունութեան վրայ այդ քաղաքական գծերի բացասական ազդեցութեանը: Նաեւ մի շարք զեկուցաբերներ անդրադարձել են ուղղակի Հայաստան-Թուրքիա բանակցութիւններին, եւ ներկայացրել իրենց տեսակէտները գործընթացի մասին: Կարծում եմ, յատկապէս այն զեկուցաբերներն, ովքեր այսօր ունեն պետական պաշտօններ, իրենց զեկոյցներով եթէ ուղղակի Իրանի պետական պաշտօնական դիրքորոշումը չէին ներկայացրել, վստահօրէն՝ առնուազն այդ դիրքորոշմանը հակառակ տեսակէտ չէին յայտնել: Այդ ելոյթներում առնուազն հարցականներ են հնչել, թէ արդեօ՞ք Հայաստանի իշխանութիւնները Հայաստան-Թուրքիա այս բանակցութիւններում լիարժէք պաշտպանել են հայութեան ու Հայաստանի Հանրապետութեան ազգային-պետական շահերը:

«Դրօշակ» - Թեհրանի «Հայկական Հարցերի Ուսումնասիրութեան Կենտրոն» (ՀՈՒՄԿ) հասատութիւնը, փաստօրէն, կատարում է Հայ Դատի յանձնախմբային եւ գրասենեակային ֆունկցիաները՝ Իրանի Իսլամական Հանրապետութեան մէջ: Հետաքրքիր է իմանալ Ձեր տպաւորութիւնները այդ հաստատութեան գործունէութեան վերաբերեալ:

Կ. Մ. - ՀՈՒՄԿ-ը եւ ընդհանրապէս Իրանի հայութեան համայնքային միւս կառոյցները, բաւական հետաքրքիր դրուածք ունեն, որը ինչոր չափով տարբերւում է այլ երկրներում հայ համայնքների կառուցուածքից, գործունէութեան ոճից: Անշուշտ սրա գլխաւոր պատճառներից մէկն է Իրանի Իսլամական Հանրապետութեան պետական-քաղաքական պայմանները, բայց նաեւ՝ Իրանի հայութեան աւելի քան 400-ամեայ անցեալ ունենալու եւ երկրում լիիրաւ քաղաքացի զգալու փաստը: Եթէ համեմատենք ՀՈՒՄԿ-ը մեր այլ համայնքներում գործող Հայ Դատի յանձնախմբերի ու գրասենեակների հետ, նախ պիտի ընդգծենք կառուցուածքային-կազմակերպական տարբերութիւնը: Քաղաքական, գաղափարական նոյն հայեացքների ու սկզբունքների վրայ հիմնուած, ՀՈՒՄԿ-ը անդամների լայն շրջանակով, մի քանի հարիւր հոգի հաշուող կառոյց է, իր կենտրոնատեղիով, որտեղ գործում են գրադարանը, ֆիլմադարանը, վարչական ու այլ գրասենեակներն ու նիստերի դահլիճը: Իր վարչութեամբ ու ենթայանձնախմբերով, իր կայքէջով (http://hoosk.net/) եւ մանաւանդ իր Պայման (http://www.paymanonline.com/) պարբերէն գիտական-վերլուծական եռամսեայ հանդէսով իսկապէս հսկայական աշխատանք է տանում թէ՛ հայ համայնքի ներսում եւ թէ՛ համայնքից դուրս՝ իրանական քաղաքական, վերլուծական, համլսարանական ու մտաւորական շրջանակներին հասնելով: ՀՈՒՄԿ-ի գործունէութեան մէջ օրինակելի շատ քայլեր կան, որոնք, համոզուած եմ, կարելի է կիրառել թէ՛ Արեւմուտքում եւ թէ՛ Մերձաւոր Արեւելքում ու Ռուսաստանում:

«Դրօշակ» - Ինչպէ՞ս էք գնահատում ՀՀ դեսպանութեան մօտեցումը իրանահայ համայնքում կազմակերպուած նմանօրինակ քաղաքական միջոցառումների նկատմամբ:

Կ. Մ. - Անցած վեց տարիներին մասնակցելով ՀՈՒՄԿ-ի ամենամեայ «Հայ Դատն այսօր»

խորհրդաժողովներին, նկատել եմ մի շատ կարեւոր երեւոյթ՝ Թեհրանում Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան ներկայացուցիչների մասնակցութիւնը խորհրդաժողովի ամբողջ ընթացքին: Յաճախ, առնուազն որոշ ժամանակով, նաեւ ներկայ է լինում դեսպանն ինքը, անձամբ, եւ սա՝ երբ անցնող տարիներին արդէն երեք իրարայաջորդ դեսպան ենք ունեցել Թեհրանում: Կարծում եմ՝ սրա մէջ զարմանալի ոչինչ կայ, բայց ուսանելի՝ անկասկած: Դեսպանատան այս հարազատի վերաբերմունքը ՀՈՒՍԿ-ի, կ'ասէի՝ ամբողջ համայնքի նկատմամբ, պատահական չէ. դա պայմանաւորուած է նախ այն փաստով, որ Իրանը Հայաստանի հարեւաններից մէկն է. առաւել՝ համայնքը Իրանի Իսլամական Հանրապետութիւնում իսկապէս ազդեցիկ է, միաժամանակ՝ համայնքը ինքը հոգատար է ՀՀ դեսպանատան նկատմամբ, իսկ ՀՈՒՍԿ-ը մշտապէս գործակցում է դեսպանատան հետ, յատկապէս երբ դեսպանատունը կազմակերպում է միջոցառումներ՝ ուղղուած իրանական եւ օտար դիւանագիտական շրջանակների համար: Պարզ է, որ ՀՀ պաշտօնական կեցուածքներին չհամապատասխանող, երբեմն նոյնիսկ քննադատող տեսակէտներ են ներկայացուում տարբեր զեկուցաբերների կողմից, բայց ՀՀ դեսպանը կամ դեսպանատան ներկայացուցիչը հանգիստ լսելուց յետոյ այդ բոլորը, հնարաւորութիւն է ստանում պատասխանելու այդ ամբողջին, տալու ՀՀ իշխանութիւնների պաշտօնական տեսակէտները. եւ այս վերաբերում է ոչ միայն այս տարի քննարկուած թեմային, այլ՝ առհասարակ:

«Դրօշակ» - Հետաքրքրուողները ի՞նչ կերպ կարող են ծանօթանալ խորհրդակցութեան նիւթերին:

Կ. Մ. - Վերջին տարիներին ՀՈՒՍԿ-ը առանձին գրքոյկով տպում է խորհրդաժողովների զեկոյցները ամբողջութեամբ: Ստանալու համար պէտք է դիմել ՀՈՒՍԿ-ին: Իսկ մինչեւ գրքի տեսք ստանալը, զեկոյցները լոյս են տեսնում Իրանում հայերէն միակ օրաթերթում՝ «Ալիք»-ում (http://www.alikonline.com/), որտեղից եւս կարելի ծանօթանալ նիւթերին:

«Դրօշակ» - Մի երկու խօսք Իրանի եւ իրանահայ համայնքի մասին:

Կ. Մ. - Իրանը ոչ միայն մեր չորս հարեւաններից մէկն է, այլ մէկը այն երկուսից, ում հետ Հայաստանն ունի սերտ յարաբերութիւններ: Մենք շահագրգռուած ենք Իրանի զարգացմամբ ու տարածքային ամբողջականութեամբ, եւ անհանգստանում ենք, երբ Իրանի դէմ ռազմական գործողութիւնների խօսք է գնում: Նոյնը կարելի է ասել Վրաստանի մասին, որովհետեւ Իրանն ու Վրաստանը մեր այն հարեւաններն են, որոնց միջոցով պահպանւում է մեր երկրի արտաքին ցամաքային կապը: Առաւել՝ Իրանը մեր այն միակ հարեւանն է, որտեղ պետութիւնը ոչ միայն չի քանդում կամ դիմախեղում մեր մշակութային ու կրօնական կոթողները, այլ ընդհակառակը՝ պետական միջոցներով հոգում է նրանց մասին, հպարտանում նրանցով՝ որպէս երկրի հարստութեան մէկ մասը: Միաժամանակ, հակառակ բազմաթիւ տնտեսական ու ուժանիւթի բնագաւառի ծրագրերին ու համագործակցութեան, պարզ է, որ Իրան-Հայաստան տնտեսական կապերը չեն զարգացել այնքան, ինչքան հնարաւոր է. նկատի ունեմ յատկապէս Հայաստանից արտահանումները դէպի Իրան, ինչում, պիտի խոստովանել, իր մեղքի բաժինն ունի նաեւ իրանական կողմը:

Ինչ վերաբերում է իրանահայ համայնքին, անկախ նրա պատմական անցեալից ու աւանդից, այսօր եւս մեծ է նրա դերակատարութիւնը յատկապէս Հայաստան-Իրան եւ հայ-իրանական յարաբերութիւններում: Իրանում հայ համայնքի զարգացումը բխում է նաեւ Հայաստանի շահերից:

«Դրօշակ» - Շնորհակալութիւն:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ

Անդրանիկ Թևանյան

(Այս զեկուցումը հնչել է Թեհրանում կայացած «Հայ դատն այսօր» 7-րդ խորհրդաժողովում)

Իշխանություններն իրենց պաշտոնավարումն արտաքին քաղաքական ոլորտում սկսեցին «ֆուտբոլային» նըշանաբանով, իսկ ավարտում են «Չի սխալվում նա, ով ոչինչ չի անում» ինքնապահովագրող և բավական խոցելի բանաձևից կառչած: Իսկ տիտղոսային ընդդիմությունը անցած տարին սկսեց «Մաքրելու ենք» կարգախոսով, իսկ ավարտեց աչքը ջուր կտրած սպասելով Արցախի հարցում արմագեդոնային զարգացումներին ու Եղիազար Այնթապցու «սրտաճմլիկ» պատմությամբ:

Ցանկացած գործունեություն գնահատվում է արդյունքներով: Իսկ ի՞նչ արդյունքներ մենք ստացանք Հայաստանի համար կարևորագույն նշանակություն ունեցող արտաքին քաղաքականության ոլորտում: Դիտարկենք իշխանության քայլերի «պլյուսներն» ու «մինուսները», իսկ հետո կանդրադառնանք նաև Տեր-Պետրոսյանի գլխավորած ուժին, որն առայժմ ընկալվում է որպես հիմնական ընդդիմադիր ուժ:

«Ֆուտբոլային» դիվանագիտության մեկնարկից առաջ պատկերը հետևյալն էր.

1. Ամբողջ աշխարհով Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը լայն թափ էր հավաքել: Թուրքերն այդ ամենը որակում էին որպես «Հայկական ցունամի»: Թուրքիայի հասարակական և քաղաքական շրջանակներն արդեն սկսել էին քննարկել Ցեղասպանության հետ կապված խնդիրները՝ հասկանալով, որ հարցից խուսափելն այլևս անհնար է: Ի վերջո, Թուրքիայում իշխանության եկած իսլամիստական ուժերը որդեգրեցին «զրո խնդիրներ հարևանների հետ» հայեցակարգը, որը նախատեսում էր նաև երկխոսություն հայերի հետ: Պատահական չէ, որ սկսվել էին գաղտնի բանակցություններ պաշտոնական Երևանի հետ: Գաղտնիությունը ձեռնտու էր Հայաստանին, քանի որ գործընթացի հրապարակայնացման փաստն անգամ հնարավորություն էր տալիս թուրքերին ձգել բանակցությունները և մաշեցնել Հայկական հարցը՝ այն շահարկելով և ոչ մի էական երկխոսություն չվարելով, իսկ Ցեղասպանության ճանաչումը՝ կանգնեցնել, ինչին մենք այսօր ականատես

ենք լինում, նրանց չէր հաջողվում մինչև «ֆուտբոլը», և նրանք ընդառաջ ժեստեր էին անում:

Բանն այն է, որ Թուրքիան խնդիր ունի ընդլայնելու իր ազդեցությունը Կովկասում, և մեր հարևանները հասկանում են, որ առանց Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման չեն կարող լուրջ հաջողություն գրանցել եվրոինտեգրացիայի, ինչպես նաև մեր տարածաշրջանում իրենց դերի փոփոխության առումով: Ահա այդ հանգամանքներից ելնելով՝ Թուրքիան ճանապարհներ էր փընտրում հայերի հետ խնդիրները լուծելու: Ճիշտ է, Թուրքիայում միակամություն չկար հայկական, քրդական և այլ կնճռոտ հարցերում (ազգայնական ուժերն ու զինվորականությունը կտրուկ դեմ են իսլամիստների գծին), սակայն փաստն այն էր, որ Թուրքիայի քաղաքական մեծամասնությունը անհեռանկար էր համարում մասնավորապես Հայաստանի հետ փակ սահման ունենալն ու դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը: Թուրքիայում նկատվող փոփոխությունների մթնոլորտի հետևանքն էր նաև Օրհան Փամուկի և մյուսների ի հայտ գալը, Հրանտ Դինքի շուրջ ստեղծված իրավիճակը և այլն:

Հայոց ցեղասպանության հարցում թուրքական քաղաքական վերնախավը միայն մեկ ընդհանուր տագնապ ուներ, ի՞նչ է հետևելու Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, և արդյոք հայերն ունե՞ն հողային պահանջներ, թե՞ ոչ: Սա «սևրաֆոբիայի» յուրօրինակ դրսևորում է, որ թուրքերի մեջ ձևավորվել է Սևրի պայմանագրի կնքման հետևանքով:

Նկատենք, որ թուրքերին մտահոգող վերը նշված հարցերի միասնական և հստակ պատասխան չունի նաև հայկական կողմը, և դա մեր պետական կառավարման համակարգի լրջագույն բացերից է:

Այս հարցում մեզանում կան ծայրահեղ մոտեցումներ: Կան ուժեր, որոնք Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը համարում են օրակարգային: Սակայն ունենք նաև ուժեր, որոնք Ցեղասպանության ճանաչման հարցը դուրս են դնում ՀՀ արտաքին քաղաքական օրակարգից: Ասում են՝ թող Սփյուռքը զբաղվի դրանով: Նրանց պատասխանենք, որ հրե՛ն Սերժ Սարգսյանը փաստացի հանել է Ցեղասպանության հարցը: Եվ ի՞նչ: Սփյուռքը կարողանո՞ւմ է արդյունքի հասնել: Իհարկե ոչ: Եվ չի կարողանալու, քանի որ միջազգային իրավունքում Սփյուռքը սուբյեկտ չէ: Ցեղասպանության դատապարտման պահանջատերը նախ և առաջ Հայաստանի Հանրապետությունը պետք է լինի: Սփյուռքը մեծապես Ցեղասպանության հետևանքն է և կարող է օժանդակել ՀՀ-ին, բայց միայն այն դեպքում, երբ մենք պետականորեն հետապնդենք այդ հարցը:

Ցեղասպանության ճանաչումը մեր օրակարգից դուրս տեսնող ուժերն իրականում ճողոպրում են ազգային խնդիրներից: Դա պարզ դասալքություն է: Փախուստ: Դա նույնն է, որ մեկի երեխային կամ մորը սպանեն, իսկ սպանվածի ծնողը կամ զավակը հայտարարի, թե մարդասպանին պատասխանատվության ենթարկելու հարցը չի մտնում իր օրակարգի մեջ և թող այլ երկրների քաղաքացիներ հանդիսացող հարազատները զբաղվեն այդ խնդրով:

Հարց եմ տալիս. այդ ինչպե՞ս է, որ ՀԱԿ-ն արդարացիորեն հետամուտ է մարտի 1-ի 10 զոհերի մեղավորների բացահայտմանը և նրանց պատժելուն և այդ հարցը դարձրել է իր օրակարգային թիվ 1 խնդիրը, պետությունից էլ պահանջում է ազգային հերոսի կոչում տալ սպանվածներին, բայց միլիոն ու կես զոհերի հարցը դուրս է դնում պետության օրակարգից: Ընդ որում, 1,5 միլիոնը զոհ է գնացել թուրքական ֆաշիզմին, որը համամարդկային դատապարտման խնդիր է, ինչպես որ դատապարտելի է թեկուզև մեկ մարդու կյանքից զրկելու փաստը: Մի խոսքով, Ցեղասպանության հարցը պետության օրակարգից հանելը որևէ քննադատության չի դիմանում: Պատկերացնո՞ւմ եք, որ Իսրայելում գտնվի մի ուժ, որը հայտարարի, թե Հոլոքոստը պետք է դնել մի կողմ: Այդ ուժն անմիջապես կլիկվիդացնեն: Ինչևէ:

2. Առաջին կետում նշված գործընթացներով պայմանավորված՝ Թուրքիայի արտաքին քաղաքական օրակարգից

գրեթե դուրս էր մնացել Արցախի հարցը: Կենտրոնացած լինելով Ցեղասպանության հետ կապված միջազգային ահռելի ճնշումներին դիմագրավելու խնդիրների վրա՝ թուրքական կողմը տարանջատել էր հայ-թուրքական հարաբերությունները հայ-ադրբեջանականից:

Ինչպես հայտնի է, 1993-ին տեղի ունեցած Քարվաճառի (նախկին Քելբաջար) ազատագրման գործողությունից հետո Թուրքիան փակեց սահմանները, և դրանով նպատակ ուներ ծնկի բերել Հայաստանին: Դա նրանց չհաջողվեց: Ավելին, տարիների ընթացքում Թուրքիան հասկացավ, որ Հայաստանն առանց այդ սահմանի էլ կարող է լուծել իր տնտեսական խնդիրները, և եթե իրենք ցանկանում են բարձրացնել Թուրքիայի կշիռը, ապա կարիք չկա Արցախի հարցի հետ շաղկապել հայ-թուրքական երկխոսության հարցը: Դա էր պատճառը, որ մինչև «ֆուտբոլային» դիվանագիտությունը Թուրքիան ծպտուն չէր հանում Արցախի մասով, և նույնիսկ Բաքու-Ջեյհան նավթային նախագծի շահագործումը չավելացրեց թուրքական կողմի ցանկությունը՝ հօգուտ Ադրբեջանի բացահայտ և ագրեսիվ կերպով միջամտելու Արցախի հարցին:

Թուրքական քաղաքական և փորձագիտական շրջանակներն արդեն եկել էին այն եզրակացության, որ Արցախի հարցը տեսանելի ապագայում լուծում չունի, ուստի անհամաստ է հարևան Հայաստանի հետ զրոյական հարաբերությունների պահպանումը:

Այդպիսով, թուրքական շրջանակները կամաց-կամաց տարանջատում էին Հայաստանի հետ հարաբերության հարցն Արցախից, և հետագա զարգացումները (դա կարող էր տարիներ տևել, բայց դրա այլընտրանքն այն է, ինչը հիմա տեսնում ենք) բերելու էին նրան, որ Թուրքիա՛ն նախաձեռնող դառնար Հայաստանի մասով ճիշտ նույն սցենարով, ինչը տեղի ունեցավ Իսրայելի և Եգիպտոսի հարաբերություններում:

Հիշեցնեմ, որ Եգիպտոսը, տեսնելով, որ Իսրայելը ծնկի չի գալիս արաբա-իսրայելական հակամարտության արդյունքում և իր ազգային շահերը մինչև վերջ պահում է, որոշում կայացրեց տարանջատվել ընդհանուր ճակատից և սեպարատ կարգով գնաց Իսրայելի հետ իր հարաբերությունների կարգավորմանը: Հատկանշական է, որ Եգիպտոսի ղեկավար Անվար Սադա՛թը նախաձեռնողական դարձավ, այլ ոչ թե իսրայելական կողմը: Եվ դա հասկանալի էր, քանի որ արաբա-իսրայելական ասիմետրիկ հակամարտության պարագայում Իսրայելի կողմից ցանկացած նախաձեռնողականություն հավասարազոր կլիներ ինքնասպանության: Մինչև Ա. Սադաթի նախաձեռնող դառնալն, ի դեպ, տեղի էր ունեցել արաբա- իսրայելական չորս պատերազմ, որտեղ Իսրայելը պարտադրեց նույն եգիպտացիներին տարանջատվել իսրայելա- պաղեստինյան հարաբերություններից, և այսօր Եգիպտոսն ու Իսրայելն ունեն նորմալ հարաբերություններ:

Հիմա եկեք տեսնենք, թե ի՞նչ ունենք մենք «ֆուտբոլային» դիվանագիտության մեկնարկից հետո:

1. Սերժ Սարգսյանն այնքան էր ուզում օրիգինալ երևալ և իր իշխանությունն ամրապնդել, որ Գյուլին Երևան հրավիրելու հետ մեկտեղ «էն գլխից» բոնուս առաջարկեց թուրքերին՝ հայտարարելով, որ եթե իր հրավերքն ընդունվի, ապա հայկական կողմը կհամաձայնի Ցեղասպանության ուսումնասիրման պատմաբանների հանձնաժողովի թուրքական առաջարկին: Այդ պահից սկսած մեր «նախաձեռնող» նախագահը կորցրեց գործընթացների վրա իր ազդեցությունը: Սարգսյանի առաջին ելույթը հետագայում փորձ արվեց սրբագրել, թե իբր պատմաբանների հանձնաժողովի մասով ճիշտ չի հասկացվել նախագահը, բայց դա դեռ ոչինչ:

Սերժ Սարգսյանը հետագայում անհեռատեսություն պետք է ունենար Գյուլի օժանդակությունն Արցախի հարցում դրական գնահատելու մասով: Այդ պահից սկսած դեպքերը զարգացան վատթարագույն սցենարով, քանի որ թուրքերը լեգիտիմ հնարավորություն ստացան քննարկելու Արցախի հարցն ամբողջ աշխարհով մեկ:

Հայ-թուրքական հարաբերությունների հրապարակայնացմամբ՝ Սերժ Սարգսյանին հաջողվեց պառակտում մտցը-

նել հայության տարբեր հատվածների, քաղաքական տարբեր շրջանակների, իշխող կոալիցիայի մեջ, և միևնույն ժամանակ միավորել թուրքական քաղաքական շրջանակներին և թուրք հասարակությանը, որոնք հայկական հարցում պառակտված էին մինչև տրխրահռչակ «ֆուտբոլը»:

Թուրքիայում Սարգսյանի «ֆուտբոլային» քայլը գնահատեցին ոչ թե Հայաստանի կողմից որպես բարի կամքի դրսևորման, այլ թուլության նշան: Այնտեղ արդեն դադարեց բանավեճը հայկական թեմայով: Հայկական հարցում ամենահանդուրժողական իսլամիստներն ու Թուրքիայի լիբերալ շրջանակները, ովքեր հայերի հանդեպ մեղմ գծի կողմնակիցներ էին, դարձան «բազե»: Ասել է թե՝ Թուրքիայում դրական շոկ ապրեցին Սերժ Սարգսյանի «նախաձեռնողականությունից», և անցան գրոհի. այդպիսի նվերից չէին հրաժարվի անգամ օրհանփամուկները, ովքեր նույնպես վերածվեցին հայերի հանդեպ կոշտ գծի կողմնակիցների: Պարզ է՝ եթե դիմացինդ մուրացկանի քաղաքականություն է վարում, ապա ինչո՞ւ պետք է նրա հետ հավասարը հավասարի պես խոսել ու հարգել:

Պատմաբանների հանձնաժողովի թեմայի արծարծումն արդեն շանս տվեց թուրքերին փաստացի դադարեցնել Հայոց ցեղասպանության հետ կապված ցունամին և Հայաստանի համար առաջացնել «թուրքական ցունամի», որի «պրեզենտացիան» տեղի ունեցավ Մեծ եղեռնի զոհերի հիշատակի նախօրեին, իսկ փաստաթղթավորումն այս տարվա հոկտեմբերի 10-ին՝ ցյուրիխյան թշաքաշքշոցներով համեմված:

Հիմա Ցեղասպանության ճանաչման գործընթացը կանգ է առել: Ակնհայտ է, որ աշխարհի ոչ մի երկիր չի ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, քանի դեռ Հայաստանում կա «նախաձեռնող» և «ֆուտբոլասեր» իշխանություն: Բոլորն էլ հղում են անելու հայ-թուրքական ստորագրված արձանագրություններին ու լվանալու են իրենց ձեռքերը: Իսկ Ցեղասպանության ճանաչումը մեզ համար միայն զգացմունքային հարց չէ, ինչպես որ սխալմամբ կարծում են ոմանք: Դա մեր անվտանգության հարցն է: Քանի դեռ Թուրքիան չի ճանաչել (իսկ դա հնարավոր է միայն միջազգային ճնշման և Հայաստանի կարծր դիրքորոշման միջոցով) Հայոց ցեղասպանությունը, այդ պետությունը պոտենցիալ վտանգ է ներկայացնում մեզ համար՝ ուզենք, թե չուզենք: Սա՛ է իրողությունը:

Այսպիսով, «ֆուտբոլային» դիվանագիտությունը հնարավորություն տվեց թուրքերին ստանալ իրենց հետաքրքրող 2 նախապայմանները՝ կապված Ցեղասպանության և սահմանների հետ: Դրանից հետո թուրքերի ախորժակն ավելի բացվեց, և Սերժ Սարգսյանի «թեթև ձեռքով» Թուրքիան ակտիվացավ Արցախի հարցում:

2. «Նախաձեռնողականության» «օգուտն» այն էր, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը միջազգային օրակարգային հարցի մակարդակից իջեցվեց հայ-թուրքական միջպետական վիճելի հարցի մակարդակի: Փոխարենն Արցախի հարցը տարածաշրջանային սառեցված հակամարտության մակարդակից բարձրացավ միջազգային օրակարգային թիվ մեկ խնդիրների մակարդակի:

Մեր ընդդիմախոսներն այս պնդումներին հակադարձում են, թե Սերժ Սարգսյանի իշխանությունը չի հանել Հայոց ցեղասպանության հարցն արտաքին քաղաքական օրակարգից՝ վկայակոչելով ՀՀ նախագահի առիթ-անառիթ բարձրաձայնումներն այդ թեմայով: Բնականաբար, որևէ մեկը չի պնդում, թե նախագահն ուրացել է Ցեղասպանությունը (չնայած կան նաև այդպիսի տեսակետ ունեցողներ), բայց ստորագրելով հայ-թուրքական արձանագրությունները, որով նախատեսվում է պատմական հարթության երկխոսություն, Ցեղասպանության հարցը դարձել է միջպետական բնույթի հավերժ վեճի առարկա. թուրքերն ասելու են՝ չի եղել, իսկ մենք՝ հակառակը: Այլ պետություններն արդեն չեն ուզենա խառնվել այդ վեճին և հարմար առիթ կունենան խուսափելու դատապարտումից, քանի որ Թուրքիան ավելի ազդեցիկ երկիր է, քան մենք, բայց նույն այդ ուժերը ֆորմալ տեսակետից չեն կարող չդատապարտել Հայոց ցեղասպանու-

թյունը, որը համամարդկային հարց է: Այլ երկրների դատապարտումը մեզ անհրաժեշտ է ոչ այնքան մեր հոգեկան բավարարվածությունն ապահովելու, որքան Թուրքիայի հետ մեր ասիմետրիկ վիճակը շրջելու և, ի վերջո, Թուրքիայի՛ն Ցեղասպանությունը ճանաչել տալու համար:

Այժմ մենք ականատեսն ենք թուրքական ճնշումների, որոնք արտահայտվում են ՀՀ անվտանգությանն սպառնացող Արցախի շուրջ տեղի ունեցող ոչ հայանպաստ զարգացումներով: Թուրքիան հիմա բոլորի հետ քննարկում է Արցախի հարցը և պահանջում միակողմանի զիջումներ հայկական կողմից՝ փաստացի կապիտուլյացիա: Այս ամենը չկար «ֆուտբոլից» առաջ: Հիմա կա:

Փաստորեն, «նախաձեռնողականության» հաշվեկշիռը Հայաստանի համար բացասական է: Երբ այս ամենի մասին նախազգուշացվում էր և կոչ էր արվում զերծ մնալ սխալ քայլերից, մեզ ասում էին, թե դուք դե՞մ եք բաց սահմաններին: Ո՛չ, հարգելի՝ «ֆուտբոլասերներ», դեմ չենք: Ընդհակառակը: Հարցը գնի ու բաց սահմաններին հասնելու տեխնոլոգիայի մեջ է: Շտապողականությունն այստեղ ամենավատ «գործընկերն» է: Իսկ այսպիսի շուտափույթ «նախաձեռնողականության» հետևանքով այդ սահմաններն է՛լ ավելի ամուր են փակվելու, հայ-թուրքական սառեցված վիճակը վատանալու է, և միջպետական լարվածությունը մեծանալու է (Էրդողանն ակնարկել է այդ մասին՝ հիշեցնելով, որ Թուրքիայում անլեգալ 50 հազար հայ առևտրական կա, ու, բացի ցամաքայինից, կա նաև օդային սահմանի հարց), իսկ Արցախի մասով վտանգավոր զարգացումներ են լինելու: Ահա այդպիսին էր «նախաձեռնողականության» բուն էությունը:

«Հեղափոխական» այն օրերին, երբ Հայաստանում «Թուրքիայի օրեր» էին հայտարարված («մտավորականներն» ու «քաղաքական» գործիչներն անգամ չգիտեին, թե ո՞ւմ քծնեն՝ Սերժի՞ն, թե՞ Գյուլին. ամեն ինչ իրար էր խառնվել), մեզ ասում էին, թե ՀՀ նախագահը խիզախ գործիչ է: Երբ ասում էինք, թե այդ «խիզախությունը», մեղմ ասած, անհեռատեսություն և դիվանագիտական դիլետանտիզմ է, իշխանության հաստիքային ու արտահաստիքային պնակալեզները հակադարձում էին, թե Սերժ Սարգսյանին պարզապես նախանձում են «Լևոն Տեր-Պետրոսյանն ուզում էր, բայց չկարողացավ, Ռոբերտ Քոչարյանը չէր ուզում, իսկ ՀՀ երրորդ նախագահն ուզում և կարողանում է» թեմաներով:

Այժմ, երբ նույնիսկ Սերժ Սարգսյանն է հասկացել իր սխալը, մի անհեթեթ պատասխան են գտել, թե՝ «Չի սխալվում նա, ով ոչինչ չի անում»: Բայց, ներողություն, դա նույնն է, որ մարդիկ բարձրահարկ շենքի 15-րդ հարկում փակված լինեն բնակարանում ու երբ որոշեն հայտնվել դրսում՝ ճգտելով հաստատել «բաց սահման» բնակարանի և դրսի միջև, նրանցից «ամենահամաստունն» առաջարկի, թե եկեք դուռը բացելու ուղղությամբ չաշխատենք, այլ անմիջապես թռչենք պատուհանից և շատ կարճ ժամանակահատվածում կհայտնվենք դրսում: Դա կլինի տվյալ առաջարկն անող «լիդերի» ոչ թե խիզախության, այլ հասկանալի է, թե ինչի նշան: Ու երբ մի քանիսը լսեն «խիզախին» ու ցած նետվեն պատուհանից, և պարզվի, որ վայրկյաններ անց մահանալու են, կարելի՞ է արդյոք պատուհանից նետվելու «նախաձեռնողականության» առաջարկ անողին արդարացնել «Չի սխալվում նա, ով ոչինչ չի անում» ձևակերպումով: Իհարկե ոչ: Բա էլ ո՞ւր մնաց բանականությունը և լիդերի՝ անվտանգություն ապահովելու գլխավոր գործառույթը: Բայց չէ՞ որ այժմյան «նախաձեռնող» իշխանությունը մեզ նույն վիճակում է դրել Թուրքիայի մասով, ինչը 15-րդ հարկից ցած նետվելու և «բաց սահմանին» հասնելու «հնարամիտ» առաջարկի պարագայում կլիներ:

Ամփոփենք. հայ-թուրքական «ֆուտբոլային» գործընթացը հիմնովին ձախողվել է, և դա հասկացել են նաև իշխանությունները ու հիմա փորձելու են «հայրենասիրություն» խաղալ և պալատական սազանդարի վերածված՝ «քաղաքագետ-թուրքագետ-վերլուծաբանների» միջոցով շրջանառության մեջ դնել գործընթացի տապալման

քրդական վարկածը, թե՝ բա չեք ասի, Թուրքիայում ֆորս մաժոր եղավ, քրդերի հարցը «մեյդան» ընկավ, ու դրա համար թուրքերը չեն ուզում վավերացնել արձանագրությունները:

Բայց, մեկ է, ինչ էլ անեն՝ չեն կարողանա կոծկել ֆիասկոն, որի վերջակետը կդրվի հաջորդ տարվա ապրիլի 24-ին, երբ Սերժ Սարգսյանի «հույսի տան ներկայացուցիչների» վերածված ամերիկացիները չեն արտաբերի «ցեղասպանություն» բառը, չեն կարողանա ճնշել թուրքերին, որպեսզի նրանք վավերացնեն արձանագրությունները, և, հետևաբար, հայ-թուրքական սահմանը կմնա փակ: Դրա դիմաց մենք կունենանք Արցախի հարցի շուրջ լարվածություն: Եվ եթե հանկարծ Սերժ Սարգսյանը «ֆուտբոլասեր» դառնա նաև Արցախի մասով, ապա 1998 թ.-ի տերպետրոսյանական ճակատագիրը կկրկնվի արդեն իր հետ, բայց մի փոքր այլ տարբերակով:

Միակ դրականը հայ-թուրքական ներկա գործընթացում այն է, որ թուրքերի ու ադրբեջանցիների պարզունակության ու «կացնային» դիվանագիտության շնորհիվ կհաջողվի զերծ մնալ մեզ համար բացասական սցենարներից: Ուզած-չուզած սարգսյանական թիմը պետք է հետ պտտեցնի «ֆուտբոլն» ու որդեգրի կեղծ հայրենասիրական հռետորաբանություն. այլ բան չի մնում: Ճիշտ է ասված, թե հայրենասիրությունն ում վերջին հանգրվանն է: Ոչինչ, դա չարյաց փոքրագույնը կլինի: Իսկ մեծ շտկումները տեղի կունենան հետագայում:

Եվ ամենակարևորը՝ Սերժ Սարգսյանը գործնականում ցույց տվեց, թե ի՞նչ է իրենից ներկայացնում «Սերգո ջանի լավ ապրելու» կործանարար հայեցակարգը: Մեր ժողովուրդը տեսավ, թե իրականում ինչպիսի՛ վտանգներ է իր մեջ պարունակում «շուտափույթ քիրվայության» գաղափարախոսությունը: Գաղափարախոսություն, որի տապանաքարը կդրվի «ֆուտբոլային» ֆիասկոյին զուգընթաց: Սա էլ է այն դրականը, որն ունեցանք «ֆուտբոլի» արդյունքում:

Պետք է հստակեցնել մեկ շատ կարևոր բան. հայ-թուրքական ներկա վտանգավոր զարգացումների հիմնական պատասխանատուն ոչ միայն Սերժ Սարգսյանի իշխանությունն է, այլ նաև բոլոր նրանք, ովքեր տարիներ շարունակ թունավորել են հայաստանյան մթնոլորտն իրենց հանձնողական քարոզով: «Ֆուտբոլի» մայրամուտը նաև ա՛յդ ուժերի մայրամուտն է, և դա զգալով է, որ նրանք, շունչները պահած, անհանգիստ սպասում են: Հավերժ սպասում...

«Ֆուտբոլն» ինքնամոռաց ձևով ողջունած և Նոբելյան մրցանակի հասցեատիրոջ դարդն անող ուժերը հասկանում են, որ Ս. Սարգսյանի տապալումը նաև իրենց է վերաբերելու (նրանց կողմից պատմաբանների հանձնաժողովի կետի մատնանշումն ավելի շուտ ձևական քննադատություն է, քանի որ այդ կետի մասին Սարգսյանը բարձրաձայնել էր գործընթացի ամե-

նասկզբում, և եթե դա այդքան սկզբունքային կետ էր, ապա հետագայում նրա քայլերը ողջունած ուժերը դա չպետք է անեին. չէ՞ որ պարզ էր, որ Գյուլը պատմաբանների հանձնաժողովի սարգսյանական լյապսուսից օգտվելու էր, և ուրեմն փարիսեցիություն է «ֆուտբոլը» ողջունելն ու միևնույն ժամանակ «պատմաբաններին» դեմ արտահայտվելը, քանի որ դրանք ի սկզբանե շաղկապված են եղել Սերժ Սարգսյանի սխալի պատճառով):

Հայ-թուրքականի մասով իշխանությունն ու ՀԱԿ-ն այժմ սիամական երկվորյակների են վերածվել, և յուրաքանչյուրի վիճակը մյուսի վրա անմիջական ազդեցություն է ունենալու:

Տեսակետ կա, թե Սերժ Սարգսյանը «նախաձեռնողական» դարձավ, որպեսզի ներքին լեգիտիմության բացը լրացնի արտաքին լեգիտիմությամբ: Դա ճիշտ, բայց թերի տեսակետ է: 2008-ի խայտառակ ընտրություններից հետո Սերժ Սարգսյանի «ֆուտբոլային» քայլերը ցույց էին տալիս, որ նա ներքին լեգիտիմության դեֆիցիտը փորձում է հաղթահարել նաև իր քաղաքական ընդդիմախոսների հետ երկխոսելու ճանապարհով: Այդ երկխոսությունը պարտադիր չէ, որ Արթուր Բաղդասարյանի տարբերակով լիներ: Սարգսյանն իր գործողությունների զինանոցում ընդգրկեց այն, ինչը խոստանում էր անել Տեր-Պետրոսյանը: Եվ հեռակա երկխոսության այդ առաջարկն ընդունվեց. Լևոն Տեր-Պետրոսյանը ողջունեց Գյուլի գալը, հետաձգեց հանրահավաքը, մեծ հաշվով կողմ արտահայտվեց հայ-թուրքական արձանագրություններին: Ավելին, դրական գնահատեց Արցախի և հայ-թուրքական հարցերի շաղկապումը, ինչը ֆորմալ առումով չէր ընդունում նույնիսկ Սերժ Սարգսյանը՝ բնազդաբար հասկանալով, որ սխալ է հայ-թուրքականն Արցախի հարցին կապելը: Իսկ ամենավերջում առաջին նախագահը հիշեց Եղիազար Այնթապցուն, բայց արդեն ուշ էր, քանի որ Սերժ Սարգսյանի մեջ, հանգամանքների բերումով, «հայրենասիրության» փուլ էր սկսվել, և թերևս Ալիևի օգնությամբ կշարունակվի:

Չգիտեմ, թե որքանո՞վ էր խորը վերլուծված Եղիազար Այնթապցու և էջմիածնական միաբանների վարքագիծը մեր օրերի հետ զուգահեռելու պահը, բայց Տեր-Պետրոսյանն ակամայից դրական գնահատեց Արթուր Բաղդասարյանի ԱԽՔ-ացումը մարտի 1-ից առաջ: Դատե՛ք ինքներդ. Ա. Բաղդասարյանը, հղում անելով Տեր-Պետրոսյանի ասածներին, հիմա կարող է արդարանալ, թե ինքն էլ է էջմիածնական միաբանների պես վարվել և Սերժ Սարգսյանին դիմել է հետևյալ ձևակերպմամբ. «Եղբա՛յր, նախագահ ես ուզում լինել, արի դարձիր, միայն թե ազգի գլխին փորձանք մի՛ բեր ու մի՛ պառակտիր մեր պետությունը»: Մոտավորապես այսպիսի ձևակերպմամբ էին համակերպվել էջմիածնական միաբանները փառամոլ և իշխանատենչ Եղիազար Այնթապցու իշխանության ձգտման հետ և նրան ընդունել որպես Ամենայն հայոց կաթողիկոս: Միաբանների այդ քայլը, Տեր-Պետրոսյանի գնահատմամբ, ազգային մտածողության ամենալայնախոհ ու իմաստուն դրսևորումներից է հայ ժողովրդի ողջ պատմության մեջ: Ստացվում է, որ Արթուր Բաղդասարյանը շարունակում է իմաստուն քայլ անողների ավանդույթը: Եթե հիշում եք, Բաղդասարյանն իր միանալը Սարգսյանին հիմնավորում էր այն բանով, որ եթե ինքը դա չաներ, ապա մարտի 1-ի զոհերն ավելի շատ կլինեին: Այսինքն, Եղիազար Այնթապցուն Արթուրը հիշել էր դեռ այն օրերին և «իմաստուն» քայլ էր կատարել: Նմանատիպ մի «իմաստունության» շրջանակներում տեղի ունեցավ նաև Արտաշես Գեղամյանի՝ միաբանումը Սերժ Սարգսյանի հետ: Այժմ երևի եկել է մյուսների «իմաստունության» պահը:

«ՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ»
(կամ՝ ազատ շուկայի ութոպիան)

Արա Խանմեան
Խաչիկ Տէր Ղուկասեան

Այս յօդուածը հեղինակները պատրաստած էին դեռեւս Հոկտեմբեր 2008ին ի պատասխան Տիգրան Սարգսեանի «Պետութեան վախճանը» յօդուածի («21րդ Դար», 1 (19), 2008, էջ 3-26): Յօդուածը ուղարկուած էր պարբերաթերթին այն համոզումով, որ կը նպաստէ



հրապարակային բանավէճին, սակայն այն այդպէս ալ երբեք լոյս չտեսաւ: Պարբերաթերթի խմբագրութիւնը հեղինակներուն չտեղեկացուց իր դրական կամ ժխտական որոշումին մասին: Այն օրերուն եթէ հրատարակուէր, հաւանաբար քիչ մը աւելի հեշտ կը հասկցուէր թէ ինչո՞ւ եւ ի՞նչ դերակատարութեամբ անհրաժեշտ էր պետութիւնը որպէս հակակշիռ ազատ-շուկայականութեան վտանգաւոր անուրջին: Օրին ծայր առած ֆինանսական համաշխարհային փլուզումը չվերաճեցաւ տնտեսական ճգնաժամի, աւելի ճիշդ՝ այդ ճգնաժամը հետաձգուեցաւ, շնորհիւ պետական միջամտութեան: «Պետութեան վախճան»ին հեղինակը այդ օրերուն յայտարարեց, որ տագնապը Հայաստան չի հասնիր: Ծանօթ է նաեւ, որ Հայաստանի մէջ տնտեսական ճգնաժամը զսպուեցաւ միայն պետութեան միջամտութեամբ եւ երկրի արտաքին պարտքը իր Համընդհանուր Ազգային Արտադրութեան գրեթէ քառասուն տոկոսին հասցնելու հաշւոյն: Այսօր այդ յօդուածը կը հրատարակենք, ոչ այնքան Հայաստանի վարչապետին ուշացած պատասխան մը տալու նախանձախնդրութեամբ, այլ որովհետեւ անոր միտք բանին՝ պետութեան դերին գնահատումն է տնտեսական գործընթացին մէջ: Դեր մը, որ, պարզ է, հեռու է եւ այն ինքնա-

սպանութենէն, որ կամովին պետութիւնը պէտք է կատարէ համաձայն ազատ-շուկայական գաղափարախօսներուն, եւ այն ռէալ դերէն, որ Հայաստանի մէջ անկախութենէն յետոյ սկսած անցումային գործընթացով կազմաւորուած պետութիւնը օրին ստանձնեց եւ կը շարունակէ կիրարկել: Այսինքն՝ ի տարբերութիւն ազատ-շուկայական գաղափարախօսութեան, յօդուածը կը պաշտպանէ պետութեան դերը տնտեսական գործառութեան - հարստութեան ստեղծում եւ վերաբաշխում - մէջ, միաժամանակ սակայն այն կը բացառէ որպէս կուտակուած կապիտալին ու անոր տէր դասակարգին յաճախ մենաշնորհային շահերու երաշխիք ու դիւրացնող ի հեճուկս հանրային սեփականութեան, աշխատաւոր մարդուն եւ հարստութեան արդար վերաբաշխումին:

Karl Polanyi իր դասական The Great Transformation (Boston, MA: Beacon Press, 2001, 317 էջ) գործին մէջ կը վերլուծէ այն, ինչ կը բանաձեւէ որպէս «19րդ դարու քաղաքականութիւն»-ը, որ հարիւր տարուայ խաղաղութիւն պարգեւելէ յետոյ մարդկութեան, փլուզեցաւ Առաջին Համաշխարհային Պատերազմին: Առաջին անգամ 1944 ին լոյս տեսած անգլիացի մտաւորականին այս աշխատասիրութիւնը, որուն ենթախորագիրն է «Մեր ժամանակի քաղաքական եւ տնտեսական ակունքները» («The Political and Economic Origins of Our Time» - թարգմանութիւնը գրութեան հեղինակին) կը նպատակադրէ բացայայտել այդ փլուզման խորքային գործօնները եւ անհրաժեշտ դասերը քաղել ի մտի ունենալով Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքին արդէն ձեւաւորուող նոր աշխարհակարգը:

Polanyi կը հաստատէ թէ 19րդ դարու քաղաքականութիւնը կառուցուած էր չորս հիմնարկութիւններու (institutions) վրայ: Անոնցմէ երկուքը քաղաքական բնոյթի էին, միւս երկուքը՝ տնտեսական: Առաջին հիմնարկութիւնը ուժերու հաւասարակշռութեան համակարգն էր, որ առաջքը առաւ Մեծ Պետութիւններու միջեւ երկարատեւ եւ աւերիչ պատերազմի: Երկրորդը ոսկիի չափանիշն էր (gold standard), որ կը խորհրդանշէր համաշխարհային միակ տնտեսութեան կազմակերպումը: Երրորդը ազատ շուկան էր (self-regulating market)՝ 19րդ դարու նիւթական բարիքներու ստեղծման աղբիւրը: Չորրորդը լիբերալ պետութիւնն էր: Այս չորս գործօններէն Polanyi ամենէն էականը կը նկատէ ազատ շուկայի հիմնարկութիւնը, այն «նորարարութիւնը», որ ծնունդ տուաւ իւրայատուկ քաղաքականութեան մը: «Ոսկիի չափանիշը լոկ փորձ մըն էր ներքին շուկայական համակարգը տարածելու միջազգային դաշտ: Ուժերու հաւասարակշռութեան համակարգը ոսկիի չափանիշին վրայ բարձրացած վերնակառոյց մըն էր, որ մասամբ գործեց այդ չափանիշին ընդմէջէն: Լիբերալ պետութիւնը ազատ շուկայի ստեղծումն էր» (էջ 3):

Կարլ Պոլանյի

The Great Transformation-ին գլխաւոր թէզը կը հաստատէ, թէ ազատ շուկայի գաղափարը ինքնին ուրոյնիա մըն էր, որ չէր կրնար ինքնըստինքեան գոյութիւն ունենալ առանց քանդելու հասարակութեան մարդկային ու բնական էութիւնը: Ազատ շուկայի ենթադրած այդ քանդումին դէմ է, որ հասարակութիւնը միջոցառումներ ձեռք առաւ, եւ, ինչպէս գրքի ամբողջ տեւողութեան Polanyi ցոյց կու տայ, ամբողջ հարիւրամեայ պատմական գործընթաց մը յատկանշուեցաւ այս «կրկնակի շարժումով» (double movement): Մէկ կողմէ ազատ շուկայի տարածումն ու անոր հետեւանքով դարեր ամբողջ գոյութիւն ունեցած հասարակարգերու քանդում, միւս կողմէ հասարակական դիմադրութեան կազմակերպումը ընդդէմ ազատ շուկայի ենթադրած այս քանդումին: Ինչ որ առ աւելի յատկանշական է, սակայն, Polanyi-ի վերլուծումին մէջ՝ լիբերալ պետութեան դերն էր այդ ուրոյնիայի

պահպանման եւ տարածման մէջ: Այսինքն՝ եթէ մէկ կողմէն ազատ շուկայի ութոփիան ծնունդ տուաւ լիբերալ պետութեան, լիբերալ պետութիւնը իր կարգին այդ ութոփիային հաւատաց ու անոր համար գործեց առանց կանխատեսելու, առանց ոչ իսկ ենթադրելու, որ ազատ շուկան ինքզինք կրնար քանդել, ինչպէս պատահեցաւ 1929ին, կամ հասարակական դիմադրութիւնը կրնար առաջնորդել ֆաշիստական թէ կոմունիստական ամբողջատիրութիւններու եւ անոնց ներհակ այլ բնոյթի աղէտներու:

Իր համոզումներով խորապէս հումանիստ Polanyi աշխատասիրութիւնը կ'աւարտէ խորհրդածելով մարդկային ազատութեան ապագայի մասին: Վկայ ըլլալով ազատ շուկայի ութոփիայի հետեւանքով ամբողջ քաղաքակրթութեան մը փլուզման, միաժամանակ, սակայն, հաւատալով մարդ արարածի կարողութեան՝ դասեր քաղելու պատմութենէն, ան կը հետեւի այլ հանրածանօթ հումանիստի մը՝ Robert Owen-ի ընկերվարական համոզումներուն, որոնք մարդ արարածին ազատութիւնը կը դիտեն հասարակութեան ընդմէջէն եւ ոչ թէ անկէ դուրս՝ կրօնական թէ ազատ շուկայական ութոփիաներու մէջ: Ոչ ալ, բնականաբար, ֆաշիստական թէ կոմունիստական հասարակարգերու մէջ, որոնք ազատութեան ժխտումն իսկ են: Այդ ազատ հասարակութիւնը, ինչպէս դեռեւս Երկրորդ Համաշխարհային Պատերազմի համատարած աւերումին մէջ իր գիրքը գրող Polanyi համոզուած էր, պէտք ունի այն ժամանակ արդէն ձեւաւորուող բարեխնամ պետութեան (Wellfare State), որուն մարմնաւորումը կը հանդիսանար օրին ԱՄՆի նախագահ Franklin D. Roosevelt-ի New Deal-ը:

Հակառակ սոցիալիստական իր յանձնառութեան, եւ հակառակ իր թէզի ակնյայտօրէն մարքսեան տրամաբանութեան, Polanyi չի մատնուիր դրամատիրութեան կործանման որեւէ մարգարէութեան աժան փորձութեան: Ընդհակառակը, եթէ իր թէզին տրամաբանութեան հետեւինք, ինչ որ ան միաժամանակ ինչ որ չափով կը կանխագուշակէր եւ կը փափաքէր՝ 19րդ դարու քաղաքականութեան ծնունդ տուած Մեծ Բարեփոխման բնոյթէն տարբեր այլ Մեծ Բարեփոխում մըն էր, այն, որ պիտի հիմնուէր քէյնէզեանական տնտեսագիտութեան, բարեխնամ պետութեան, իր ճակատագրին տէր ակտիւ քաղաքացիական հասարակութեան մը եւ միջազգային համագործակցութեան վրայ:

Այն, ինչ որ 1980ական թուականներէն ի վեր ժողովրդականացած է որպէս համաշխարհայնացում (գլոբալիզացիա), շատ մը զգաստ վերլուծողներ բանաձեւած են որպէս «Երկրորդ Մեծ Բարեփոխում»: Պատմական բոլոր համակարգային փոփոխութիւններուն նման, համաշխարհայնացումն ալ ունէր եւ՛ իր ուղին հարթող քաղաքական գործօնները, եւ՛ անոնց լեգիտիմութեան ձգտող գաղափարախօսական բանաձեւումները: Այս իմաստով, եւ առանց խորացնելու, համաշխարհայնացման գործընթացը վերակենդանացուց ազատ շուկայական ութոփիան, որ իր բանաձեւումը գտաւ ԱՄՆի նախագահ Ronald Reagan-ի 1980 ական թուականներուն հռչակաւոր դարձած «Պետութիւնը լուծում չէ, պետութիւնը ինքը խնդիրն է» («The State is not the solution; the State is the problem») նախադասութեամբ: Այն, ինչ ԱՄՆի եւ, միաժամանակ, Մեծն Բրիտանիոյ մէջ «յեղափոխութիւն» պիտի անուանուի հետագային, որուն կէտ-նպատակն էր New Deal-ի բարեխնամ պետութիւնը վերցնել եւ զայն փոխարինել «շուկայի բարեկամ պետութեամբ» (market-friendly State) մը, Պաղ Պատերազմի աւարտին վերածուեցաւ միջազգային բեմին վրայ մնացած միակ գերպետութեան՝ ԱՄՆի արտաքին քաղաքականութիւնը յատկանշող գաղափարախօսական ինքնութեան: Francis Fukuyama-ի հանրածանօթ «Պատմութեան աւարտ»ի բանաձեւումը այս գաղափարախօսութեան թերեւս ամենէն ցայտուն եւ տարածուած հաստատումն է:

Խորհրդային պատմական փորձի սնանկացման փաստը մէկ կողմէ եւ Ուաշինկթընէն ու անոր հովանաւորութեան տակ գործող միջազգային ֆինանսական հաստատութիւններու ճնշումները միւս կողմէ կրնան բացատրել, ի շարս այլ նախկին խորհրդային հանրապետութիւններու, նաեւ Հայաստանի անցումային գործընթացի ժամանակ ազատ շուկայական գաղափարախօսութեան մենաշնորհը, որ հաստատուեցաւ, ամրագրուեցաւ եւ խորացաւ շնորհիւ անկախութենէն ի վեր որդեգրուած տնտեսական պետական քաղաքականութեան: Այդ գաղափարախօսութիւնը, միաժամանակ, անցումային գործընթացով, եւ ի մասնաւորի սեփականաշնորհման ծրագրով, կը ձգտի երաշխաւորել երկրի հարստութիւնը իր ձեռքերուն մէջ կեդրոնացուցած փոքրամասնութեան ռէալ մենաշնորհներուն լեգիտիմութիւնը: Ի՛նչ ալ ըլլան իշխանութեան համար մղուած պայքարներուն ընթացքին հանրային բանավէճերը, եւ հակառակ արտաքին քաղաքականութեան մէջ առկայ տարբեր մօտեցումներուն, Հա-

յաստանի մէջ, դժբաղդաբար, չէ ձեւաւորուած ազատ շուկայի ութոփիայի նկատմամբ առողջ քննադատական մտածողութիւն: Այս մտածողութեան բացակայութիւնն, ի դէպ, կը բացատրէ, ի մէջ այլոց, ժողովրդային լայն խաւերու վստահութիւն ներշնչող ընդդիմութեան մը կազմաւորումը:

Ազատ շուկայի ութոփիային վրայ հիմնուած է նաեւ Տիգրան Սարգսեանի «Պետութեան վախճանը» յօդուածը («21դդ Դար», 1 (19), 2008, էջ 3-26): Նման հիմնաւորման առիթ կու տայ յատկապէս այն իրողութիւնը, որ հակառակ պետութեան մասին խօսելուն, յօդուածին մէջ ակնյայտօրէն բացակայ է այդ «ինստիտուտ»ի պատմական զարգացման քաղաքական տեսութիւն մը: Յօդուածագիրը կ'օգտագործէ պետութեան յղացքի քանի մը սահմանումներ, անոնց հիման վրայ կ'առանձնացնէ պետութեան երեք հիմնական յատկանիշեր եւ անոնց իմաստազրկման հեռանկարին հետեւումով կը զարգացնէ պետութեան վերացման իր տեսութիւնը (էջ 5): Այդուհանդերձ, թէկուզ եւ բացառաբար քաղաքական տնտեսութեան (political economy) տեսանկիւնէն (ա) սխալ է այն տեսական բանաձեւումը, որուն համաձայն տնտեսական զարգացումը կը յանգեցնէ պետութեան կշիռի նուազեցման, (բ) զարգացած երկիրներուն մէջ պետութիւնը միշտ ալ դերակատար եղած է տնտեսութեան մէջ, եւ (գ) 2008-ի ֆինանսական համաշխարհային տագնապը բարացուցական դարձուցած է պետութեան դերակատարութեան վերարժեւորումը:

Ստորեւ կը մանրամասնենք այս երեք տեսական բանաձեւումները իւրաքանչիւրին պարագային ներկայացնելով փաստական տուեալներ, եւ մեր մասնակի եզրայանգումներուն մէջ կ'անդրադառնանք Հայաստանի մէջ ազատ շուկայական ութոփիայի էութեան եւ անոր շարունակման վտանգին:

Ա) Տնտեսական աճի հետ միասին տնտեսութեան մէջ պետութեան կշիռն ալ կ'աճի

Տասնիններորդ դարու գերմանացի տնտեսագէտ Ատոլֆ Վակների համաձայն, երբ պետութիւնները տնտեսապէս կը զարգանան եւ կը հարստանան, պետական ծախսերը, բաղդատած երկրի տարեկան ընդհանուր արտադրութեան կամ, ինչպէս տնտեսագէտները կ'ըսեն՝ Համախառն Ներքին Արդիւնքի (ՀՆԱ) հետ, կը բարձրանայ, եւ պետութեան չափը, կշիռը տնտեսութեան մէջ կը մեծնայ: Այս երեւոյթը կոչուեցաւ Վակների Օրէնք: Երկրի մը մէջ պետութեան կշիռի ցուցանիշներէն մէկը կառավարութեան տարեկան ծախսերուն չափն է բաղդատած ՀՆԱ-ին: Քսաներորդ դարը ցոյց տուաւ թէ Վակների Օրէնքը ճիշդ էր: Աշխարհի բոլոր տնտեսապէս զարգացած երկիրներուն մէջ, նոյնիսկ ԱՄՆի եւ Ճաբոնի, կը տեսնենք թէ բոլորին պարագային ալ տասնամեակներու ընթացքին երբ երկրի տնտեսութիւնը աճած է, նաեւ բարձրացած է պետութեան կշիռը տնտեսութեան մէջ: Երկիր մը, երբ տնտեսապէս կը զարգանայ եւ կը հարստանայ, պետութիւնը կրնայ աւելի հարկ հաւաքել եւ ի վիճակի կ'ըլլայ հայթայթելու ուսում եւ առողջապահութիւն ժողովուրդի բոլոր անդամներուն համար, որոնք պետութեան ծախսերը կը բարձրացնեն: Նաեւ՝ երբ երկիր մը կը զարգանայ, տնտեսութիւնը կարիքը կ'ունենայ աւելի պետական ծառայութիւններու եւ կարգաւորումներու:

Տնտեսապէս զարգացած ու հարստացած երկրի մը կառավարութիւնը կրնայ աւելի ծառայութիւններ տալ ժողովուրդին, հետեւաբար զարգացած եւ հարուստ երկիրներու մէջ ամէն մէկ նախարարութիւն կ'ունենայ շատ աւելի ծառայութիւններ եւ գրասենեակներ, քան թէ տնտեսապէս նուազ զարգացած երկիրներու մէջ: Օրինակ, երբ ԱՄՆի գիւղատնտեսական նախարարութեան համացանցը երթանք, www.usda.gov, կը տեսնենք թէ նախարարութիւնը ունի 12 տարբեր գրասենեակներ, 17 կազմակերպութիւններ եւ 7 ծառայութիւններ: Իսկ ամէն մէկ բաժանմունք ունի բազմաթիւ ենթաբաժանմունքներ, ստեղծելով հսկայական պետական վարչամեքենայ, որ խորապէս կը կարգաւորէ շուկան: Հայաստանի մէջ տակաւին ԱՄՆի մէջ գոյութիւն ունեցող այդ բազմաթիւ պետական բաժանմունքները գոյութիւն չունին: Այս կը նշանակէ թէ երբ Հայաստանի տնտեսութիւնը եկող տասնամեակներուն աճի եւ զարգանայ, կառավարութիւնը կարելիութիւնը պիտի ունենայ տրամադրելու ժողովուրդին բազմաթիւ նոր ծառայութիւններ, որոնք այսօր տրամադրելու ի վիճակի չէ, քանի չունի նիւթական կարողութիւն, եւ, կարգ մը պարագաներու, չի տրամադրեր, քանի տակաւին տնտեսութիւնը պէտք եղած չափով չէ զարգացած եւ հետեւաբար այդ տեսակ պետական ծառայութեան կարիքը դեռեւս շատ չ'զգացուիր: Այս կը նշանակէ թէ ժամանակի ընթացքին տնտեսական զարգացման պայմաններու մէջ պետութեան կշիռը եւ դերը Հայաստանի մէջ եւս պիտի բարձրանայ եւ ոչ թէ պիտի նուազի:

Հայաստանի պետութեան ծախսերը բաղդա-

տած ՀՆԱ-ին մօտաւորապէս 20 տոկոս կը կազմեն: Երբ զարգացած երկիրներու տնտեսական պատմութիւնը նկատի ունենանք, կը տեսնենք թէ Հայաստանի պետութիւնը մեծնալու եւ իր կշիռը բարձրացնելու տակաւին շատ ճամբայ ունի կը՛տրելիք: Նուազագոյնը պէտք է իր կշիռը բարձրացնէ, 20 տոկոսէն՝ 30 տոկոս, որպէսզի հասնի տնտեսապէս զարգացած երկիրներու պետութիւններու մակարդակին: Հետեւաբար այս հանգրուանին խօսիլ Հայաստանի պետութեան վախճանին մասին, պարզապէս անհեթեթութիւն պիտի ըլլայ:

Ֆրանսայի եւ Անգլիոյ պարագային, մօտաւորապէս 1915-ին, պետութեան ծախսերը բաղդատած ՀՆԱ-ին անցան 20 տոկոսի սահմանը: Ֆրանսայի պետութեան ծախսերը 2005-ին մօտաւորապէս երկրի եկամուտին 52 տոկոսն է, մինչ Անգլիոյ պարագային մօտաւորապէս 45 տոկոս: Իսկ Շուէտը եւ ԱՄՆը մօտաւորապէս 1950-ին անցան 20 տոկոսի սահմանը: 2005-ին Միացեալ Նահանգներու մէջ պետութեան ծախսերը մօտաւորապէս երկրի եկամուտին 33 տոկոսն էր, իսկ Շուէտի մէջ՝ 56 տոկոսը: (Տես http://www.oecd.org/dataoecd/52/34/-40209928. pdf այս ուսումնասիրութեան հեղինակներն են Լօնդի եւ Վուտզ):

Ճիշդ է, բազմաթիւ Արեւմտեան Եւրոպայի երկիրներու մէջ 1995-էն 2005 կառավարութիւններու ծախսերը բաղդատած ՀՆԱ-ի պակսեցան: Օրինակ Շուէտի մէջ 65 տոկոսէն իջաւ 55 տոկոսի, իսկ Ֆրանսայի մէջ 71-էն՝ 53: Այս բոլոր տնտեսապէս զարգացած Եւրոպական երկիրներու մէջ 50-ական, 60-ական եւ 70-ական տարիներուն պետութեան կշիռը բարձրացաւ մեծ չափերով: Անոր արդիւնքով ալ վերացան անօթութիւնը եւ անտունութիւնը, բժշկական խնամք, ուսում, փոխադրական միջոց, փոքրերու ցերեկուայ խնամք... այս բոլորը հասարակութեան տրամադրուեցաւ շնորհիւ իր կշիռը աւելցուցած պետութեան մը: Աւելի՛ն, առատաձեռն ծերութեան թոշակ, անգործութեան թոշակ եւ աղքատութեան նպաստներ տրամադրելի եղան այդ տարիներուն: 1980-ական եւ 90-ական թուականներուն Եւրոպական այս երկիրներուն մէջ քուէարկողները որոշեցին նուազեցնել կառավարական նպաստները եւ պակսեցաւ պետութեան կշիռը տնտեսութեան մէջ: Սակայն գործածել Շուէտի օրինակը եւ ըսել թէ Հայաստանի կառավարութիւնը եւս պէտք չէ բարձրացնէ իր կշիռը տնտեսութեան մէջ անհեթեթ եւ վտանգաւոր է: Հայաստան շատ հեռու է Արեւմտեան Եւրոպայի երկիրներուն 1980-ական թուականներու կացութենէն: Հայաստանի մէջ կայ աղքատութեան մեծ տոկոս: Ժողովուրդին մէկ կարեւոր մասը չունի բաւարար բժշկական խնամք, բարձրագոյն ուսման կարելիութիւն, եւ նոյնիսկ բաւարար սնունդ: Հայաստանի մէջ տակաւին պետութեան կշիռը պէտք է աւելի քան կրկնապատկուի, որպէսզի հասնի Շուէտի այսօրուան վիճակին, եւ պէտք է աւելի քան երեք անգամ մեծնայ, որպէսզի հասնի այդ երկրի 1980ականներուն մակարդակին:

Արեւելեան Ասիոյ կարգ մը տնտեսապէս զարգացած երկիրներու մէջ, ինչպես Ճաբոն եւ Հարաւային Քորէա, կառավարութեան ծախսերը բաղդատած ՀՆԱ-ին յարաբերաբար աւելի ցած են, քան թէ Արեւմտեան Եւրոպայի երկիրներուն մէջ, սակայն Ճաբոնի եւ Հարաւային Քորէայի մէջ անցնող տասնամեակներուն պետութիւնները անմիջականօրէն ուղղութիւն տուած են երկրի տնտեսութեան, տնտեսական ծրագրաւորումին՝ հինգ տարուայ ծրագրերու եւ զօրաւոր տնտեսական կարգաւորումներու միջոցաւ:

Նաեւ պէտք է նշել թէ Հարաւային Քորէայի պարագային կառավարութեան ծախսերը բաղդատած ՀՆԱ-ին 1995-էն 2005 բարձրացած են 21էն 29 տոկոս:

Որպէս այս բաժնի եզրակացութիւն կարելի է նախատեսել թէ Հայաստանի տնտեսական զարգացման անխափան շարունակման պարագային



պետութեան ծախսերն ու կշիռը պիտի բարձրանայ եւ բաղդատած ՀՆԱ-ին հասնի 30-35 տոկոսի սահմաններուն:

Բ) Պետութիւնը միշտ դերակատար է տնտեսութեան մէջ

Տնտեսագէտներու մեծամասնութիւնը, բացի ծայրայեղ ուղղափառներէն, համոզուած են թէ պետութիւնը բազմաթիւ բնագաւառներու եւ պարագաներու պէտք է միջամտէ շուկայի գործունէութեան եւ կարգաւորէ զայն: Կ'ընդունի թէ կան պարագաներ, ուր շուկան կը ձախողի հայթայթել կարգ մը ապրանքներ կամ ծառայութիւններ: Ուրիշ պարագաներու շուկան կը ձախողի զանոնք արտադրել ակնկալուած քանակով, արտադրելով շատ աւելի կամ շատ նուազ, քան ինչ կ'ակնկալուի: Այս բոլոր պարագաներուն, երբ շուկան կը ձախողի արտադրութեան վերաբերեալ ճիշդ որոշումներ առնել, արդարացուցիչ պատճառներ կը ստեղծուին, որպէսզի պետութիւնը միջամտէ եւ սրբագրէ շուկային ձախող որոշումները:

Հայաստանի Հանրապետութեան կարեւոր մարտահրաւէրներէն մէկն է աղքատութեան նուազեցումը՝ ընդհուպ մինչեւ անոր վերացումը: Այս իրագործելու համար կարեւոր է ծայրայեղ անհաւասար հարստութեան եւ եկամուտներու բաժանումի նուազումը, որուն արդիւնքը պիտի ըլլայ միջին դասակարգին ընդլայնումը: Պետութիւնը ծանր պատասխանատուութիւնը ունի ջնջելու անօթութիւնը եւ անտունութիւնը ու ապահովելու բոլոր քաղաքացիներուն բժշկական խնամք, ուսում, բնակարան, ապահով ծերութեան տարիներ, փոխադրական միջոց, եւ այլն: Այս բոլորը իրագործելու համար յաջորդ տասնամեակներուն, ինչպէս զարգացած երկիրներու փորձը ցոյց կու տայ, Հայաստանի պետութեան ծաւալը եւ կշիռը պէտք է բարձրանայ: Պետութիւնը կարեւոր դեր ունի տնտեսութեան մրցունակութեան ապահովման եւ այդ կ'իրագործուի արգիլելով մենաշնորհներու առաջացումը: Հոս եւս, հակառակ անոր որ կառավարական դիրքերէն անդադար կը խօսուի մրցունակ տնտեսութեան անհրաժեշտութեան մասին, Հայաստանի պետութիւնը տակաւին մեծ ճամբայ ունի կտրելիք եւ իրեն վերապահուած է մեծ դեր:

Արեւմտեան Եւրոպայի երկիրներու եւ ԱՄՆի պետութիւնները տնտեսութեան բազմաթիւ մարզերու մէջ կենսական դերակատարութիւն ստանձնած են: Այս մարզերէն ամենէն յատկանշականներէն մէկը գիւղատնտեսութիւնն է: Տնտեսապէս զարգացած երկիրներու պետութիւնները իրենց երկրագործներուն տնտեսապէս կը պաշտպանեն շուկայի գիներու ելեւէջներէն: Նոյնիսկ ամենէն ձեռներէց երկրագործը կրնայ սնանկանալ, եթէ կլիմայական պայմանները աննպաստ ըլլան: Հետեւաբար, տնտեսապէս զարգացած երկիրները կը գիտակցին թէ գիւղատնտեսութեան մէջ կարելի չէ ամբողջապէս վստահիլ շուկայական համակարգին եւ, ուրեմն, պետութեան վերապահած են ազդու միջամտութեան դերակատարութիւն:

Այլ մարզ, ուր պետութիւնը կարեւոր ու հիմնական դերակատարութիւն ունի, արտադրութեան եւ բաշխումի կարգաւորումն է: Տնտեսապէս զարգացած երկիրներուն մէջ կան մեծ թիւով պետական օրէնքներ եւ մարմիններ, որոնք կը կարգաւորեն եւ կը վերահսկեն շուկան: Երբ երկրի մը տնտեսութիւնը աճի ու զարգանայ, տնտեսութիւնը կարգաւորող պատճառներն ու առիթները կը բազմանան, չեն նուազիր:

2008ի սեպտեմբերին, Չինաստանի մէջ մօտաւորապէս 13000 երեխաներ հիւանդանոց փոխադրուեցան եւ չորս երեխաներ մահացան, երբ խմեցին թունաւոր քիմիական նիւթ (մելամին) պարունակող կաթ, որ արդիւնք էր յաւելեալ շահի ակնկալութեամբ գիւղատնտեսական ձեռնարկութիւններու քրէական անփութութեան: Այս օրինակը շուկայի ձախողութեան պերճախօս օրինակ մըն է: Չինաստանի պետութիւնը իր պարտականութիւնը չկատարելով եւ վստահելով շուկային, պատճառ հանդիսացաւ հազարաւոր երեխաներու հիվանդութեան: Դժբաղդաբար այս օրինակին նման կան բազմաթիւ ուրիշ պարագաներ: Օրինակ՝ 2007ին ի յայտ դարձաւ որ Չինաստանի խաղալիք արտադրող կարգ մը ընկերութիւններ կը գործածեն կապար պարունակող թունաւոր ներկեր, որոնք կը վնասեն երեխաներուն առողջութեան: Տնտեսապէս զարգացած երկիրներուն մէջ պետութիւնները ունին բազմաթիւ օրէնքներ եւ վերահսկիչ պետական մարմիններ, որոնք կը կարգաւորեն տնտեսական արտադրութիւնը: Զարգացող երկիրներ, ինչպէս Չինաստան կամ Հայաստան, ժամանակի ընթացքին երբ ունենան աւելի զարգացած տնտեսութիւն, պետութիւնը պարտադրուած պիտի ըլլայ եւ միաժամանակ պիտի կարենայ շուկային մէջ ստանձնել աւելի լայն դերակատարութիւն:

Գ) 2008ի ֆինանսական տագնապը վերարժեւորած է պետութեան կարեւորութիւնը

ԱՄՆի 2008-ի ֆինանսական տագնապը սկսաւ, երբ բնակարաններուն գիները սկսան վար իջնել, մօտաւորապէս տասը տարիներ արագօրէն աճելէ յետոյ: Երբ բնակարաններուն գիները ինկան, բազմաթիւ բնակարանատէրեր դրամատուներուն իրենց պարտքերը վճարելէ դադրեցան, որուն պատճառով ալ բազմաթիւ դրամատուներ եւ ֆինանսական ընկերութիւններ դիմագրաւեցին տագնապ եւ նոյնիսկ իրենք իրենց յայտարարեցին սնանկացած: Այս կացութեան իբրեւ հետեւանք, ֆինանսական ընկերութիւնները եւ դրամատուները կտրականապէս կրճատեցին ուրիշներու պարտք տալը, որուն հետեւանքով ալ երկրի տնտեսութիւնը ենթարկուեցաւ տնտեսական տագնապի: Այս տագնապը նաեւ ազդեց Եւրոպայի երկիրներու ֆինանսական հաստատութիւններուն եւ երկիրներուն տնտեսութեան վրայ:

Ներկայ ֆինանսական տագնապը դիմագրաւելու համար ԱՄՆի կառավարութիւնը եւ Կեդրոնական Դրամատունը 2008-ին աննախընթացօրէն միջամտեց շուկային մէջ եւ բազմաթիւ ձեւերով սկսաւ կարգաւորել շուկան: Նոյնն է պարագան Արեւմտեան Եւրոպայի երկիրներուն:

Ֆրանսայի նախագահ լիբերալ Նիկոլա Սարքոզին, որ իր նախագահական ընտրապայքարի ընթացքին առաջարկած էր որդեգրել աւելի լայն մասշտաբով հենուիլ ազատ շուկայական յարաբերութիւններուն վրայ, ներկայ ֆինանսական տագնապին ընթացքին, Սեպտեմբեր 23ին, ՄԱԿի Ընդհանուր Ժողովին առջեւ իր ելոյթին ընթացքին, փոխելով դրամատիրութեան եւ ազատ շուկայի ի նպաստ իր զօրաւոր կեցուածքը, յայտարարեց թէ պէտք է որդեգրել դրամատիրութեան այն տարբերակը, որ հիմնուած է յաւելեալ կարգաւորումներու վրայ: Ան կոչ ուղղեց աշխարհի միւս երկիրներու ղեկավարներուն ըսելով. «Եկէք միասնաբար կերտենք կարգաւորուած դրամատիրութիւն մը, ուր բազում ֆինանսական գործունէութիւններ չեն ձգուած միմիայն շուկայի տրամաբանութեան»: Ան նաեւ պահանջեց Ֆրանսայի ընկերութիւններու պատասխանատուներէն արդարացնել իրենց ստացած ամսականները: Սարքոզի երկու օր ետք, Սեպտեմբեր 25ին, այլ ելոյթի մը ընթացքին ըսաւ. «Ամենակարող շուկայի գաղափարը, շուկայ մը առանց որեւէ կարգաւորումի եւ քաղաքական միջամտութեան խելագարութիւն է: Այն գաղափարը, թէ շուկան միշտ շիտակ որոշումներ կ'առնէ, խելագարութիւն է»:

Իր կարգին Գերմանիոյ վարչապետ, պահպանողական Մըրքել, սկսած է բարձրաձայն կերպով քննադատել ազատ շուկայական գաղափարախօսութիւնը: Դարձեալ ֆինանսական տագնապի ընթացքին, Սեպտեմբեր 23ին, Վոլզվակըն գերմանական ինքնաշարժի ընկերութեան 15.000 աշխատաւորներուն առջեւ ելոյթ ունենալով, ան համաձայն գտնուած է, թէ պետութիւնը պէտք է պաշտպանէ ընկերութիւնը՝ թիկունք կանգնելով այն գաղափարին, որ առանց պետութեան կողմէ սահմանափակումներու, շուկայի դրութիւնը կրնայ ըլլալ վտանգաւոր: Անկէ մէկ շաբաթ առաջ, Մըրքել ըսած էր, թէ ԱՄՆը անպատասխանատու գտնուած է թող տալով, որ դրամատուները եւ ֆինանսական ընկերութիւնները գործեն շատ քիչ պետական վերահսկողութեամբ:

Իր կարգին, Անգլիոյ վարչապետ Կորտրըն Պրաուն, Պի-Պի-Սի հաղորդակայանին ըսած է, թէ հարկ է միջազգային յաւելեալ գործակցութիւն՝ վերահսկելու համար ֆինանսական տնտեսական մարզը, ինչպէս նաեւ անհրաժեշտ է բարեփոխել միջազգային տնտեսական հաստատութիւնները՝ Միջազգային Դրամական Ֆոնտ եւ Համաշխարհային Դրամատուն:

Այս բոլոր մէջբերումները ցոյց կուտան, որ Արեւմտեան Եւրոպայի թէ պահպանողական եւ թէ աշխատաւորական-ընկերվարական կուսակցութիւններուն ղեկավարները կը ջատագովեն պետութեան տնտեսութեան դերի եւ կշիռի բարձ-

բացումը: Որեւէ տնտեսապէս զարգացած երկրի ղեկավար չ՝առաջարկեր կամ չի նախատեսեր պետութեան կշիռի նուազեցում տնտեսութեան մէջ: Հետեւաբար, զարմանալի եւ արկածախնդրական է, երբ Հայաստանի Հանրապետութեան կարգ մը ղեկավարներ կ՝ըսեն, թէ պետութեան դերը պէտք է պակսի, եւ իրենց թէզերը կը հիմնաւորեն պետութեան «վախճանի» մը հեռանկարով:

Մասնակի եզրայանգումներ

Ազատ շուկայի ութոփիան ինքզինք պարտադրեց Լատինական Ամերիկայի մէջ 1990ական թուականներուն: Մեքսիքօ, Փերու, Արժանթին, Պոլիվիա, Վենեզուէլա, ի շարս ցամաքամասի մնացեալ երկիրներուն, որդեգրեցին այսպէս կոչուած Ուաշինկթընի Համաձայնութեան տասը պատուիրանները եւ անոնց հետեւումով նախաձեռնեցին տընտեսութեան ազատականացման եւ սեփականաշնորհման լայնամասշտաբ ծրագիրներու, որոնցմով կը կարծէին շուտափոյթ կերպով ետին թողնել անցնող «կորսուած» տասնամեակը եւ բռնել զարգացման ուղին: Մեքսիքոյի 1994ի փլուզումը եղաւ առաջին ազդանշան մը, որ օրին չուզեցին հասկընալ մնացեալ երկիրները: Պատմութիւնը ծանօթ է. 1998-2003 տարիներուն գրեթէ բոլոր երկիրները անցան տագնապէ, եւ ոմանք - Արժանթին, Պոլիվիա, Էքուատոր ի մէջ այլոց - ուղղակի փուլ եկան: 2002-2003 թուականներէն ի վեր գրեթէ բոլոր այս երկիրներուն մէջ կեդրոն-ձախ քաղաքական՝ուժեր ժողովրդային լայն քուէներով հասած են իշխանութեան գլուխ: Կարգ մը երկիրներ, Վենեզուէլայի, Պոլիվիայի եւ Էքուատորի օրինակներով, այսպէս կոչուած «ձախ թեքում»ին տուած են արմատական ուղղուածութիւն, որդեգրելով Վենեզուէլայի նախագահ Ուկօ Չավէսի Պոլիվարեան Յեղափոխութիւնն ու «21րդ դարու սոցիալիզմ»ի ծրագիրը: Ուրիշներ, Պրազիլի, Արժանթինի եւ Չիլէի օրինակով, աւելի չափաւորական ուղիով կ'ընթանան: Բոլորին պարագային ալ, սակայն, 1990ականներուն տիրապետող ազատ շուկայական համակարգն ու գաղափարախօսութիւնը խորքային եւ քննադատական վերատեսութեան ենթարկուած է: Անսպասելի չէր, ուրեմն, որ ֆինանսական տագնապին խորացման ժամանակ այս երկիրները արդարօրէն քննադատէին զարգացող երկիրներուն անպատասխանատուութիւնը՝ պետութեան դերակատարութեան նուազեցման քաղաքականութիւններու որդեգրման համար: Հակառակ որ զարգացած երկիրներու ղեկավարները շրջանցեցին ինքնաքննադատութիւնը, չի լսուեցաւ սխալներու մատնանշում, այդուհանդերձ ֆինանսական տագնապին լուծում մը փնտռելու իրենց ճիգերուն ընթացքին անոնք յանգեցան այն եզրակացութեանց, որոնց արդէն հասած էին նախապէս Լատինական Ամերիկայի երկիրները: Երբ աշխարհի երկիրներուն մեծամասնութիւնը, հիմնուելով անցնող 2-3 տասնամ- եակներու փորձին վրայ, սկսած են համոզուիլ թէ պետութիւնը պէտք է շատ աւելի մեծ դեր ստանձնէ երկրի տնտեսութեան մէջ, Հայաստանի Հանրապետութեան վարչապետին կողմէ հակառակ ուղղութեամբ գաղափարի զարգացումը, որ կը շարունակէ պնդել պետութեան դերի կրճատման անխուսափելիութեան ու անհրաժեշտութեան վրայ, լա- ւագոյն պարագային անզգուշութիւն է, իսկ յոռեգոյն պարագային կրնայ վնասակար եւ վտանգա-ւոր ըլլալ հայութեան համար:

Հայաստանի մէջ թոշակային համակարգի ամբողջական սեփականաշնորհման պետական հեռանկարը օրինակի կարգով կու գայ ցոյց տալու ազատ շուկայական ութոփիայի շարունակումը:

Ֆինանսական շուկաներու տագնապէն առաջ, ԱՄՆի նախագահական ընտրութիւններու Հանրապետական թեկնածու Ճոն Մըքէյն կ'առաջադրէր թոշակներու մէկ մասը պետականէն վերածել

պարտադիր սեփական հաշիւներու, ուր աշխատաւորները իրենց թոշակի տուրքերուն մէկ մասը պիտի դնեն անձնական ֆինանսական հաշիւներու մէջ: Սակայն ֆինանսական շուկաներու ձախողութիւններուն եւ տագնապին լոյսին տակ, երբ ֆինանսական շուկաներու մէջ անձնական հաշիւ ունեցող տարեցները մեծ վնասներ կրեցին, եւ շատեր ստիպուած եղան հետաձգել իրենց թոշակի անցնումը եւ նոյնիսկ վերսկսան աշխատելու, Մը-Քէյն այս նիւթը մէկ կողմ դրաւ: Հեգնական է, որ այնպիսի պահու մը, երբ աշխարհի մէջ ֆինանսական շուկաներու նկատմամբ վստահութիւնը կտրուկ ինկած է, Հայաստանի Կեդրոնական Դրամատան առաջարկով Հայաստանի կառավարութիւնը մտադիր է պետական թոշակի համակարգը յաջորդ մօտաւորապէս քսանհինգ տարուայ ընթացքին վերածել 100 տոկոսով պարտադիր անձնական հաշիւներու, որոնք փաստօրէն ենթակայ պիտի ըլլան ֆինանսական շուկայի քմահաճոյքին: Ոչ մէկ տընտեսապէս զարգացած երկիր նման գրաւ չէ դրած: Սակայն Հայաստանի մէջ, ուր տակաւին ֆինանսական շուկաներ չեն կայացած, ուր դեռեւս ֆինանսական շուկաները կարգաւորող անհրաժեշտ օրէնքները չեն անցկացուած, պիտի որդեգրուի ծայրայեղօրէն շուկայական ուղղուածութիւն ունեցող թոշակային համակարգ մը: Հայաստանի քաղաքացիները, որոնք ֆինանսական տագնապներու պատմական փորձառութիւն չունին, պէտք է դաս քաղեն այլ ժողովուրդներու փորձառութենէն եւ պահեն թոշակներու պետական համակարգը՝ շրջանցելու համար ապագային ահաւոր ռիսկեր, որ թոշակներու ազատ շուկայական համակարգը կ'ենթադրէ:

Հայաստանի մէջ ազատ շուկայական ութոփիայի շարունակումը, անշուշտ, պատահականութեան արդիւնք չէ: Անոր ետին կայ անցումային տարիներուն իրենց տնտեսագիտական պատրաստութիւնը Արեւմուտքի ամենաուղղափառ թեքումով համալսարաններուն մէջ ստացած մտաւորականներու ամբողջ հատուած մը, որուն թեքնիք պատրաստութիւնը, եթէ բարձր մասնագիտական մակարդակի է, դժբաղդաբար, զուրկ է քննադատական մտածողութենէ կամ այլընտրանքային առաջարկներու բանաձեւումէ: Ամբողջ բանավէճը, երբ ըլլայ, զուտ թեքնիքական բնոյթի է, կամ ալ՝ անձնական մրցակցութեան մղումով: Քննադատական մտքի նման բացակայութիւն իր կարգին պատահական չէ երկրի մը մէջ, ուր տնտեսական քաղաքականութիւնը հիմնականին մէջ իշխող փոքրամասնական դասակարգի մենաշնորհներու պահպանման կը ծառայէ: Չկայ ժողովրդային խաւ մը, որ քաղաքացիական հասարակութեան գիտակցութեամբ սոցիալական հարցերու բարձրացման եւ սոցիալական իրաւունքներու պաշտպանութեան ի խնդիր զօրաշարժ առաջացնէ: Ոչ ալ կան քաղաքական ուժեր, որոնք այդ այլընտրանքի յանձնառութեամբ իշխանութեան համար մղուած օրինական պայքարը հիմնեն ժողովրդային գիտակցման ու զօրաշարժի երկարաժամկէտ հեռանկարին վրայ եւ ատոր համար ալ հրաժարին իշխող փոքրամասնութեան մենաշնորհներուն թէկուզ եւ մտաւորականօրէն քննադատելու ինքնազսպումէն: Հետեւաբար այնքան ալ պէտք չէ զարմանանք, որ Հայաստանի մէջ թէկուզ եւ առկայ է պետութիւն մը, որուն տնտեսական քաղաքականութիւնը հետամուտ է իշխող դասակարգի մենա- շնորհներու պահպանման, նոյն այդ պետութեան մակարդակով հնչէ սեփական վախճանի համոզումը:

1970ականներու սկիզբին, երբ ԱՄՆի տնտեսութիւնը ենթակայ էր տնտեսական տագնապի, նախագահ Ռիչըրտ Նիքսըն ստիպուեցաւ պարտադրել ապրանքագներու եւ աշխատավարձերու ժամանակաւոր սառեցում, ինչ որ համազօր է տընտեսութեան մէջ պետական դերի բարձրացման: Այդ օրերուն պահպանողական Նիքսըն յայտարարեց իր նշանաւոր խօսքը. «Ի վերջոյ, բոլորս ալ Քեյնզընական ենք»: 2008ի ֆինանսական տագնապը եւ անոր լուծման ի խնդիր պետութեան դերակատարութեան բարձրացումը հեռու են պետութեան վախճանին մասին նախանշաններ տալէ: Ընդհակառակը, մինչ ազատ շուկայական ութոփիան, որ, մէջբերելով Մարքսին, այնքան «ամուր» եւ իրական կը թուար, ֆինանսական պղպջակներու պայթումին հետ օդին մէջ կ'անհետի, թերեւս մինչեւ իսկ ականջալուր ըլլանք «այլեւս բոլորս ընկերվարական ենք» հաստատման...

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Արծվիկ Մինասյան

Անկախ պետության բնորոշ առանձնահատկություններից մեկը միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ հանդես գալն է: Ինչպես ամրագրված է Հայաստանի անկախության հռչակագրի 6-րդ մասում՝ «Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն... մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը»: Իսկ ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

Հայ-թուրքական հարաբերություններին ուղղված հայտնի արձանագրությունների վավերացման ընթացքում ներկայումս քննարկվող հիմնական հարցերից մեկը վերաբերում է այս արձանագրությունների նկատմամբ հայկական կողմից վերապահում իրականացնելու օրենսդրական հիմնավորվածությանը:

Հայտնի է, որ այս արձանագրությունների բովանդակության ու ընթացքի վերաբերյալ ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում ներկայացվող հիմնական առարկությունները վերաբերում են թուրքական հայտնի երեք նախապայմաններին: Այն է՝ Հայաստանը պետք հրաժարվի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացից, պետք է ճանաչի Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության գոյություն ունեցող սահմանը՝ որպես իրավական սահման, ինչպես նաև Արցախի հիմնահարցը լուծել Ադրբեջանի օգտին: Առկա մտահոգությունն այն է, որ այս նախապայմանները ուղղակի կամ անուղղակի տեղ են գտել արձանագրություններում: Ավելին, այս մտահոգությունների առարկայական լինելը փաստվեց նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հունվարի 12-ի որոշմամբ:

Սակայն դատարանի որոշումը լինելով ներպետական օրենսդրության մաս, լինելով պետական և տեղական ինքնակառավարման մարմնի և պաշտոնատար անձանց համար պարտադիր կատարման ենթակա իրավական ակտ, այնուամենայնիվ ստորադասվում է ուժի մեջ

մտած միջազգային պայմանագրերից:

Հետևաբար Սահմանադրական դատարանի որոշման կատարումը պահանջում է 2 հնարավոր գործողություններից մեկի գործադրումը՝ արձանագրությունները չվավերացնելու վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի որոշման կայացում կամ դրանց Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով արտահայտված մոտեցումները վերապահումների ձևակերպմամբ վավերացում:

Ներկա զարգացումների համատեքստում մտահոգիչ է այն հանգամանքը, որ մի շարք քաղաքական գործիչներ և մասնագետներ մերժելով արձանագրությունները չվավերացնելու գործողությունը, միաժամանակ փորձում են իրականությանը չհամապատասխանող մոտեցումներով նսեմացնել վերապահումների անհրաժեշտությունը: Վերջին դեպքում նրանց հիմնական փաստարկներն են. Սահմանադրական դատարանի որոշումը բավարար է, որպեսզի չեզոքացվի թուրքական նախապայմանների վտանգը, երկկողմ միջազգային պայմանագրերում վերապահումը արգելված է: Երկու փաստարկներն էլ հիմնազուրկ են նախ այն պատճառով, որ, ինչպես նշեցինք, դատարանի որոշումը ներպետական օրենսդրության մաս է կազմում և այն որևէ ձևով չի կարող վկայակոչվել միջազգային իրավունքում՝ հատկապես արձանագրությունների մեկնաբանման համատեքստում: Ինչ վերաբերում է վերապահումները երկկողմ հարաբերություններում արգելված լինելուն, ապա հարկ է արձանագրել, որ այս պնդումը հակասում է ոչ միայն միջազգային իրավունքի սկզբունքներին (Վիեննայի 1969 թվականի կոնվենցիա), այլև միջազգային պայմանագրերի կնքման պրակտիկային (այսպես, Հայաստանի և Դանիայի կառավարությունների միջև կնքված պայմանագիրը ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թ. դեկտեմբերի 26-ին վավերացվել է կից վերապահումով):

Այսպիսով՝ վերապահում իրականացնելն անհրաժեշտություն է, որի իրականացման համար, սակայն, ՀՀ ներկա օրենսդրությունը բավական թերի է: Այս բացը լրացնելու, ինչպես նաև ՀՀ արտաքին քաղաքականությանը լրացուցիչ ճկունություն հաղորդելու նպատակով, ՀՀ Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցությունը շրջանառության մեջ է դրել «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքներում փոփոխությունների նախագիծ: Օրենսդրական նախագծերի փաթեթը նպատակ ունի ՀՀ կողմից միջազգային պայմանագրերի կնքման ընթացակարգը համահունչ դարձնել ինչպես միջազգային իրավունքին, այնպես էլ ՀՀ Սահմանադրությանը: Ըստ այդմ, նախագծերով առաջարկվում է՝

1. Հայաստանի Հանրապետությանը վերապահել իրավունք, որի համաձայն միջազգային պայմանագրերի կնքման ընթացքում, կընքման որևէ փուլում, քանի դեռ միջազգային պայմանագիրն ուժի մեջ չի մտել, Հայաստանն իրավունք ունենա միակողմանիորեն չեղյալ հայտարարել պայմանագրային գործընթացը: Օրենսդրական այս բացը (նման լիազորության բացակայությունը) ներկայումս, ըստ էության, Հայաստանին (ի դեմս պայմանագիրը հաստատող կամ վավերացնող մարմնի) զրկել է այդպիսի իրավունքից, քանի որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքով: Մինչդեռ ինչպես նշեցինք, Հայաստանի անկախության մասին հռչակագրի 6-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն», ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածի ուժով ՀՀ արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան: Իսկ միջազգային իրավունքը, մասնավորապես Վիեննայի 1969 թվականի Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիան, առանձին բացառություններով չի արգելում պետության կողմից մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը միակողմանիորեն չեղյալ ճանաչելու հնարավորությունը (ստորագրությունը հետ կանչելը, հաստատված կամ վավերացված պայմանագիրը մինչև դրա գործողության մեջ մտնելը վերացնելը և այլն): Այլ կերպ ասած՝ ամրագրելով առաջարկվող նորմը՝ Հայաստանն իր արտաքին քաղաքականության շրջանակներում վարվող բանակցությունների, ինչպես նաև կնքվող համաձայնությունների մեջ կլինի ավելի ճկուն: Բացի այդ, առաջարկվում

է նշել այն հիմքերը, որոնք իրավունք կտան ՀՀ-ին դրսևորելու այդպիսի վարքագիծ: Մասնավորապես՝ երբ պայմանագրի մյուս կողմն հայտարարում է այնպիսի նախապայմանների մասին կամ ձեռնարկում է այնպիսի գործողություններ, որոնք անհամատեղելի են պայմանագրի առարկայի և նպատակների հետ կամ այդպիսին կդառնան հետագայում, չնայած նրան, որ բանակցությունների ընթացքում չեն եղել այդպիսի պայմանավորվածություններ: Կամ՝ պայմանագրի մյուս կողմը կատարել է խարդախություն, կաշառել է Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին, ուժի կամ դրա կիրառման սպառնալիքի միջոցով գործադրել է հարկադրանք կամ անհիմն խախտել է պայմանագրի կնքման ընթացակարգերին առնչվող ժամկետները կամ թույլ է տվել ողջամիտ ժամկետների չարաշահում (ձգձգում) կամ երբ միջազգային պայմանագրի կնքման ընթացքում չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքի պահանջները: Ընդ որում, այս հիմքերից շատերը Վիեննայի կոնվենցիայով (հոդվածներ 46-53) կարող են հիմք հանդիսանալ գործողության մեջ գտնվող պայմանագրի անվավերության համար: Հետևաբար տրամաբանական և էական է այդպիսի հնարավորության ընձեռումը մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը:

Բացի այդ, առաջարկվում է նաև լրացնել ուժի մեջ մտած միջազգային պայմանագրի կասեցման կամ դադարեցման հիմքերը, որոնք առավել համահունչ կլինեն միջազգային իրավունքին և ՀՀ Սահմանադրությանը:

2. Նախատեսել Հայաստանի կողմից միջազգային պայմանագրի հաստատման կամ վավերացման ժամանակ վերապահում անելու հիմքերը: ՀՀ ներկա օրենսդրությամբ վավերացման ժամանակ վերապահում անելու իրավունքն ու դեպքերը խիստ սահմանափակված են: Մինչդեռ, Կոնվենցիան ոչ միայն խիստ չի մոտենում այս հարցին, այլև դրա 19-րդ հոդվածը թվարկում է վերապահում անելու անհնարինության դեպքերի սպառիչ ցանկը՝ երբ վերապահումն արգելվում է պայմանագրով կամ պայմանագիրը նախատեսում է, որ կարելի է անել միայն որոշակի վերապահումներ, որոնց թվի մեջ տվյալ վերապահումը չի մտնում, ինչպես նաև այն դեպքում, երբ վերապահումն անհամատեղելի է պայմանագրի առարկայի և նպատակների հետ: Մնացած դեպքերում վերապահում անելու իրավունքը, ըստ էության, պետության ներքին իրավասության խնդիր է: Մյուս կողմից՝ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ գործող օրենքի 19-րդ հոդվածը նախատեսում է նախքան պայմանագրի ստորագրումը դրա վերաբերյալ վերապահում անելու իրավունքը, իսկ վավերացման կամ հաստատման փուլում այն չի կարևորում: Մինչդեռ գործնականում լինում են դեպքեր, երբ այդպիսի վերապահում անելու անհրաժեշտություն է առաջանում հենց հաստատման կամ վավերացման ժամանակ՝ պայմանավորված տարբեր պատճառներով: Ի դեպ, այս մասին են վկայում նաև ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ վերջինիս տարեկան հաղորդումները: Մասնավորապես, երբ պայմանագրերի մշակման, կազմման, ինչպես նաև դրանց ստորագրումից հետո հայտնի է դառնում, որ դրանցում ամրագրված նորմերը ոչ միայն չեն բավարարում իրավական որոշակիության կանոններին, այլև հնարավոր է ստեղծվեն հակասահմանադրական իրավիճակներ (օրինակ՝ երբ միջազգային պայմանագրից բխող գործողություններ են ձեռնարկվում, որոնք ըստ էության չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության դրույթներին, ինչպես նաև Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին): Սա այն դեպքում, երբ, ինչպես նշված է ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թ. տարեկան հաղորդման մեջ, «Պետական մարմինները և պաշտոնատար անձինք դեռևս բավարար չափով հաշվի չեն առնում Սահմանադրական դատարանի որոշումների պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն: Մինչդեռ միջազգային սահմանադրական արդարադատության պրակտիկան միարժեքորեն վկայում է, որ սահմանադրական դատարանն իր որոշման մեջ Սահմանադրության նորմի իրավական բովանդակու-

թյան բացահայտման կամ օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով ձեւակերպում է իր իրավական դիրքորոշումը, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար»:

Բացի այդ, վերապահման ինստիտուտը կարևորվում է նաև գործողության մեջ մտած միջազգային պայմանագրի կատարման ընթացքում, այն մեկնաբանելիս, ինչպես նաև պայմանագրի մյուս կողմին (կողմերին) կամ որևէ երրորդ կողմի հստակորեն ցույց տալու ՀՀ մտադրության մասին: Սա վկայում է նաև երկրի միջազգային հեղինակության, ինչպես նաև միջազգային իրավունքի նորմերը հարգելու մասին:

3. Միջազգային պայմանագրի վավերացման ժամանակ վերապահում սահմանելու իրավունքը ընձեռել ինչպես Հանրապետության Նախագահին, այնպես էլ ՀՀ Ազգային ժողովին: Այս խնդիրը կարևոր է նույն իշխանության մարմինների միջև լիազորությունների տարանջատման, հավասարակշռման և փոխադարձ զսպման սկզբունքի լիարժեք գործադրման համար: Գործող օրենսդրությամբ այդպիսի իրավունքը տրված չէ ՀՀ ԱԺ-ին, ինչը առնվազն թուլացնում է օրենսդիր մարմնի դերակատարությունը պետության կարևորագույն հարցերում մասնակցություն ունենալու, ինչպես նաև արտաքին քաղաքականության առավել ճկունություն հաղորդելու սահմանադրական լիազորությունների իրագործման համար: Մյուս կողմից, եթե գործող օրենսդրության համաձայն, նույնիսկ տեսականորեն, ՀՀ ԱԺ-ն ցանկություն արտահայտի ՀՀ Նախագահի կողմից ներկայացված միջազգային պայմանագրի վավերացման ժամանակ արտահայտել դիրքորոշում՝ չվավերացնելու կամ որոշ վերապահումներով վավերացնելու ձևով, ապա այն կարող է արտահայտվել միայն միջազգային պայմանագրի վավերացումը մերժելու միջոցով: Սա ոչ միայն նշանակում է սկզբից սկսել պայմանագրային հարաբերությունների գործընթացը, այլև ձևավորում է կոնֆլիկտային իրավիճակ երկրի ներսում, հետևաբար նաև թուլացնում է ՀՀ միջազգային դիրքերը: Մինչդեռ, եթե ՀՀ ԱԺ-ի համար վերականգնվի վերապահում սահմանելու իրավունքը, ապա այդպիսի հակադրության հնարավորություն չի առաջանա և ՀՀ արտաքին քաղաքականությունը կլինի առավել նպատակային, ճկուն ու կնպաստի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նորմերի լիարժեք գործադրմանը:

Այսպիսով, առաջարկվող փոփոխությունները կրում են համակարգային բնույթ և նպատակ ունեն ապահովել ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թ. հունվարի 12-ի ՍԴՈ-850 որոշմամբ նախատեսված պահանջների մի մասի կատարումը: Այսինքն՝ ինչպես վերը նշեցինք, Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվող քայլերը՝ նախատեսվող պարտավորությունների ստանձնման և դրանց կատարումն անհրաժեշտ օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքներով ապահովելու ուղղությամբ, պետք է ներդաշնակ լինեն որոշմամբ ներկայացվող Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին և Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներին: Իսկ ինչպես ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասում, Սահմանադրական դատարանի գործով

ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Մենք լիահույս ենք, որ այս նախաձեռնությունը կունենա բավարար աջակիցներ և կվերածվի օրենսդրական պահանջի:

ՎԱՍՆ ՏԳԻՏՈՒԹՅԱՆ

Հայկազուն Ալվրցյան

Հանրահայտ իրողություն է, որ թե գիտությունը և թե տգիտությունը սահմաններ չունեն: Նաև փաստ է, որ բառային-իմաստային այս հականիշները միմյանց «գործերին» չեն խառնվում, որովհետև ընդհանուր ոչ մի գործ չունեն: Սրանք ավելի շուտ նման են կյանքին ու մահվանը, լույսին ու խավարին, շոգին ու ցրտին և այլն, քանզի որտեղ հայտնվում է մեկը, մյուսն անհետանում է: Բայց անգամ այստեղ մեկը մյուսի փոխարեն (տգիտությունը՝ գիտության, քանզի հակառակը տեսականորեն էլ է անհնար) հանդես գալու հնագույն սովորույթը կենսունակ է:

Ահա այդպիսի մի դեպք. ոմն «քուրմ», ով *հեթանոսություն* բառը թարգմանում է *ցեղահավատություն*, իսկ իրեն համարում ցեղահավատ կամ ցեղակրոն, Վահագնականչ կայքէջում և «Լուսանցք» թերթում (թիվ 132, 133) տպագրել է մի ցափռտուք՝ «**Դաշնակցությունը, մասոնականությունը եւ երիտթուրքականությունը**» վերնագրով: Անմիջապես նշեմ, որ հոդվածն սկսել է փաստերի խեղաթյուրումով, և այս ոճի գայթակղությանը չդիմանալով՝ սկզբունքը պահպանել է մինչ վերջին տողը. *«Վերջերս ընկերոջս՝ Համլետ Գեւորգյանի դոկտորական ատենախոսության պաշտպանությանն էի ներկա: Թեման վերաբերում էր 1895-1908թթ. հայ ազգային-ազատագրական պայքարին ՀՅԴ-ի՝ այդ պայքարի գլխավոր կազմակերպչի մասնակցության պատմությանը:*

Քննարկման ժամանակ իմ ելույթում նշեցի, որ ատենախոսությունը, ընդհանուր առմամբ դրական լինելով հանդերձ, ունի մի կարեւոր թերություն: Հեղինակը դաշնակցության գաղափարաքաղաքական հայացքներին անդրադառնալիս անտեսել է դրանց՝ ջհուդա-մասոնականությունից ծագումնաբանությունը:

Տարրական պատմանանաչողություն ունեցողի համար իմ նկատած թերությունը պետք է որ տեղին համարվեր (իմ ատենախոս ընկերոջ կողմից ասածս որոշ չափով այդպես էլ համարվեց): Բայց... Պաշտպանությունից հետո միջանցքում դեպ ինձ շտապով մոտեցավ մի հոռի դաշնակցական ու, բացելով իր գրիպության գրքակը, շուրջ-սելուկով դուրս գվեց, թե «մեր 100 տարվա կուսակցությունը դուք՝ հեթանոսներդ վարկաբեկում եք»: Հետո էլ թե՝ «ամեն ինչում մասոնականության մատնահետքն եք տեսնում»:

Իրողությունն այն է, որ ատենախոս Հ. Գևորգյանը չէր կարող «որոշ չափով» ընդունել նրա ասածը, քանզի այդ հարցին ուղղակի չպատասխանեց (հուսամ՝ ԳԱ Պատմության ինստիտուտում նիստի արձանագրությունը պահպանվում է): Այս հարցին անդրադարձա միայն ես՝ ատենախոսության քննարկման ժամանակ իմ խոսքի վերջում ռեպլիկի կարգով նշելով, որ լավ կլինի՝ նա մտածի մասոնների և հեթանոսների առնչությունների մասին: Իսկ դրսում պարզեցի միտքս. եթե նման առնչություններ ինքը չի տեսնում, դեռ չի նշանակում, որ դրանք գոյություն չունեն: Զարմանալին այն չէր, որ նա ասածս չհասկացավ, այլ այն, որ արդարացավ, թե հեթանոսությունը ցեղակրոն ուսմունքի հետևորդ է, և նման առնչություն լինել չի կարող: Բայց իմ հարցին, թե այդ դեպքում ի՞նչ հիմնավորումով է ազգային գաղափարների հետևորդ Դաշնակցության ու մասոնների մեջ առնչություններ տեսնում, որևէ բա-

նական պատասխան չկարողացավ տալ:

Տգիտությունը, ինչպես հայտնի է, նաև հիշաչար է ու վրեժխնդիր, և ահա որոշել է այս խզբզոցով հագեցնել վրեժի ծարավը: Սակայն եթե հարցն ընդամենը այսքան պարունակություն ունենար, կանտեսեի այս գրությունը և չէի պատասխանի: Բանն այն է, որ այս միջադեպի առիթով Սերգեյ Մանուկյան «ցեղահավատը» (ԵՊՀ փիլիսոփայության ֆակուլտետի կարմիր դիպլոմով շրջանավարտն ու նույն համալսարանում երկար տարիներ մարքս-լենինյան փիլիսոփայություն դասավանդած և հարմար պահին հոգեդարձ ապրած հեթանոս «քուրմը») հեթանոսության (և որևէ կրոնի մասին) տարրական գիտելիքներ չունեցող այս մարդն իր հակադաշնակցական ցեխարձակումներին ուզում է գիտականության երանգ հաղորդել ցեղակրոնության դիրքերից: Եթե կոմունիստական կամ ժամանակակից որևէ այլ կուսակցության գաղափարախոսական դիրքերից է դա արվում, տպավորությունը մեծ չէ, բայց բոլորովին ա՜յլ է ցեղակրոնության հմայքը:

Եվ այսպես՝ տեսնենք, թե ինչ հայտնագործություն է արել այս «ցեղահավատը»: Պարզվում է՝ *«19-րդ դարի վերջերից, որպես Հայաստանյայց եկեղեցու ապրած կերպարանափոխություններից մեկի՝ գաղափարա-քաղաքականի արդյունք, հայ կյանքում հայտնված Դաշնակցություն կուսակցությունը»* հիմնադրել են մասոնները և նրան ֆինանսավորել ու ուղղորդել: Պատմագիտության դիրքերից խոսող այս իմաստակը առաջին իսկ քայլերից հայտնվում է զավեշտալի հակասության մեջ՝ *«Հայաստանյաց եկեղեցու գաղափարա-քաղաքական արդյունք»* Դաշնակցությունը համարելով մասոնների կողմից հիմնադրված կառույց: Նման հակասությունը հետևանք է այն բանի, որ հեղինակը, ինչպես կտեսնենք ստորև, մոտավոր պատկերացում իսկ չունի ոչ Հայ առաքելական եկեղեցու դավանաբանության, պատմության ու գործելակերպի, ոչ Դաշնակցության գաղափարական-քաղաքական հիմքերի ու պատմության, ոչ էլ, ըստ էության, մասոնականության մասին:

Այնուհետև «հիմնավորում է», թե ինչպես էին մասոնները ղեկավարում Դաշնակցությունը. Մ. Վարանդյանը, ըստ հեղինակի, Դաշնակցության կապն էր մասոնական օթյակների հետ, որի միջոցով էլ վերջիններս ղեկավարում էին հայկական կուսակցությունը: Բայց, ա՜յ քեզ ապշեցուցիչ տրամաբանություն, պարզվում է, որ *«Մասոնական գործունեության վրա քաշած գաղտնիության քողը հնարավորություն չի տալիս որոշակիորեն ասել, թե մասոնական լիդերների եւ Վարանդյանի միջեւ ինչ պայմանավորվածություններ են եղել»*: Հարց է առաջանում, թե Ս. Մ.-ն այս «գաղտնիության քողի» տակից ինչպե՞ս է կարողացել իր հրաշապատում հեքիաթների համար մյուս տեղեկությունները հայթայթել և ինչո՞ւ դրանցից գոնե մեկ աղբյուր չի նշում:

Հանուն արդարության պետք է ասել, որ, այնուամենայնիվ, մեկ աշխատություն վկայակոչում է, թեև դրանից էլ որոշակի էջերի հղումներ չի կատարում. դա Լեոյի «Անցյալից. հուշեր, թղթեր, դատումներ» գիրքն է՝ գրված 1925թ. բոլշևիկների քաղաքական պատվերով, ինչը այս մարքս-լենինահենք հեթանոս քրմի, ցեղակրոն մարտիկի, ցեղահավատ գաղափարականի համար ավետարանի արժեք ունի: Անգամ այս գիրքը, որ պատվիրված էր Դաշնակցությանը վարկաբեկելու համար և գրված էր բոլշևիկյան գաղափարախոսության մեկնակետից, հետագայում նույն բոլշևիկների կողմից արգելվեց, քանզի Լեոն, որքան էլ փորձել է պատվերը բարեխղճորեն կատարել, այնուամենայնիվ, մի շարք հարցերում չի կարողացել շրջանցել օբյեկտիվ իրողությունները: Նաև նշենք, որ Լեոյի գիրքը գիտականության նշույլից զուրկ է, քանզի չի հիմնավորվում ոչ մի փաստով, փաստաթղթով կամ այլ գիտական աղբյուրով: Այս հանգամանքը նկատել է կարկառուն բոլշևիկ Ա. Կարինյանը՝ իր առաջաբանում գիրքը բնորոշելով «մեմուարներ» (ի դեպ՝ Լեոն երկար տարիներ համագործակցում էր Դաշնակցության հետ, բայց իր կյանքի թերևս ամենահետաքրքիր ու կարևոր շրջանից շատ հեշտությամբ է հրաժարվում. նույն կերպ է վարվում նաև մարքս-լենինյան փիլիսոփայության ու գիտական կոմունիզմի երբեմնի այս դասախոսը: Հատկանշական է, որ Լեոն եղել է Բաթումի պայմանագիրը (1918թ. հունիսի 4) ստորագրած հայկական պատվիրակության խորհրդականը):

Երբ գիտականության հավակնող խոսքը չի հիմնավորվում փաստերով և ապացույցներով, այն կոչվում է զրպարտություն կամ քաղաքական պատվեր: Բայց եթե Լեոն այդ պատվերը կատարում էր Խորհրդային Հայաստանում կյանքի իրավունք ստանալու դիմաց, ապա պարզ չէ, թե այս մարդը ումի՞ց և ի՞նչ ակնկալիքներ ունի, որպեսզի գրվածքի «ժանրը» հստակեցնենք՝ զրպարտությո՞ւն, թե՞ քաղաքական պատվեր, քանզի նրա միակ «գիտական» աղբյուրը Լեոյի՝ գիտականության հետ ոչ մի կապ չունեցող «մեմուարներն» են:

Եվ այսպես՝ հետևենք Դաշնակցության՝ «ջհուդա-մասոնականությունից ծագումնաբանությանը» և տեսնենք, թե ՀՅԴ Ծրագրում ինչպես է դա տեսնում այս «վերլուծաբանը»: Կուսակցության ստեղծման ու անվան մասին մի քանի անհեթեթ մտամարզանքներից հետո անդրադառնում է ծրագրին, և տեսեք՝ ի՞նչ գյուտեր է անում. *«Ծրագրում ոչ մի խոսք չկա ազգային միաբանության, ազգային որակների վերականգնման, ազգային կրթում-դաստիարակումի, ըստ այդմ՝ ազգն աստիճանաբար նվաճողներից ազատագրումի պահելու մասին»*: Եթե հասկանար, թե ինչ բան է ծրագիրը, բնականաբար նման բան չէր ասի, քանզի այդ հասկացությունները (ազգային համախմբում, կրթություն, դաստիարակություն, սոցիալական արդարություն, ազգային կյանքի բազմազան խնդիրների լուծում և դրանց իրականացման ու զարգացման երաշխավոր պետության ստեղծում) ամրագրված են ընկերվարության (սոցիալիզմի) հայեցակարգում, որը և որդեգրել էր Դաշնակցությունն իր ծրագրում:

Թեև սկզբում խոսեցինք տգիտության անսահմանության մասին, բայց մի անգամ ևս տեսնենք, թե այն ի՞նչ զավեշտալի դրսևորում ունի այս դեպքում. մոլի «հակամասոնը» Դաշնակցությանը մեղադրում է մասոնական ծրագրի չհետևելու մեջ: Տարրական գիտելիքներ ունենալու դեպքում եթե չհասկանար, ապա գոնե պիտի գլխի ընկներ, որ «ազգային կրթում- դաստիարակումի, ըստ այդմ՝ ազգն աստիճանաբար նվաճողներից ազատագրումի տանելու» ծրագրի հեղինակները 18-րդ դարի մասոններ Ժան Ժակ Ռուսոն, Ադամ Վիշապտը և նրանց կուսակից- գաղափարակից լուսավորչականներն էին: Սակայն նրանք հասկանում էին, որ կրթությունն ու լուսավորությունը մարդկանց կարող է ազատել դասակարգային, սոցիալական, իրավական կապանքներից: Բայց թե Օսմանյան կայսրության նման արյունարբու նվաճողից այդ ճանապարհով ինչպե՞ս պետք է հայ ազգն ազատագրվեր, այն էլ՝ աստիճանաբար, մեր «ռազմատենչ ու ցեղահավատ քուրմը» գաղտնի է պահում: Հայ մեծ գրող Խ. Աբովյանը, որ լուսավորչական գաղափարների նվիրյալ հետևորդ էր, իվերջո հանգեց այն մտքին, որ գիրը, գրականությունը, դըպրոցն ու կրթությունը լավ բաներ են, բայց «թվանքի փիրը օրհնած է»: Գուցե հիշե՞նք, թե այդ կայսրության ստրկացումից ովքեր են «ազգային կրթում-դաստիարակումի» ճանապարհով *աստիճանաբար* ազատագրվել՝ հույնե՞րը, բուլղարնե՞րը, սերբե՞րը, մակեդոնացինե՞րը, արաբնե՞րը, ասորինե՞րը, քրդե՞րը... Իսկ մեր օրերում՝ օսմանցիների եղբայրների լծից գուցե Արցախի՞ հայությունը... Ի դեպ՝ այս հեթանոս ցեղահավատներին Արցախի ազատամարտում ոնց որ թե տեսնողներ չեն եղել: Հավանաբար նեղացել էին այն մոլորյալ հայերից, որոնք «ազգային կրթում-դաստիարակումի» ճանապարհով *աստիճանաբար* թուրքից ազատագրվելու փոխարեն *աստիճանաբար* իսպառ չոչնչանալու համար ընտրել էին զինված պայքարի ճանապարհը:

«Աստիճանաբար» բառը Օսմանյան կայսրության դեպքում կարելի է օգտագործել մեկ իմաստով՝ աստիճանաբար ոչնչացում, որին դարերի ընթացքում ենթարկվեցին բազմաթիվ ժողովուրդներ: Իսկ դարեր շարունակ հատուկ ծրագրով 10-15 տարին մեկ պարբերաբար իրականացվող ջարդերի ու բռնի իսլամացման քաղաքականությունն Աբդուլ Համիդի օրոք աննախադեպ դրսևորումներ ունեցավ. այդ շրջանում հայերը կոտորվում էին ոչ թե տասնյակ, այլ՝ հարյուր հազարներով: 1890-ականների նման ևս 2-3 կոտորած, և Արևմտյան Հայաստանում հայությունն իսպառ կբնաջնջվեր՝ առանց «ազգային կրթում-դաստիարակումի» ճանապարհով ազատագրվելու գաղափարն իսկ յուրացնելու: Կրթության դերը բոլորովին չնսեմացնելով՝ պետք է նշել, որ այն պետության մեջ և այն պայմաններում լուսավորության ճանապարհով «ազատագրումի» հասնելը նույնիսկ ուտոպիա չէր, այլ՝ ուղեղի մորմոք: Ողջ 19-րդ դարի հայ քաղաքական միտքը (Աբովյան, Նալբանդյան, Պատկանյան, Արծրունի, Ռաֆֆի, Ծերենց, Մուրացան, Խրիմյան, Փորթուգալյան, արմենականներ, հնչակյաններ, դաշնակցականներ և այլք) չգտավ այլ ճանապարհ, քան զինված ազգային-ազատագրական պայքարի գաղափարի շուրջ հայության համախմբումը, որին նախապատրաստվելու համար, ի թիվս այլոց, Դաշնակցությունն էլ կրթական-դպրոցական լայն ցանց ստեղծեց Արևմտյան Հայաստանում՝ իր գաղափարական-մտավորական բազմաթիվ գործիչների՝ սկսած Ռոստոմից ու Ս. Զավարյանից, որպես ուսուցիչներ գործուղելով երկիր: Ընդ որում՝ Դաշնակցությունը դպրոցներ բացեց ոչ միայն քաղաքներում ու մերձակա բնակավայրերում, այլև շրջանների լեռնային ամենահեռավոր գյուղերում: Բավական է հիշել Վասպուրականի ամենախուլ լեռնային գյուղերում Իշխանի դպրոցաշինական գործունեությունը: Նաև Դաշնակցության կրթական գործունեության շնորհիվ էր, որ արմենական-

ների բազմաթիվ ղեկավար ու մտավորական գործիչներ անդամագրվեցին Դաշնակցությանը՝ ընդհանուր համակարգի մեջ մտցնելով իրենց հիմնած դպրոցները: Եվ պատահական չէ, որ ժողովրդի մեջ Դաշնակցությունը հայտնի էր նաև որպես «վարժապետների կուսակցություն»՝ բառի դրական (ուսուցիչ) իմաստով:

Հաջորդ դատողությունները պակաս անհեթեթ չեն: Համոզվելու համար դարձյալ դիմենք հեղինակին. *«Մարքսիզմին մակերեսորեն անգամ ծանոթը չի կարող չնկատել, որ դաշնակցության ծրագրի այդ հիմնադրույթները մարքսիստական գաղափարներից արված մի պարզ արտագրություն են ընդամենը: Այդտեղ էլ ենք տեսնում նույն՝ հասարակությունը ըստ փոխբացառող դասակարգերի՝ իշխողների եւ իշխվողների բաժանումը. «տիրող անհավասարությունը հոգեւոր-գաղափարական ճանապարհներով վերացնելու, այդպես «եղբայրություն», «ազատություն» եւ «հավասարություն» հաստատելու համար մարդկության «ռեֆորմատորներից»՝ ուտոպիական վարդապետության քարոզիչներից դժգոհությունը. դասակարգային «կատաղի կռիվը». եւ դա կյանքի թե գաղափարական-հոգեւոր եւ թե, հատկապես, իրական-առարկայական ոլորտներում. պարզ է՝ նաեւ «այս աշխարհի քանդումի»՝ հեղափոխության եւ անդասակարգ հասարակության՝ սոցիալիզմի հաստատման, - հայի բնույթին ու աշխարհընկալումին խորթ գաղափարները»:*

Ուղղակի զարմանալ կարելի է: Եթե հասարակության մեջ գոյություն ունեն դասակարգեր, և դրանք օբյեկտիվորեն բաժանված են իշխողների և իշխվողների թե տնտեսության, թե քաղաքական իշխանության մեջ ունեցած դիրքով ու դերակատարությամբ, մի՞թե դա նկատելը և կուսակցության ծրագրում ամրագրելը հանցանք է: Բայց քանի որ Ս. Մ.-ն մարքսիզմից բացի ոչինչ չգիտի, չէր կարող երևակայել, որ հասարակական-քաղաքական միտքը թե մարքսիզմից շատ ու շատ առաջ, թե մարքսիզմի շրջանում, թե հետագայում միշտ էլ գիտակցել է դասակարգերի գոյությունն ու նրանց միջև հակասությունները, միշտ էլ ուղիներ է որոնել այդ հակասությունները վերացնելու (ուտոպիզմ) կամ մեղմելու (սոցիալիզմ) ուղղությամբ: Հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսին նոր ձևավորված կամ ձևավորվող բուրժուազիայի ու աշխատավորության միջև հակասություններն այնքան շատ էին ու ծայրահեղ, որ տեսաբաններին կամ քաղաքական կուսակցություններին մղում էին նույնքան ծայրահեղ դիրքորոշումների: Հետագայում՝ հասարակության զարգացմանը զուգահեռ, բազմաթիվ սրբագրումներ եղան:

Ինչ խոսք՝ մարդու շահագործումը վերացնելու, արդար աշխատանքի և սոցիալական արդարության հաստատման համար, ինչպես բազմաթիվ կուսակցություններ, Դաշնակցությունն էլ միշտ գաղափարախոսական որոնումների մեջ է եղել և իր փորձառության չափով, ազգային և միջազգային զարգացումների ավելի խորը ուսումնասիրությամբ ու յուրացմամբ իր ծրագիրն անընդհատ վերանայել ու կատարելագործել է: Տեսնենք, թե Դաշնակցության տեսության մեջ արդեն 1911թ. մարքսիզմն ինչպես էր արժևորվում. *«...մարքսիզմը en bloc եղաւ ջատագով պարերայնութեան, մարքսիզմը իբրև հասարակագիտական վարդապետութիւն, նսեմացրեց անհատի դերը, անգամ մեծ անհատների, ռեֆորմատորների դերը, նսեմացրեց... վերարելու չափ: Պատմութեան անիւը, ըստ մարքսիզմի, տանում է արդէն դէպի հաւասարութիւն ու եղբայրութիւն, իրերի ու երևոյթների էւոլիւցիան - տնտեսական ուժերի մղումով - գնում է արդէն և ճակատագրօրէն դէպի իդեալական կոմունիզմը, միանգամայն անկախ մարդկանցից, իդէոլոգիական, գաղափարական գործօններից...*

Այդ է մարքսեան թէորիայի ամենախոշոր և անդարմանելի վրիպումներից մինը:

Տարերայնութեան այդ հաւատամքը մենք դիտեցինք իբրև վտանգաւոր: Նա «վտանգաւոր» է տեսականապէս, քանի որ չի համապատասխանում պատմական իրականութեան, խեղաթիւրում, այլակերպում է այդ իրականութիւնը: Նա վտանգաւոր է և գործնականապէս, քանի որ տարերայնութեան այդ դօգմը յանախ կաշկանդում ու խաթարում է «հաւատացեալների» ճիգերը, նրանց կամքի ու ինիցիատիվ թռիչքները...»[1]:

Դաշնակցության համար, հատկապես ազգային-ազատագրական պայքարի շրջանում, տեսական այս խնդիրները, մանավանդ դրանց իրացման նրբությունները, միշտ էլ եղել են ապագային վերաբերող հարցեր: Կարևորն արդար հասարակության տեսլականն էր, որն այսօր էլ, ինչպես 120 տարի առաջ, Դաշնակցության ծրագրի առանցքային արժեքներից է: Որևէ կուսակցության մասին դատողություններ անելիս, բոլորովին չանտեսելով ծրագրային-վավերագրային կողմը, գնահատման

[1] Դրօշակ, Ժընև, 1911, թիւ 2, էջ 38:

առաջնային չափանիշ պետք է ընդունել կատարած գործը, այլապես կգնահատվի ոչ թե կուսակցությունը, այլ նրա վավերագրային բազան: Քանի որ Ս. Մ.-ն անընդհատ Մ. Վարանդյանի անունն է հոլովում իր գրության մեջ, մենք ևս դիմենք նրան. *«Չը նայած սոցիալիզմի գործնական կիրառման մի քանի մանրամասներին, որոնց վրայ մատնանիշ է արուած այդ ծրագրի մեջ,- սոցիալիզմը մնում է այդտեղ իբրև սոսկ սկզբունք, իբրև ղեկավարող հեռաւոր իդէալ: Եւ ինչպէ՞ս կը բարեհաճէիք սոցիալիստական պրոպագանդ սկսել, դասակարգային կռիւ մղել մի երկրի մէջ, ուր բրդի գնդակը խորհրդի չէր դնում հարստահարուածի և հարստահարողի միջև, ուր այնքա՜ն նսեմանում էր դասակարգերի անհաւասարութիւնը ջարդի և աւերածի մշտնջենական կօշմարի տակ...,-* գրում էր Մ. Վարանդյանը դեռևս 1906թ.,- *Նա (Դաշնակցությունը) իր առաջին օրերից սկսած՝ յայտարարեց իրան կենդանի գործի կուսակցություն, որի համար իւրաքանչիւր գործնական քայլը (երկիրը զինելու և յեղափոխականապէս պատրաստելու) աւելի կարևոր էր, քան տասնեակ ծրագրերի ու ֆորմուլների անկենդան բազմաժը»*[2]:

Այս իրավիճակը փոխելու գիտակցություն ու ազգային-քաղաքական կամք ունեցող Դաշնակցությունը *«...ցգտել է միշտ համախմբել հայութեան բոլոր կենսունակ տարրերը, առանց խտրութեան դասակարգի՝ հայ ժողովրդական այդ դապի շուրջը...»*[3], երբեք չի ընդունել հասարակությունը «փոխբացառող դասակարգերի» բաժանելու մարքս-լենինյան (կոմունիստական) աղետալի տեսությունը: Ավելորդ չէ նշելը, որ տնտեսական ծրագրի իրականացման, այն կյանքի ռեալ իրողություններով ճշտելու, վերանայելու կամ բարեփոխելու համար որևէ կուսակցություն նախ պետք է օժտված լինի քաղաքական իշխանությամբ կամ, առնվազն, սեփական պետության մեջ գործելու հնարավորություն ունենա, ինչը, բացառությամբ Առաջին Հանրապետության գոյության երկուսուկես ծանրագույն տարիների, այդպես էլ իրականություն չդարձավ ոչ մի հայ ազգային կուսակցության համար:

Դաշնակցության հիմնադրման ու նրա անվան (Հայ Յեղափոխական Դաշնակցություն) շուրջ մակերեսային դատողություններում գրում է, թե հայ բառը *«ընդամենը մի դեկորի դեր էր կատարում բառակապակցության մեջ եւ ոչ մի կերպ չէր ֆուլկում մյուս բառերի հետ»*: Իրականությունն այն է, որ հենց այս բառն է եղել Դաշնակցության թե Ծրագրի, թե գործունեության միտք բանին: Անվան մեջ կամ ծրագրում եթե ինչ-որ բան անգամ կարելի լինի դեկոր անվանել, ապա դա միանշանակ չի կարող վերաբերել ՀԱՅ բառին: Դարձյալ դիմենք Մ. Վարանդյանին. *«Գործնական ծրագիրը արդյունք է **հայ** կեանքի իրական պայմանների, այն ծայրայեղ ճնշման և անորակելի բռնակալութեան՝ որ վաղուց ի վեր թագաւորում է Օսմանեան Հայաստանում: Թէորական մասը ծնունդ է ոչ անմիջապէս հայ ժողովրդի կացութեան, այլ համաշխարհային կեանքի ու մտքի էւոլիւցիայի* (ընդգծումն իմն է- Հ. Ա.)»[4]: Եվ մի՞թե որևէ հայ կարող է պնդել հակառակը, որ Դաշնակցության բուն խնդիրը հայ ժողովրդի դատը չի եղել, մի՞թե որևէ մեկը կարող է ուրանալ հանուն այդ դատի հազարավոր նվիրյալների թափած արյունը՝ Արաբոյից, Սերոբ Աղբյուրից, Գևորգ Չաուշից, Անդրանիկից, Նժդեհից ու բազմաթիվ ֆիդայիներից մինչև Արամ Մանուկյան ու Սարդարապատի հերոսներ, մինչև արցախյան ազատամարտ:

20-րդ դարասկզբին, երբ դասակարգային հեղափոխության տենդով բռնկված Ռուսական կայսրությունում և հատկապես Բաքվում հայ երիտասարդությունը *«գահավէժ կը տարուէր ռուս և վրացի ընկերվարականներու դիւրին կարգախօսներով ու կամաց-կամաց կը պաղէր, կը հեռանար բուն ազգային շարժումներէն»*, Դաշնակցության հիմնադիրն ու առաջնորդը՝ Քրիստափոր Միքայելյանը, նրանց ասում էր. *«Դուք կը յափշտակուիք **մարքսեան աւեկտարանով** և գործադուլային անարիւն հեղափոխութեամբ, դուք կ՚ընթրուպանաք դրամատէրներու իւրացուցած աշխատաւորական յաւելեալ արժէքին դէմ, բայց մի՛ մոռանաք, որ անդին ամենէն ճնշուած ու պրոլետար ժողովուրդը կայ, որ ոչ միայն զրկուած է իր արդար վաստակի յաւելեալ արժէքէն, այլ և ամէն օր իր «յաւելեալ արիւնը» կուտայ թրքական նշտրակի հարուածներուն տակ... Մի մոռնաք բուն հայկական դատն ու շարժումը, որ կը կարօտի ձեր մշտարթուն ուշադրութեան ու աջակցութեան* (ընդգծումն իմն է- Հ. Ա.)»[5]:

---

[2] Վարանդեան Մ., Դաշնակցությունը և նրա հակառակորդները, Թիֆլիս, 1906, էջ 19:
[3] Նույնը, էջ 21:
[4] Նույնը, էջ 15:
[5] Վարանդեան Մ., ՀՅ Դաշնակցության պատմությունն, Պարիզ, 1932, էջ 324:

Քրիստափոր Միքայելյան

Եվ արդյո՞ք հայ իրականության մեջ կա մեկ այլ կուսակցություն, որը Հայ դատի լուծման համար արել է ավելին, քան Դաշնակցությունը: Բոլորովին այլ բան է, որ շատերն են աջից թե ձախից Դաշնակցությանը քննադատել իբր այսպես կամ այնպես չվարվելու համար, եղած ու չեղած մեղքեր բարդել նրա վրա, զրպարտել, վարկաբեկել: Նույնն արվում է նաև այսօր, ինչը դարձյալ ապացույց է այն բանի, որ Դաշնակցությունն այսօր էլ հետամուտ է իր բուն նպատակին:

Ի դեպ՝ հասկանալի է, թե ինչու են Դաշնակցությանը վարկաբեկում կամ հայ ժողովրդի թշնամի համարում թուրքերը, թաթարները (ադրբեջանցի), կոմունիստները՝ իրենց բոլոր տարատեսակներով՝ ներառյալ ՊԱԿ-ի ողջ համակարգը, հայ ժողովրդի այլ հայտնի ու քողարկված թշնամիները, բայց պարզ չէ, թե ինչու են որոշ հայեր հայտնվում նրանց շարքերում: Մի՞թե նպատակների ու գաղափարների ընդհանրության պատճառով: Ի վերջո հանրահայտ ճշմարտություն է, որ թշնամին միշտ հարվածել ու հարվածում է հակառակորդի ուժեղ կառույցներին կամ կենտրոններին՝ պետական կառույցին՝ թագավորական տներին ու իշխանությանը, ազնվականությանը, երկրի ղեկավարներին, ազգային-քաղաքական կուսակցություններին, եկեղեցուն, մտավոր ու գիտական կենտրոններին և այլն: Եվ հանրության նպատակն է առաջին հերթին պաշտպանել այդ կառույցները ու ոչ թե «ցեղահավատության» կամ այլ կասկածելի դիրքերից ջուր լցնել թշնամու ջրաղացին, եթե, իհարկե, չի ուզում ոչնչանալ կամ հաճոյանալ ու ստրկանալ թշնամուն:

Վերևում նշեցի, թե Ս. Մ.-ն որպես «գիտական» աղբյուր օգտագործում է միայն Լեոյի «մեմուարները»: Սակայն մեկ-մեկ նույնիսկ նրան չի հավատում, այլապես չէր գրի, թե Դաշնակցությունը ֆինանսավորվում էր մասոնների կողմից (բնականաբար՝ դարձյալ առանց որևէ փաստի), քանզի անգամ իր սիրելի Լեոն նշված գրքում նման բան չի գրել, բայց հակառակը գրել է, և՝ շատ: Ահա մի քանի նմուշ. *«Գործողը, հեղինակություն ստացողը Դաշնակցությունն էր: Մի քանի անգամ հրավիրեցին տեղական կոմիտեի նիստերին և տեսա, որ այդ հիմնարկությունն էլ լոկ դրամական հանգամանք ուներ, նույնպես իր ամսավճարները հասցնում էր Թիֆլիսի կենդրոնին»*[6]: *«Այս երևում է այն գումարներից, որ Դավթյանն ամեն ամիս մտցնում էր կոմիտեի դրամարկղը իբրև բանվորական վճարներ»*, *«Բայց չի կարելի ասել, թե Բագվի կոմիտեն, բացի ամսավճար հավաքելուց, ոչինչ չէր անում»*[7]: Ահա այս պարզ ու հասարակ հայ մարդիկ, որոնց *«խորքերի մեջ հեշտությամբ էին թափանցում ազգայնական գաղափարները»*[8], սիրով էին միջոցներ տրամադրում Դաշնակցությանը: Բայց *«Բռնի միջոցներով փող կորզելը եր էր շպրտել նրանից* (Դաշնակցությունից - Հ. Ա.) *բուրժուազիան»* (նկատի ունի «Փոթորիկ» գործողության շրջանը)[9]:

Պետք է ասել, որ «Փոթորիկ» գործողության ծրագրին ի սկզբանե դեմ էին Քր. Միքայելյանն ու բազմաթիվ առանցքային ղեկավարներ և գործիչներ: Սակայն քիչ չէին նաև այդ տեսակետի պաշտպանողները, քանզի հայ հարուստները, չնչին բացառություններով, անգամ կյանքի գնով, անգամ ցարական ոստիկանությանն ապավինելով, խուսափում էին զինյալ խմբեր կազմելու, հայ ժողովրդի անվտանգությունը թուրք և քուրդ հրոսակներից, ցարական Ռուսաստանում էլ՝ թաթարներից (հայ-

---

[6] Լեո, Անցյալից. հուշեր, թղթեր, դատումներ, Երևան, 1925 թ., էջ 100-101:
[7] Նույնը, էջ 101:
[8] Նույնը, էջ 100:
[9] Նույնը, էջ 132:

թաթարական ընդհարումների ժամանակ) ապահովելու, հրատարակչական, կրթական կամ ազգային որևէ հանրօգուտ գործի համար նվազագույն զոհողություն անել: Ի վերջո որոշվեց ծրագիրն իրականացնել: Պատասխանատվությունն ստանձնեց Քր. Միքայելյանը: Բայց գործողությունը երկար չտևեց և դադարեցվեց Դաշնակցության իսկ որոշմամբ, որովհետև մի քանի միջադեպեր ապացուցեցին Քր. Միքայելյանի և նրա կողմնակիցների մտավախությունների իրական լինելը:

Ս. Մ.-ն իր այս զրպարտությունով էլ նորություն չի բերում: Տեսնենք, թե Մ. Վարանդյանը 1906թ. ինչ է գրում այդ մասին, որը հաստատում է անգամ Լեոն. *«Եւ ճակատագրի մի շար հեգնութեամբ՝ արտաքին աշխարհում, մեր ոխերիմ, մեր արիւնարբու թշնամիների շրջաններում, Գոլիցինեան թոյնով վարակած ուղեղները հաւատում էին ու ծանուցանում, թէ հայկական կոմիտէները ստանում են իրենց ազգայիններից դրամական ահագին նպաստներ, թէ հայ բուրժուազիայի ու եկեղեցու հարստութիւնները գնում են քաղաքական պրոպագանդի համար...*

Մտէ՛ք դաշնակցութեան արխիւը կամ հետևեցէք «Դրօշակ»-ի մէջ ամենայն խնամքով արշանագրուած 15 տարուայ ելիրատութիւններին, - և դուք կը տեսնէք, որ յեղ. կուսակցութեան «հարստութիւնը» կազմուել է հայ ժողովրդի, գործաւորների, արհեստաւորների, գաղափարական երիտասարդութեան կօպեկներից: 15 տարուայ ընթացքում արշանագրուած է միմիայն մի հատիկ բախտաւոր դիպուած, երբ մի հայ հարուստ յօժարակամ, ինքնաբերաբար զոհաբերել է հայ ժողովրդի ազատութեան դատին 15000 ռուբլու չափ մի համեմատաբար խոշոր գումար»[10]:

Նորությունն այն է, որ եթե «մեր ոխերիմ, մեր արիւնարբու թշնամիները» մեկ դար առաջ այդ զրպարտությունները տարածում էին «արտաքին աշխարհում», այժմ դրանք տարածում են «ներքին աշխարհում»՝ իրենց հայ մանկլավիկների միջոցով:

Հավելենք, որ Դաշնակցության նյութական միջոցներով հետաքրքրվողներն իրենց հարցերի պատասխանները կգտնեն նաև Դաշնակցության արխիվային փաստաթղթերում, որոնց 5-րդ հատորը լույս տեսավ 2007թ. Բեյրութում՝ «Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար» վերնագրով, Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի, Ռոստոմի (Ստեփան Զորյան), Ռուբեն Տեր-Մինասյանի, Ռուբեն Դարբինյանի, Սիմոն Վրացյանի և բազմաթիվ այլ գործիչների աշխատություններում, նամակներում, փաստաթղթերում, հուշագրություններում և այլն:

Սիմոն Զավարյան

Այս խնդիրն ամփոփենք մի պարզ հարցադրմամբ. մասոնների կողմից ֆինանսավորվող կուսակցությունն ինչո՞ւ պետք է հայ բուրժուազիայից բռնությամբ կամ հարկադրանքով դրամ հավաքեր՝ նրան թշնամացնելով կամ հակադրելով իրեն:

Դաշնակցության ի՞նչ քննադատ, եթե սահմանված կարգով չանդրադառնար նաև Դաշնակցության ու երիտթուրքերի փոխհարաբերություններին: Հանրահայտ է և գիտական գրականության մեջ էլ բազմիցս փաստված, որ երիտթուրքերը Սալոնիկի մասոնական օթյակի անդամներ էին կամ լուրջ առնչություններ ունեին նրա հետ: Հեղինակն այս մասին խոսում է, թեև դարձյալ առանց փաստական հիմքի: Բայց նրան հետաքրքրողը բոլորովին էլ դա չէ, այլ այն, որ Դաշնակցությունը երիտթուրքերի հետ ուներ փոխհարաբերություններ, ինչը, ըստ Ս. Մ.-ի, Դաշնակցության ու մասոնականության միջև կապի ևս մի ապացույց է: Բայց մի՞թե նույն երկրում գործող քաղաքական կուսակցությունները, որոնք երկրի քաղաքական կյանքը ձևավորողներն ու ղեկավարողներն էին, կարող էին փոխհարաբերություններ չունենալ: Յուրաքանչ-

[10] Վարանդեան Մ., Դաշնակցութիւնը և նրա հակառակորդները, Թիֆլիս, 1906, էջ 58-59:

յուր կուսակցություն այդ գործընթացներում բնականաբար ձգտում է իրականացնել իր քաղաքական ծրագրերը՝ իր հնարավորությունների սահմաններում:

Սուլթան Համիդի գահընկեցությունը քաղաքական այն ծրագիրն էր, որ ընդհանուր էր Թուրքիայի բոլոր ստրկացված ժողովուրդների, սահմանադրական կարգերի ձգտող բոլոր կուսակցությունների համար՝ անկախ նրանից, թե քաղաքական վճիռը գաղտնի կերպով մասոններն էին կայացրել, թե ոչ: Իսկ հայության դահիճի համբավ ունեցող սուլթանի տապալումը հայ ժողովրդի և նրա քաղաքական որևէ կուսակցության համար բնականաբար պետք է ցանկալի և ողջունելի լիներ: Եվ մի՞թե հակառակ դեպքում ամբոխավար նույն մտայնությունը Դաշնակցությանը չպետք է մեղադրեր հայության դահճի իշխանության տապալմանը չմասնակցելու մեջ:Սուլթանի տապալումից հետո Դաշնակցությունը պատգամավորներ ունեցավ Թուրքիայի խորհրդարանում, այնպես, ինչպես ուներ նաև Ռուսաստանի խորհրդարանում: Եվ մի՞թե բնակչության մի ստվար հատվածը կազմող հայությունը պիտի հրաժարվեր երկրի կառավարմանը մասնակցելուց: Եվ ո՞վ էր այն մարգարեն կամ քաղաքական ուժը, որը գիտեր, թե երիտթուրքերն ինչ գաղտնի ծրագրեր ունեին և ինչ պիտի անեին մի քանի տարի անց: Անգամ խորհրդային պատմաբանները, որ երդվյալ հակադաշնակցականներ էին, լավ էին հասկացել ու գնահատել իրավիճակը. «*Համիդյան ռեժիմի տապալումը կապարվեց Թուրքիայի ընդդիմադիր ուժերի համատեղ ջանքերով: Դա մեծ խանդավառություն առաջ բերեց բոլոր ժողովուրդների, այդ թվում հայերի մեջ: **Բայց այդ երկար չտևեց** (ընդգծումը իմն է - Հ. Ա.): Իշխանության գլուխ անցած երիտասարդ թուրքերը շուտով հրաժարվեցին իրենց խոստումներից և սահմանադրություն հռչակած ազգերի հավասարության սկզբունքից...*»[11]:

Եթե Լեոն մի փոքր գիտական բարեխղճություն ունենար, ապա չէր փորձի պապից ավելի պապական լինել ու կեղծավոր զարմանք արտահայտել, որն էլ խթանել է Ս. Մ.-ի՝ տգիտությունից ծնված լկտի չարախնդությունը. «*Դրանից հետո սկսվեց երիտթուրքեր-դաշնակցություն մրցումությունը: Լեոն ծանոթանալով այդ օրերի՝ Կ. Պոլսի հայ մամուլի հետ՝ ի՞նչ տեսնի այնտեղ. «Հայ թուրքական եղբայրության ի՞նչ տեսարաններ: Կարծես թե իրականություն չէ այդ, այլ՝ հատվածներ «Հազար ու մի գիշերներից»*»:

Մարքս-լենինյան գաղափարախոսության արդի այս մուտանտը բնազդով հասկանում է իրավիճակը, բայց Դաշնակցությանը մեղադրելու սրբազան նպատակն է նրան առաջնորդում. և չի էլ հասկանում, թե ինչպես է հայտնվում զավեշտական հակասությունների մեջ. «*Դաշնակցության հովանավոր մասոնական ուժերը իրենց գերնպատակները քողարկելու համար **թույլ չէին տալիս, որ նա ճանաչեր երիտթուրքականությանը**, թույլ չէին տալիս, նա էլ չէր տեսնում, որ «նոր» թուրքական կարգը մասոնական վերին օթյակներին ի սպաս դրված մի ազգայնամոլական կարգ է, որ երիտթուրքը նույնիսկ Աբդուլ Համիդից ավելի թշնամի է ամեն մի առանձին ազգային շարժման, որ նա Աբդուլից ավելի հետևողականորեն է աշխատելու հայից օսմանցի ձուլել*»:

Ըստ հեղինակի՝ Դաշնակցությունը մեղավոր է, որ չի հասկացել գերգաղտնի մի ծրագրի էությունը: Տարօրինակ է, թե ինչպե՞ս էր հասկանալու, եթե այդքան քողարկված էր ու գաղտնի, իսկ ամենազոր մասոններն էլ ամեն կերպ խանգարում էին, «***թույլ չէին տալիս, որ նա ճանաչեր երիտթուրքականությանը***»: Բայց եթե այստեղ մի չհասկացող կա, դա, վստահաբար, Ս. Մ.-ն է, քանզի Դաշնակցությունը, ինչպես կհամոզվենք, դեռևս 1908 թ. էր հասկացել երիտթրքության էությունը: Սակայն հայ իրականությունը միայն դաշնակցականներից չէր բաղկացած. հայ քաղքենիության, բուրժուազիայի, առևտրականների, ամիրաների, աղաների, այլազան ու բազմազան ազատամիտների, կոմֆորմիստների, ապաքաղաքական տարրերի ու կոսմոպոլիտների, այլևայլ կուսակցությունների ու խմբավորումների հսկա զանգվածը, որ անգամ համիդյան ջարդերի օրոք էր վախվորած, հաշտվողական կամ կրավորական վարքագիծ դրսևորում, հռչակված ազատության ու սահմանադրության տարիներին դարձել էր դրության տերը: Սրանցից հարյուրավորները,որոնք ազգային-քաղաքական-հասարակական կյանքում ազդեցիկ դերակատարներ էին, նաև մասոնական օթյակների անդամներ էին: Նրանց անունները մի քանի անգամ հրապարակվել են թե սփյուռքի, թե Հայաստանի տարբեր թերթերում:

Ահա նման պայմաններում, երբ ազգային-հասարակական կյանքում այս զանգվածը ուներ

[11] Պարսամյան Վ. Ա., Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 425:

մեծ ազդեցություն, Դաշնակցությունը չհապաղեց խզել կապերը երիտթուրքերի հետ: Եվ իզուր է Ս. Մ.-ն զարմանում, թե՝ «*Ո՞վ կպատկերացներ, որ երիտթուրքերի նկատմամբ դաշնակների այս ջերմ սերը կարող էր փոխվել*»: Բայց, ըստ նրա «բացատրության», պատճառն այն էր, որ «*1912թ. պառլամենտական ընտրության արդյունքում դաշնակցությունը խոստացված 20 պատգամավորների փոխարեն միայն 12-ը ստացավ: Ստացվեց, որ բարեկամները խաբեցին բարեկամներին: Ասդինանաբար նրա մեջ սկսեց հին՝ դեպի Եվրոպա ու Ռուսաստան «սերերը» հիշվել: Նոր նա «տեսավ» «նոր» ու «ազատ» Թուրքիայի ինչ լինելը, նոր «զգաց», որ նոր իշխանությունը հնի ավելի վայրագ տեսակն է՝ «Թուրքիան միայն թուրքերի համար» տեսլականի ավելի բռի իրագործողը...*»:

Մի՞թե քիչ թե շատ բանականությամբ օժտված մարդը կարող է մտածել, որ 600-ից ավել անդամ ունեցող թուրքական պառլամենտում 20 տեղ ունենալն այնքան կարևոր մի հանգամանք էր, որ այն չապահովելու պատճառով Դաշնակցությունը խզեց կապերը երկրի տեր ու տիրական երիտթուրքերի հետ: Նման համոզմունքը լավագույն դեպքում կարելի է որակել որպես քաղաքական տհաստություն: Իրականությունն այն է, որ Թուրքիան թուրքացնելու ազգայնամոլական ծրագիրը, որ երիտթուրքերը խնամքով թաքցնում էին մյուս ժողովուրդներից ու նրանց քաղաքական ուժերից, 1912 թ. ընտրությունների ընթացքում ըստ էության բացահայտվեց: Դաշնակցությունը մինչ այդ՝ 1911 թ. ընդհանուր ժողովում ընդունած իր քաղաքական պահանջներով՝ ուղղված երիտթուրքական կառավարությանը, գործնականում խզել էր իր կապերը նրանց հետ: Տեսնենք, թե այդ մասին ինչ են գրում խորհրդային պատմաբանները, որոնց վերաբերմունքը Դաշնակցության նկատմամբ ոչ ոք բարյացական չի կարող համարել. «*Տեսնելով իթթիհատի այդ քաղաքականությունը, դաշնակցականները փորձեցին ճնշման միջոցով որոշ զիջումներ պոկել: Նրանք որոշեցին խզել բարեկամության ու համագործակցության հարաբերությունները երիտթուրքերի հետ և առաջին քայլը կատարեցին 1911 թ. սկզբներին... Երկրորդ քայլը կատարեցին 1912 թ. մայիսի 5-ին և այդ որոշումը վերջնականապես հաստատեցին 1913 թ. օգոստոսի 17-ին կուսակցության 7-րդ համագումարում: 1913 թ. «Դրոշակ»-ը իր առաջնորդողում արդեն գրում էր. «Յրենք վերջապես մահաբեր պատրանքը: Ժամանակն է նողկանքով երես դարձնենք թուրք պաշտոնական շողոքորթ ժպիտներից, որոնք ամենեն վտանգավոր դավերն եղան մեր ժողովրդի գոյության դեմ...*»:

Այնուհետև դաշնակցականները կազմակերպեցին հակակառավարական որոշ ելույթներ: Նրանք ստեղծեցին հայդուկային խմբեր, արտասահմանից ու կայսրության եվրոպական մասից զենք տեղափոխեցին Արևմտյան Հայաստան, ֆեդայական եղան ուժանակի արտադրությանը և 1913 թ. մարտի 31-ին Երզնկայում կատարեցին առաջին փորձերը»[12]:

Ավելացնենք, որ 1911 թ. պաշտոնական խզումից առաջ՝ դեռևս 1910 թ. օգոստոսի 28 - սեպտեմբերի 3-ին, Կոպենհագենում կայացած Սոցինտերնի 8-րդ կոնգրեսում Վարանդյանը իր ճառում ի լուր ամենքի հայտարարեց. «*Այո, անշուշտ, օսմանեան յեղափոխութիւնը տուել է հանրային իշխանութեան ղեկը տիրող, «նուաճող» ազգութեան ներկայացուցիչներին, որոնք լինելով հանդերձ փոքրամասնութիւն երկրի մէջ, ձգտում են - նման մաքառ շօվէնիներին և աւստրիական գերմանացիներին - բռնադատել իրենց հեգեմոնիային, գերիշխանութեանը միւս «նուաճած» ազգութիւնները - հայեր, յոյներ, բուլգարներ, արաբներ և այլն - որոնց դիտում են իբրև սոսկ կրօնական համայնքներ, և դա յիրաւի բացասական մի երևոյթ է*»[13]:

Բայց արդյո՞ք Դաշնակցությունը մինչ այդ էլ չգիտեր, թե ովքեր են երիտթուրքերը և ինչ ծրագրեր ունեն: Պարզվում է, ի հիասթափություն Ս. Մ.-ի, գիտեր և այդ մասին բարձրաձայնում էր դեռևս... 1908 թ.՝ երիտթուրքերի հետ առճակատումից երբեք չխուսափելով. ՀՅԴ օրգան «Դրոշակը» իր 1908 թ. սեպտ.-հոկտ. համարում, արծարծելով թե՝ «ՀՅԴ ներկայացուցիչների խորհրդի» ձևավորած «պահանջները» և թե՝ «Օսմանիայի միություն և հառաջադիմություն» կոմիտեի ծրագիրը, խորքային կերպով, վերլուծում է «Թուրքիայի ներքին կացություն»-ը, և հատկապես եզրակացնում. «*Անուրանալի է, որ երիտթուրքերի ծրագիրը ազգայնական է և այդպէս ալ կը սպասուէր: Անոնց ճիգն է, որ առաջիկայ խորհրդարանին մէջ, որքան կարելի է, թիւրք կամ միւսիւլման տարրը շատ ա-*

---

[12] Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 113-114:

[13] Դրօշակ, Ժընև, 1910, թիւ 7-9, էջ 84:

ւելի ֆայն ունենայ և անքակտելիօրէն դարբնէ երկրին «հիմնական օրէնք»-ը»[14]:

Ընտրական գործընթացներն ու դրանց արդյունքներն ընդամենը եկան փաստելու, որ Դաշնակցությունը միշտ էլ ճիշտ էր հասկացել գործընթացները և 1911 թ. ընդունել էր համապատասխան որոշում: Սակայն վերոնշյալ զանգվածը և մի շարք քաղաքական ուժեր չէին ուզում տեսնել իրականությունը, հակադրվում էին Դաշնակցությանը և շարունակում արդեն ակնհայտ վտանգավոր ուղին: Ասվածը փաստելու համար բերենք մեկ օրինակ՝ դարձյալ խորհրդային պատմաբանի հայտնի աշխատությունից, որը, ի դեպ, լոյալ էր տրամադրված Հնչակյան կուսակցության նկատմամբ. *«...հնչակյանների 1912թ. փետրվարի 10-ի շրջաբերականը կոչ էր անում աջակցել երիտթուրքերին»*[15]: Ավելացնենք, որ շրջաբերականը ուղղված էր ոչ միայն հայությանը, այլև կայսրության բոլոր ժողովուրդներին ու նրանց քաղաքական ուժերին: Փաստը խոսում է այն մասին, որ այդ շրջանում շատերի համար իսկապես դժվար էր հասկանալ երիտթուրքերի գաղտնի ծրագրերը ազգային հարցում: Բավական է նշել, որ արաբներին, որոնք *«...մեծ խանդավառությամբ ընդունեցին 1908թ. հեղափոխությունը և սահմանադրության հռչակումը,* - ինչպես գրում է խորհրդային պատմաբան Հ. Ս. Սարգսյանը, - *1915թ. սկզբներին Սուեզի ջրանցքի վրա թուրքական բանակի կատարած առաջին արշավանքի ֆիասկոն զգացնել տվեց իթթիհատականների իրական դիմագիծը»*: Այս արդեն բացահայտ իրողությունն էր, որ *«...ուժեղացրեց արաբ ղեկավարների անվստահությունը թուրքերի նկատմամբ և հանգեցրեց նրանց հարաբերությունների խզմանը իշխանությունների հետ...»*[16]:

Եթե Ս. Մ.-ն մի փոքր պատկերացում ունենար պատմական այս բարդ գործընթացների մասին և հասկանար, որ Դաշնակցությունը կայսրության միակ կուսակցությունն էր, որ այդքան շուտ հասկացավ երիտթուրքերի էությունն ու գաղտնի ծրագրերը, նաև կհասկանար, որ Դաշնակցությունը մասոնների կողմից ուղղորդվող կուսակցություն չէր, այլապես նա պիտի չկարողանար մասոնական հզոր օթյակների և նրանց կողմից կառավարվող երիտթուրքերի հետ կապը խզել հանուն հայ ազգի շահերի: Պատկերացում կազմելու համար, թե Դաշնակցությունը ինչպես էր թե երիտթուրքերի հետ հարաբերություններում, թե միջազգային տարբեր ատյաններում պաշտպանում հայության շահերն ու դրանք արտահայտող իր քաղաքական սկզբունքներն ու սկզբունքայնությունը, ներկայացնենք հետևյալ միջադեպը. Սոցիոնտերնի հիշատակված կոնգրեսում *«Պերևերսրօֆեր, գերմանաաւստրիացի սօց. Առաջնորդ եւ մէկը Ռայիսրատի (աւստր. Խորհրդարան) փոխ-նախագահներից, ճառերը վերջացնելուց յետոյ, դիմում է Վարանդեանին հարց ու փորձով Թիւրքիոյ կացութեան եւ մասնաւորապէս ազգային կնճռի վերաբերեալ եւ* ***զարմանք ու դժգոհութիւն*** (ընդգծումը իմն է - Հ. Ա.) *յայտնում, որ «Դաշնակցութեան» պատգամաւորը իր հրապարակային ճառի մէջ համեմատութիւն է դնում թիւրքական եւ գերման-աւստրիական շօվէնների միջեւ՝ ազգային գերիշխանութեան ձգտումների տեսակէտից: Երանի թե, ասում է, երիտասարդ թիւրք պօլիտիկոսները մեր աւստրիական գերմանների չափ միայն լինեին շօվէն, ազգայնամոլ...*

Հետեւում է վեճ **ազգային ինքնութեան** *ու նրա անհրաժեշտութեան մասին. «Ես ջերմ սօցիալիստ եմ, սիրելի բարեկամ, բայց եւ ջերմ ազգային ու հայրենասէր, -շեշտում է Պերևերսրօֆեր իր ուժեղ առոգանութեամբ: - Սօցիալիստ լինելով հանդերձ, ես երբէք չեմ մոռանում, որ պատկանում եմ գերմանական ազգին, բաժանում եմ նրա մտաւոր, կուլտուրական ժառանգութիւնը, բաժանում եմ նրա լաւ ու վատ առանձնայատկութիւնները»:*

- Այդ ինչ շատ լաւ յայտնի է, պատասխանում է Վ., ***եւ հայ սոցիալիստները միանգամայն համաձայն են ազգայնական այդ թէորիայի հետ*** (ընդգծումը իմն է - Հ. Ա.)»[17]: Ահա այս տեսությունն ու դրա իրականացումն է եղել Դաշնակցության 120-ամյա պատմությունը, ինչը պատվաբեր է որևէ ազգի համար:

Անշուշտ տարօրինակ կլիներ, եթե շրջանցվեր Ցեղասպանության հարցը: Ս. Մ.-ն թեև ամեն ջանք գործադրում է Դաշնակցությանը Հայոց ցեղասպանության մեջ մեղադրելու համար, բայց իրենից անկախ հայտնվում է հակասության մեջ: Տեսնենք, թե ինչեր է գրում. *«Եվրոպա-Ամերիկա-ասիական քաղաքական շարժերը, որոնք իրենց հիմքում ունեին թալանչիական շահեր հետապնդող մասոնա-*

---

[14] Դրօշակ, Ժընև, 1908, թիւ 9-10, էջ 140:

[15] Աղայան Ծ. Պ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 278:

[16] Սարգսյան Հ. Ս., Թուրքական փաստաթղթեր և նյութեր արաբա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ (1909-1918), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 9, Երևան, 1978, էջ 337:

[17] Դրօշակ, Ժընև, 1910, թիւ 7-9, էջ 84:

կան հրեշի սարքած խարդավանքներն ու դավադրությունները, պարածաշրջանը հրում էին դեպ մեծ ողբերգությունը՝ համաշխարհային պատերազմը»: Այսինքն՝ Դաշնակցությունը մեղավոր է, որ չի կարողացել հաղթել ողջ աշխարհի բախտը որոշող համաշխարհային «մասոնական հրեշին»: Բայց եթե հավատանք Ս. Մ.-ին, դա ուղղակի անհնար էր, որովհետև *«Թուրքահայաստանի եղերական բախտը որոշված էր: Նա պետք է մասոնական հրեշին կեր դառնար՝ նրա համար նորանոր ախորժակներ բացելու համար»*:

Սակայն մի այլ տեղ, մոռանալով այս մասին, հանկարծ հայության փրկության ելք է գտնում, ավելի ճիշտ՝ պարզվում է, որ ելքը գտել էր Դաշնակցությունը. *«Պատերազմը սկսվելուց օրեր առաջ դաշնակցականները Էրզրումում ընդհանուր ժողով են անում... Այդ դրամատիկ իրավիճակում Դաշնակցությունն իր պատմության ընթացքում երեւի եզակի ճիշտ քայլերից մեկն է անում: Ժողովը երիտթուրքական առաջարկի կապակցությամբ կայացնում է մի վճիռ, որը միակ արդար, ճշմարիտ ու տրամաբանական վճիռն էր միմյանց բախվող սալի ու կռանի մեջ գտնվող մի թույլ ազգի համար: Որոշվեց չընդունել երիտթուրքական առաջարկը եւ ծագող պատերազմում պահել չեզոքություն: Բայց հայության փրկությունը առաջիկա արհավիրքներում ապահովող այդ որոշումը մնաց թղթի վրա»*: Ի դեպ՝ շատերն են «մոռանում» այն փաստը, որ այդ նույն ժողովում Դաշնակցությունը երիտթուրքական կառավարության ներկայացուցչին խորհուրդ տվեց նույնպես չեզոք մնալ, քանի որ պատերազմը կկործաներ Օսմանյան կայսրությունը:

Ուշադրությո՛ւն դարձրեք, եթե մի տեղ համոզված է, որ *«Թուրքահայաստանի եղերական բախտը որոշված էր»*, այստեղ ինքն իրեն ժխտում է, որովհետև Դաշնակցությանը մեղադրելու փաստ է գտել. Դաշնակցությունն իր ճիշտ որոշումն իրագործել չկարողացավ: Եվ գիտեք ինչո՞ւ, որովհետև իր հոգևոր հոր՝ Լեոյի ավետարանը թերթելիս հանկարծ հանդիպել է հետևյալ մտքին, որից էլ կառչել է. *«Ես փաստեր շատ ունեմ պնդելու համար, որ այդ ոճրագործ որոշումը* (հօգուտ Ռուսաստանի չեզոքությունը խախտել - Հ. Ա.) *կայացել է ոչ միայն առանց բուն երկրի գիտության, այլեւ հակառակ նրա ցանկության: Ժողովուրդը Կ. Պոլսի եւ Թիֆլիսի պոռոտախոսներից շատ լավ էր հասկանում իր դրությունը եւ միայն մի բան էր ցանկանում, որ իրենց թույլ տրվի անցկացնել պատերազմական փոթորիկը, ինչպես ինքը կարող էր: Այսպես չեղավ դժբախտաբար: Այդ ժողովուրդը՝ անմեղ եւ անվնասու մի ամբոխ, «փրկիչներ» չափազանց շատ ուներ, եւ դրա հետեւանքով նրա համար փրկություն չէր մնում այլեւս»*:

Եթե բոլշևիկների պահանջով Դաշնակցությանն ամբողջությամբ սևացնելու պարտավորություն ստանձնած Լեոն Դաշնակցությանը համարում է այդ «չափազանց շատ փրկիչներից» ընդամենը մեկը, նրա առավել ուղղափառ աշակերտն այդպիսին համարում է միայն Դաշնակցությանը: Եվ որքան էլ Ս. Մ.-ն շահարկի Դաշնակցության երբեմնի համախոհ Լեոյի այս սին պնդումները, առավել իրատեսական ու համոզիչ է Դաշնակցության քաղաքական հակառակորդ, հայտնի բոլշևիկ գործիչ Ստ. Շահումյանը, որը 1916 թ. «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածում գրում է. *«Իհարկե, Դաշնակցությունը մեղավոր չէ, որ հայ ժողովրդի պատմական վիճակը անագորույն է. ոչ մի կուսակցություն չի կարող դժոխքը դրախտ դարձնել»*[18]:

Այս համապատկերում արտառոցն այն է, որ 1926 թ. (Լեոյի գրքի լույսընծայումից մեկ տարի անց) «Խորհրդային մեծ հանրագիտարանը» գրում է. *«Առանց դաշնակների ֆիդայական շարժման իսկ հալածանքները հայերի դեմ, այնուամենայնիվ, տեղի պիտի ունենային»*[19]: Ինչպես տեսնում ենք, անգամ բոլշևիկները, Դաշնակցության նկատմամբ իրենց բացահայտ թշնամանքով ու ժխտողականությամբ հանդերձ, անհերքելի իրողությունները ներկայացնում են առավել օբյեկտիվ կերպով: Այս տեսակետների հետ համաձայն չեն միայն թուրք պատմաբանները, Լեոն և նրա աշակերտները, որոնցից մեկն էլ Ս. Մ.-ն է: Դա էլ անուղղակի կերպով հաստատում է մեկ այլ խորհրդային պատմաբան. *«Թուրքական պատմագրությունն անհիմն պնդում է, թե իբր Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած շարժումները եղել են ցարական կառավարության կամ դաշնակցական կուսակցության բացահայտ ու գաղտնի գործունեության արդյունք: Փաստական հարուստ փվյալներով ցույց ենք տալիս, որ այդ շարժումները առաջացել են մեծ մասամբ տարերայնորեն՝ թուրք կառավարության հակաժողովրդական ու հայահա-*

[18] Շահումյան Ստ., Երկեր, հ. 2, Երևան,1957, էջ 408:

[19] Խորհրդային մեծ հանրագիտարան, Մոսկվա, 1926, հ. 3:

լած քաղաքականության հետևանքով»[20]:

Թուրք պատմաբանների և նրանց դաշնակից որոշ հայ «պատմաբանների» խնդիրը թողնելով մեկ այլ առիթի՝ վերադառնանք ընդհատված մըտքին: Չեզոքության հարցը նույնպես Դաշնակցության «քննադատների» կողմից շատ է շահարկվել: Եթե տվյալ որոշումը պատերազմի նախօրյակին քաղաքական կեցվածքի իմաստով ճիշտ էր, ապա պատերազմն սկսվելուց հետո չեզոքություն պահպանելը գործնականում անհնար էր: Երկու դարավոր թշնամի կայսրությունների արյունալի ընդհարման թատերաբեմն Արևմտյան Հայաստանն էր, և ինչպե՞ս էր *«միմյանց բախվող սալի ու կռանի մեջ գտնվող մի թույլ ազգ»* պահպանելու չեզոքություն: Ի դեպ՝ չեզոքությունը միայն ուժեղի վարքագիծ է և ոչ թե «մի թույլ ազգի». այն հնարավոր է և երաշխավորվում է միայն ուժով, քանզի չեզոքությունը նույնպես պիտի կարողանաս պարտադրել: Այլապես նման չեզոքությունից եթե ինչ-որ բան էլ փրկվեր, անխուսափելիորեն զոհ էր գնալու հաղթողի վրեժխնդրությանը: Իսկ այս երկու կայսրությունների կողմից հարցն ավելի արմատական էր դրված, քան պարզունակ վրեժխնդրությունը: Եթե, ինչպես ճիշտ հասկացել է Ս. Մ.-ն, երիտթուրքական իշխանությունը *«հնի ավելի վայրագ տեսակն է՝ «Թուրքիան միայն թուրքերի համար» տեսլականի ավելի բռի իրագործողը...»*, ապա, չգիտես ինչու, «մոռանում է», որ «Հայաստանն առանց հայերի» ծրագրի հեղինակն էլ Ռուսական կայսրությունն էր, որի երազած եփրատյան և տիգրիսյան կոզակությունների համար ստեղծվել էր աննախադեպ հնարավորություն:

Մյուս կողմից՝ ի՞նչ ուժ և ինչպե՞ս կարող էր կասեցնել Ռուսական կայսրության (և ընդհանրապես) հայության ոգևորությունը, որի բուն աղբյուրը հաղթանակից հետո Արևմտյան Հայաստանի վիլայեթների վրա անկախ Հայաստան ստեղծելու ցարական խոստումն էր համայն հայությանը: Նույնիսկ Ռուսաստանի խոստմանը պատմական ու քաղաքական փորձառությամբ չհավատացողները չէին համարձակվում լրջորեն առարկել՝ դավաճանության ու թուրքասիրության մեջ չմեղադրվելու համար: Ի վերջո՝ Թուրքիայի դեմ էին դուրս եկել նաև Անգլիան, Ֆրանսիան, Անտանտի մյուս դաշնակից պետությունները: Օսմանյան կայսրության մասնատումն ու կործանումն այնքա՞ն մոտ էր թվում բոլորին: Եվ ով մասնակից չէր հայության այդ դարավոր երազանքի իրականացմանը, թշնամին էր ոչ միայն հայ ժողովրդի, այլև՝ Ռուսական կայսրության: Դաշնակցությանն այլևս ոչինչ չէր մնում անել, քան, որպես հայության ամենակազմակերպված քաղաքական ու մարտական ուժ, անցնել «տարերայնորեն» սկիզբ առած կամավորական շարժման գլուխ: Այլապես դժվար է երևակայել, թե չկառավարվող (կամ այլ տեղից կառավարվող) այդ հզոր ալիքը ինչ վախճան էր ունենալու...

Կարևոր հարց է նաև, թե ինչ հարաբերության մեջ էին Օսմանյան կայսրությունն ու Ցարական Ռուսաստանը պատերազմի ընթացքում, և ինչպիսին էին դրանք պատերազմից հետո: Եթե Օսմանյան կայսրության մասնատման ու անկախ Հայաստանի ստեղծման կանխատեսումներն ինչ-ինչ առարկայական հիմքեր ունեին, ապա ամենամարգարեաշունչ տեսաբաններն ու քաղաքական ուժերն անգամ չէին կարող երևակայել, որ անհաշտ պատերազմի ելած երկու կայսրությունների ավերակների վրա ստեղծված քեմալական Թուրքիան և համայնավար Ռուսաստանը պատերազմը կավարտեն որպես դաշնակիցներ՝ ընդդեմ Անտանտի, իսկ կայսրությունից մնացած արդի Թուրքիան գործադրման փուլում գտնվող վերջնական մասնատումից կփրկվեր Լենինի և Քեմալի «եղբայրական» դաշնագրով:

Մեկ-երկու խոսք էլ՝ եզրակացության մասին: Պարզվում է, որ մատուցած ծառայությունների դիմաց մասոնները որոշում են վարձահատույց լինել Դաշնակցությանը. *«Բայց վարձահատույց՝ ամենաժլատ կերպով. Հայաստանի մի փոքր հատվածին անկախություն տրվեց,- «անկախություն» դաշնակցական իշխանությամբ»*: Դուրս է գալիս, որ հայ ժողովուրդը մարդկային, ազգային, բարոյական, ռազմաքաղաքական, քաղաքակրթական որևէ արժեք չի կրում, անգամ անկախությունը նրան նվիրել են՝ իր քաղաքական ուժի (կամ ուժերի) դավաճանության կամ ծառայամտության համար: Եվ հասկանալի է, որ նման ժողովրդի ոչ միայն պատմությունն ու անցյալն է արհամարհելի, այլև ապագան է անորոշ ու հիմնազուրկ: Իսկ հայ ժողովրդի գոնե 1915-ից ի վեր մղած հերոսամարտերը աշխարհի ամենավայրագ կայսրության դեմ Ուրֆայում, Զեյթունում, Մուսա լեռան վրա, Շատախում, Տարոնում, Վանում, վերջապես՝ Սարդարա-

[20] Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 8:

պատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում և այլուր թատերականացված ներկայացումներ էին կամ չեն եղել: Դուրս է գալիս, որ հայ ժողովրդի այդ շրջանի պատմությունը մասոնական հորինվածք է, բեմախաղ՝ զոհաբերվող իրական ժողովրդով, որի նպատակը Հայաստանի մի հողակտորի վրա Դաշնակցությանը իշխանություն տալն էր: Եվ հետաքրքիր է, որ, ըստ այս մտայնության, երիտթուրքերն ու մասոնները Հայաստանին՝ անկախություն, իսկ Դաշնակցությանը իշխանություն տվեցին այն բանի համար, որ վերջինիս կազմակերպմամբ ու առաջնորդությամբ հայ ժողովուրդը Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում ի չիք դարձրեց Հայաստանն ու հայությունը վերջնականապես բնաջնջելու երիտթուրքական ծրագիրը: Ինչպիսի՜ հզոր տրամաբանություն: Բայց մի՞թե նույն բանը չի անում թուրք-ադրբեջանական քարոզչությունը՝ հայ ժողովրդի արցախյան հաղթանակը վերագրելով օտարներին:

Ահա թե ի՜նչ են քարոզում Լեոյի աշակերտներ Ս. Մ.-ն և նրա նմանները, որոնց մտայնությունը շատ ավելի վտանգավոր է, քան հակադաշնակցական մոլուցքը:

* * *

Մի թռուցիկ ակնարկ էլ՝ հեղինակին այնքա՜ն գլխացավանք պատճառած մասոնականության մասին: Նա համոզված է, որ *«...մասոնականությունը (ֆրանկմասոնականությունը, հայերեն՝ ազատ որմնադրությունը), որ երեւան գալուց ի վեր ինչ եղեռններ ասես չի արել, նախասկզբնապես առաջացել է 18-րդ դարում Անգլիայում»*: Մասոնների ծննդյան թվականը 18-րդ դարից սկսելը մի մեծ թյուրիմացություն է, անտեղյակության հետևանք (մահվանը հայտնի է միայն հեթանոս աստվածներին ու Ս. Մ.-ին): Մասոնների՝ տարածում գտած պատմության մեջ իսկապես նշվում է 18-րդ դարը, երբ Անգլիայում խեղճ ու անպաշտպան որմնադիրներն ու քարագործ բանվորները ստեղծում են իրենց շահերը պաշտպանող համքարություններ՝ միություններ, որոնք, իբր, աստիճանաբար հզորանում և վերաճում են հայտնի օթյակների: Զարմանալի է. այս խայծը կուլ տված մարդը ինչպե՞ս է գրում, թե *«Երեւան գալով ու արագընթաց տարածվելով (մասոնականությունը միջնադարից ժառանգած հսկայական տնտեսական, մշակութային ու կրթական ռեսուրսներ ուներ)՝ մասոնականությունը իր գերիշխանության տակ վերցրեց Ամերիկա-Եվրոպա-ասիական մշակույթի, կրթության, քաղաքականության, տնտեսության զգալի մասը: Ազնվականներից շատ-շատերը (մշակութային գործիչներ, փիլիսոփաներ, գիտնականներ...) անգամ ընկան դրա թակարդը»*: Այդ ի՞նչ հասարակ որմնադիրներ էին, որոնք *«միջնադարից ժառանգած հսկայական տնտեսական, մշակութային ու կրթական ռեսուրսներ»* ունեին, և ումի՞ց էին ժառանգել. իրենց որմնադիր պապերից ու հայրերի՞ց: Ի՞նչ հրաշքով այդ կառույցը արագ տարածվեց և *«իր գերիշխանության տակ վերցրեց Ամերիկա-Եվրոպա-ասիական մշակույթի, կրթության, քաղաքականության, տնտեսության զգալի մասը»*, գիտական-մշակութային գործիչների ու ազնվականության հսկայական զանգվածներ: Պարզվում է՝ Ս. Մ.-ն մասոնության մասին կարդացել է միայն այն գրքերը կամ դրանցից մի քանիսը (ինչն ավելի հավանական է), որ մատուցում են մասոն հեղինակները՝ մի քիչ իրենց ներկայությունը զգացնել տալու (հո չի՞ կարելի գործել ժողովուրդների բացարձակ անտեղյակության պայմաններում. նույնիսկ Աստված իր գոյության մասին տարբեր ձևերով տեղյակ պահեց, իսկ մասոնները հո Աստծուց էլ վեր չե՞ն), մի քիչ վախեցնելու, մի քիչ խուճապային (իմա՝ կառավարելի) վիճակ ստեղծելու, իսկ ամենակարևորը՝ իրենց բուն ծագումնաբանության, գաղափարաբանության, ծրագրերի և տարիքի հարցերում մի քիչ (առնվազն 3000 տարով) ապակողմնորոշելու նպատակով:

Առանց մեր հեթանոս տեսաբանի կրոնական զգացմունքները վիրավորելու մտադրության՝ այստեղ պետք է դիմեմ Աստվածաշունչ մատյանին, որում պահպանվում են մասոնության մասին առաջին վկայությունները.

- *«Այն քարը, որ* ***շինողները*** *անարգեցին, Անկիւնին գլուխը եղաւ»* (Սաղ.118, 22):

- *«Այս գիրքը չէ՞ք կարդացեր, թէ Այն քարը, որ* ***շինողները*** *անարգեցին, անիկա անկիւնին գլուխը եղաւ»* (Մրկ., 12, 10):

Բազմաթիվ վկայություններից բավարարվենք այս երկուսով. մեկը՝ Հին, մյուսը՝ Նոր Կտակարանից: Առաջինի հեղինակը Ք.ա. 11-րդ դ. Իսրայելի թագավոր Դավիթն է, որը, հրեա լինելով հանդերձ (ի հիասթափություն Ս. Մ.-ի), զգուշացնում է մասոնական վտանգից, երկրորդը Հիսուս Քրիստոսի խոսքն է՝ ուղղված իր աշակերտներին: Այս խոսքերը պիտք է որ խիստ զարմացնեին Ս. Մ.-ին, եթե նա մեկ անգամ գոնե կարդացած լիներ Աստվածաշունչը: Այդ դեպքում նաև պարզաբանելու հարկ չէր լինի, որ

«շինողները» ***տաճարի*** որմնադիրներն են, ***տաճար***, որը մեկ կենտրոնով կառավարվող ***նոր աշխարհի*** խորհրդանիշն է՝ գլոբալ աշխարհը: Եվս մեկ մեջբերում Նոր Կտակարանից. *«Յիսուս ասեաց* (աշակերտներին - Հ. Ա.) ըսաւ. *«Նայեցէք ու զգուշացէք փարիսեցիներու ու սադուկեցիներու խմորէն»* (Մտթ., 16, 6): Եվ երբ աշակերտները չեն հասկանում, բացատրում է. *«Ինչպէ՞ս չէք հասկնար թէ ես հացի համար չըսի ձեզի փարիսեցիներու եւ սադուկեցիներու խմորէն զգոյշ կենալ»*: *Այն ատեն հասկցան թէ հացի խմորէն զգուշանալ չըսաւ, հապա փարիսեցիներու ու սադուկեցիներու վարդապետութիւնէն* (Մտթ., 16, 11-12):

Ահա այս «շինողներն» էին (որմնադիրները), որոնք քրիստոնյա Եվրոպայում ազատ գործելու համար նախ պետք է ***արտաքնապես***՝ քրիստոնյա ազգերի աչքում «ազատվեին» հրեաների միջավայրում դեռևս Դավթի ժամանակներում և դրանից էլ առաջ գործող սադուկեցիների և փարիսեցիների կրոնաքաղաքական կուսակցությունների հետ իրենց պատմական կազմակերպական, հոգևոր, գաղափարական- քաղաքական սնուցող պորտալարից, բայց ոչ՝ *«ժառանգած հսկայական տնտեսական, մշակութային ու կրթական ռեսուրսներից»*, որոնց շնորհիվ էլ արագ տարածվեցին ողջ աշխարհում: Եվ որպեսզի չխաթարվի իրենց պատմության նկատմամբ *ժառանգորդության իրավունքի վավերականությունը* նաև անվան տեսակետից, *տաճարի շինողները* ստեղծեցին իրենց պատմական անվանը քաղաքացիություն և ազատ կերպով օգտագործվելու հնարավորություն տվող *Ազատ որմնադիրներ* անվամբ այդ պարզունակ կառույցները: Ու քանի որ քրիստոնյա ազգերի մեջ իրենք էին անազատ, իրենք էին անհավասար, և իրենք չէին քրիստոնյաների եղբայրը, ասպարեզ նետեցին խիստ քրիստոնեական էությամբ կարգախոսը՝ «Ազատություն, հավասարություն, եղբայրություն»: Մասոնների ***«եղբայր»*** դիմելաձևը (և ոչ՝ ***«ընկեր»***, ինչպես «թյուրիմացաբար» կարծում է հեղինակը) ծնվեց այս «եղբայրությունից»: Մարդկանց անկյունաքարից զուրկ իրենց տաճարի ***ազատ որմնադիրները*** (իրապես՝ ստրուկները) դարձնելու համար «եղբայրները» փորձում են նրանց ազատել (օտարել) բոլոր ժամանակների վեհ գաղափարներից (հայրենիք, ազգ, հավատ, ընտանիք, սեր, ինքնազոհաբերություն, ազատություն, հավասարություն, եղբայրություն, արդարություն, ընկերվարություն, ժողովրդավարություն, վստահություն և այլն), այսինքն՝ այն ամենից, ինչ աստվածային է, այսինքն՝

MS 233/1
Bible: Gospels; in Armenian. Eastern Turkey, 1435-1435

մարդու մեջ ապրող Աստված է, այսինքն՝ ***անկյունաքարն է***:

Այսքանից հետո հարկ է իմանալ, թե ովքե՞ր էին սադուկեցիներն ու փարիսեցիները: Նրանք թեև տարբեր կրոնական-գաղափարական աղանդներ կամ հոսանքներ էին, բայց միասնաբար նյութեցին Քրիստոսի մահը՝ ***հրաժարվեցին անկյունաքարից***: ***Սադուկեցի*** բառը ծագել է հին եբրայերեն ***սադոկ*** բառից, որ նշանակում է արդար, իսկ փարիսեցին՝ հին եբրայերեն ***բարազ*** բառից, որ նշանակում է ***բաժանված, զտված***: (տե՛ս Բառարան սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881):

Մեկ կողմում զտվածները, ընտրյալներն են, մյուս կողմում՝ արդարները, արդարակյացները, որոնց վարդապետությունները (խմորը) նրանց կրողների նոր՝ ***ազատ որմնադիրի*** պատյանով վերածնունդից հետո (18-րդ դար) իրենց զարգացման հասուն փուլում մարդկությանը հայտնի դարձան իդեալիզմ (փարիսեցիներ՝ զտված, ընտրյալ գաղափարապաշտներ) և մատերիալիզմ (նյութական կյանքում արդարություն հետապնդողներ) անունը կրող քաղաքական-փիլիսոփայական ճամբարներով: Սրանց առնվազն 3000 տարվա հակամարտությունը 20-րդ դարում նշանավորվեց կապիտալիստական և կոմունիստական (երկուսն էլ ըստ իրենց պատկերի ու նմանության այլասերված) ճամբարների գաղափարական ու ռազմաքաղաքական աննախադեպ բախումով: Փլուզվեց տաճարը, (այլ կերպ՝ երկրորդ Բաբելոնի աշտարակը - *Բաբելոնը* թարգմանվում է *խառնակություն*, տե՛ս

Գարեգին Նժդեհ

Բառարան սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881), քանզի չկար հիմքն ամուր պահող անկյունաքարը, իսկ այն կարող է լինել միայն մեկ դեպքում՝ երբ հենվում ես նրա վրա և ոչ թե ինքդ ես ուզում դառնալ անկյունաքար:

Սակայն այս փլուզումով էլ դեռ ամեն ինչ չի ավարտվել: Զորակոչվում են նորանոր ուժեր, որոնք օրհասական ու վերջին ճիգերով նորանոր պառակտումներ ու խառնակություններ են սերմանում ազգերի ու պետությունների մեջ՝ կրոնաքաղաքական այլատարազ, բայց միական աղանդների գաղափարների գլոբալ քարոզչությամբ: Ցավոք, ինչպես տեսնում ենք, Հայաստանում էլ ***այդ խմորը*** դեռ ջուր ունի քաշելիք:

* * *

Հ.Գ. - Ավելորդ չի լինի ծանոթանալ Դաշնակցության ու ցեղակրոնության մասին նաև ցեղակրոնության մեծ գաղափարախոս, Դաշնակցության հանձնարարությամբ ու անմիջական աջակցությամբ ցեղակրոն ուխտը հիմնադրած (հետագայում այն վերանվանվեց Հայ երիտասարդաց դաշնակցություն) Գարեգին Նժդեհի մտքերից մի քանիսին:

«Դարեր շարունակ փառքի ճանապարհից դուրս մղված մի ժողովրդի վերածնության ճիգերի խրացումն է Դաշնակցությունը »[21]*:*

«Դաշնակցությունը - դա քաղցր ու նուիրական դաշնակցություն է ցեղի եւ ժողովրդի միջեւ:

Դա ցեղի դրո՛շմն է՝ դրված ժամանակակից հայութեան էութեան վրայ: Ցեղի ուղղութիւն է Դաշնակցությունը, որի միջոցով ցեղն իր պատասխանատուութեան ենթարկելով ժողովուրդը, այդ վերջինը իր գիտակցութեան, ուժի եւ արժէքի լրումին կը մղէ»[22]*:*

«Ի՞նչ է Դաշնակցությունը:

- Հայ ցեղի մշտենջենաւորման նախամտածողութիւնը, նրա յաւիտենական տրբութիւնը, նրա ինքնահզօրացման, ինքնապաշտպանման եւ լիարժէքաւորելու ճի՛գն է Դաշնակցությունը:

- Ցեղերի ստեղծագործ ոգին անցումներ ունի դէպի գոյութեան բարձր ձեւերը: Դաշնակցությունը հէնց այդ անցումն է մեր նորագոյն պատմութեան մէջ»[23]*:*

«Ցեղակրօնը, որի նշանաբանն է - աւելի՛, էլ աւելի զօրութիւն - պաշտամունք ունի իր ցեղի մարտական ոյժի, իմա՛ ՀՅ Դաշնակցութեան հանդէպ»[24]*:*

---

[21] Նժդեհ Գ., Ցեղի ոգու շարժը, Սոֆիա, 1932:

[22] Նույնը:

[23] Նժդեհ Գ., Ամերիկահայությունը - Ցեղը եւ իր տականքը, Սոֆիա, 1935:

[24] Նույնը:

Խալիլ բեյի կոտիկները

1918-ի ամռան վերջին, երբ արդեն գրավված էր Ալեքսանդրապոլը եւ ավարտված էին Ղարաքիլիսայի, Բաշ-Աբարանի, Սարդարապատի կռիվները, թշվառ, մահամերձ փախստականներով լեցուն, անկախություն հռչակած Հայաստանը մի թզաչափ տարածք էր՝ բոլոր կողմերից փակ դարպասներով: Ոչ մի կապ արտաքին աշխարհի հետ: Նույնիսկ ռադիոյի ձայնը չէր հասնում աշխարհին: Թույլ էր: Երկաթգծի երկարությունն էլ ընդամենը Երեւանից մինչ Ուլուխանլու կիսակայարանն էր: Եվ, ուրեմն, նորակազմ կառավարությունը Արտաքին գործոց նախարարության անհրաժեշտությունն էլ չուներ, բայց դե պետություն էր, պիտի ունենար...

Ահա այս օրերին էր, որ Ալեքսանդրապոլում հաղթականորեն բազմած Խալիլ բեյը ցանկացավ այցելել Երեւան: Թիֆլիսից նրան են միանում Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Կրեսը եւ Ավստրիայինը՝ Ֆանկելշտեյնը: Երեւանի կայարանում նրանց դիմավորում է Արամը:

«Եվ, ահա,- հիշում է Վահան Նավասարդյանը,- երբ գնացքը կանգ առավ, Արամն իր հայացքը նետեց դեպի աջ ու դեպի ձախ եւ գնացքի առաջ ձգված ծայրի վագոնում նշմարեց Խալիլի դեմքը: Վճռական շարժումով նա իր քայլվածքը դեպի այն կողմը ուղղեց: Խալիլը նկատելով Արամին, դյուրաշարժ երի-

տասարդի նման անմիջապես ցատկեց վագոնից, ընդառաջ եկավ նրան եւ երկուսն էլ ժպտադեմ, ջերմորեն ու բարեկամաբար իրար ձեռք թոթվեցին եւ... համբուրվեցին»:

Հետո Արամը ընկերներին պիտի ասի. «Այո, այս ժողովրդի փրկության համար համբուրեցինք մինչեւ իսկ Խալիլին»:

Սա այն Խալիլն էր, որ Կարինում, մոլեռանդ ամբոխին գրգռելու նպատակով ճարտասանել էր. «Իսլամներ, դեպի մարգարեի դրոշը: Խաչն ուզում է գետնին հավասարացնել մահմեդականությունը: Մենք մեր պայքարի վերջին փուլի մեջ ենք՝ կամ կընկնենք, կամ կբարձրանանք: Սուրբ մարգարեն երբեք չի ների մեզ, եթե մենք թողնենք, որ մեզ հանձնված դրոշը գետին կամ՝ քրիստոնյաների ձեռքը ընկնի: Մեր դարավոր ստրուկ հայերը մեր դեմն են ելել եւ կուզեն մեզ ստրկացնել: Թո՞ւյլ տանք: Ոչ եւ երբեք: Ես կերթամ գյավուր հայոց դեմ սուրբ մարգարեի դրոշը ձեռքիս: Ով պատրաստ է մեր կրոնին ծառայել, թող ինձ հետեւի: Զինվորներ եւ հարազատ իսլամներ, երկնքի հուրիները ձեզ են սպասում ակնդետ: Հայ կույսերն արդեն ձերն են...»:

Սա այն Խալիլն էր, որ Դիլմանի ճակատամարտում փախել էր խուճապահար: Եվ, հիմա, Երեւանում, հաղթանակած այս Խալիլը Արամին խնդրում է ուղեկցել իրեն զորավար Նազարբեկյանի տուն՝ հարգանքի տուրք մատուցելու:

«Տեսնես ի՞նչ կա սրա ատամի տակ»,- մտածում է Արամը:

Պարտված ու ծեր զորավար Նազարբեկյանը հյուրերին ընդունում է զինվորական համազգեստով, կրծքին՝ Գեորգյան Սպիտակ Խաչը՝ ռուսական բանակի ամենաբարձր շքանշանը:

«Այս խաչը,- ասում է Արամը Խալիլին,- տրված է Դիլմանի տակ քեզ փառավորապես փախուստի մատնելու համար»: Եվ ասում է ոչ այնքան Խալիլին խայթելու, որքան ծեր ու պարտված զորավարին հուսադրելու համար: Եվ Խալիլը բաց է թողնում ատամի տակ պահածը: Հարգանքի տուրք մատուցելու պատրվակով նա եկել էր Նազարբեկյանի հաղթանակը արժեզրկելու:

«Ինձ հետ կռվող զորքը,- ասում է Խալիլը,- գիտե, որ Խալիլն իր հետ միշտ մի քանի զույգ կոշիկ պիտի ունենա, այն էլ՝ ոչ սովորական, զինվորական: Դիլմանի ջարդի օրը ես շատ լավ ճաշ ունեի պատրաստած. մի քանի տեսակ փլավ եւ իմ սիրած խորտիկները: Կոշիկներս հանած հանգստանում էի եւ սպասում ճաշին, երբ հանկարծ խուճապ ընկավ իմ սպայակույտի մեջ: Միանգամայն անսպասելի էր ռուսական զորքերի հարձակումը, մանավանդ՝ մեր շրջապատված լինելը: Վայրկենապես խուճապն այնպիսի կերպարանք ստացավ, որ ես, իմ սպաների ստիպման տակ, հարկադրված եղա իսկույն ոտքի ելնել, ձի առնել ու փախուստի ճամփան բռնել: Իսկ որ ամենից հետաքրքրականն է, ժամանակ չունեցա ոչ կոշիկ հագնելու եւ ոչ էլ կոշիկներս առնելու: Այս լուրը հասավ նահանջող զորքին. «Քանի որ Խալիլն առանց կոշիկի է փախչում, ուրեմն, մեր վիճակը հուսահատական է»,- եզրակացնում է զորքս եւ խուճապահար փախչում»:

Քահ-քահ ծիծաղելով պատմում է Խալիլը այս դիպվածը եւ թոթվում պարտված հայ զորավարի ձեռքը:

Այս եղելությանը, տեսնես, տեղյա՞կ է մեր այսօրվա Արտաքին գործերի նախարարությունը, որը հիմա, բարեբախտաբար, թե դեսպաններ ունի աշխարհի շատ երկրներում, թե բազմատեսակ կապեր, հաղորդակցության ժամանակակից միջոցներ, եւ, տեսնես, գիտե՞, որ թուրքի շողոմ բառերն ու հարգալից վարվեցողությունը ընդամենը քող են, շղարշ՝ իբր թաքցնելու «ատամի տակ» եղածը:

Ռուբեն Հովսեփյան

ԴՐՈՇԱԿ
100 տարի առաջ

№ 2 (210) XX ՏԱՐԻ ՓԵՏՐՎԱՐ 1910

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՌՈՒՍԻԱ. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՈՒԱԾԸ

Սահացու հարուածն իջաւ... Ֆինլանդիայի ավտոնոմիան (ինքնօրինութիւնը) նորէն թաղուեց օգոստոսափառ երդմնազանցի ձեռքերով...

Քանի՞երորդ անգամը... Եւ դժբախտ երկիրը համբերում է:

1905-ի ազատութեան օրերից ի վեր՝ այդ փոքրիկ հայրենիքը դարձել էր մի Շվէյցարիա... Աղասան ամեն տեսակ յեղափոխականների ու մի զորեղ միջնաբերդ այն հոսանքի ու կուսակցության, որ ամենից ատելի է ռուսական կամարիլլային - միջնաբերդ սոցիալիզմի: Սոցիալիզմը՝ դաշնակցած ֆեմինիզմի հետ: Ֆինն պարլամենտի ամենասուր հատուածը սոցիալիստական կուսակցութիւնն է, որի շարքերում 7-8 կին պատգամաւորներ:

Հասկանալի է, մի այդպիսի պարլամենտ հեշտությամբ չէր ճկի իր պարանոցը բռնութեան առաջ: Նա դիմադրեց Պետերբուրգի ամեն մի հրամանին ու հրահանգին՝ քաղաքավարի, բայց վճռական - ՈՉ:

Աշխարհը գիտէ, որ չարաշուք մի դաւ է նիւթում Ֆինլանդիայի դէմ, այնուամենայնիւ դժուարանում էր հաւատալ, որ այնքան արկածալի փորձութիւններից յետոյ՝ ռուս կառավարութիւնը այն աստիճան հեռու չէր գնա, որ մէկէն ի մէկ վերջացնէ Ֆինլանդիայի ինքնօրինութիւնը:

Եւ սակայն, փաստը աչքներիս առաջ է: Ցարի մի նոր «մանիֆէստը» հրապարակի վրա: Այն միջոցին, երբ «հազար լճերի հայրենիքը» տօնում էր զատկի տօները,- նրա վրայից անցաւ յանկարծ այդ երդմնադրուժ մանիֆէստի աղէտաբեր շանթը, որ մահաղողանջն էր ֆինլանդական ազատութեան...

Անսովոր զգաւոք յարուցեց այդ նոր մանիֆէստը եւրոպական մեծ մամուլի մէջ: Միանգամայն անսովոր տոն են գործածում՝ անգամ այնպիսի խոշոր օրգաններ, որոնք իրենց խոշորութեան զօրութեամբ իսկ՝ հարկադրուած են միշտ չափաւոր ու փափկանկատ լինել՝ նոյնիսկ հանդէպ ցարիզմի: Աչքեցուցիչ բան է՝ կարդալ «Frankfurter Zeitung»-ի մէջ «արիւնոտ Նիկոլա» և նման քաղցրանուշ որակումներ: Իսկ ամենից արտառոցը պարիզեան «Temps»-ի բռնած դիրքն է: Նշաւակելով հանդերձ Ֆինլանդիայի դէմ նիւթած նոր դաւը, նա միաժամանակ խնամքով քաղում է ուրիշ եւրոպական մեծ օրգանների ամենասուր արտայայտութիւնները ցարական մանիֆէստի ու նրա հեղինակի վերաբերմամբ:

Այդ բոլորը, յիրաւի, անսովոր է: Եւ իբրև այդպիսին՝ մխիթարական...

Մի, սակաւապետ ենք, անշուշտ, գիտենք քչով բաւականանալ ներկայ տխուր ու ահաւոր օրերում: Բայց քիչ բան չէ այդ ցասումը եւրոպական կապիտալիզմի խոշորագոյն օրգանների կողմից, երբ մտածում ենք, որ այդ կապիտալիզմը իր առատաձեռն փոխառութիւններով ազատեց մեր բռնակալութիւնը մահացու հոգեվարքից, տեղ նրան և տալիս է մինչև օրս էլ հնարաւորութիւն՝ շնչելու, կազդուրելու և ջախջախելու Յեղափոխութիւնը...

Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում

Ջոն Կիրակոսյան.
Երեւան, 2009, 680 էջ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ. ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Անցյալ տարի նշվեց հայ նշանավոր պեսական եւ քաղաքական գործիչ, պատմաբան, հրապարակախոս Ջոն Կիրակոսյանի (1929-1985) ծննդյան 80-ամյակը: Ի թիվս այլ միջոցառումների, այդ հոբելյանին է նվիրված նաեւ ներկայացվող գրքի լույսընծայումը: Գիրքը, որ հրատարակվել է պետական պատվերով եւ ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, կազմել, խմբագրել եւ առաջաբանը հեղինակել է Ջոն Կիրակոսյանի որդին՝ պատմական գիտությունների դոկտոր Արման Կիրակոսյանը: Սույն հատորը ներառում է Ջոն Կիրակոսյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող տպագիր եւ ձեռագիր բազմաթիվ նյութեր եւ փաստաթղթեր՝ գրախոսականներ նրա հրապարակումների մասին, նամակներ, հեռագրեր, հատվածներ հուշապատումներից ու օրագրերից, պատմվածքներ, էսսեներ, հուշեր, բանաստեղծություններ եւ այլ նյութեր: Այդ ամենի միջոցով փորձ է կատարված ընթերցողին ներկայացնել ոչ միայն Ջոն Կիրակոսյանի կյանքն ու գործունեությունը Հայաստանի եւ Սփյուռքի իր ժամանակակիցների հայացքով ու գնահատականներով, այլեւ պատկերացում տալ հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման համար կարեւոր ժամանակաշրջանի մասին:

Գիրքը բացվում է ՀՀ նախագահի շնորհավորական ուղերձով, որտեղ մասնավորապես ասված է. «Նա Հայաստանում պատրաստված միջազգայնագետների առաջին սերնդից էր, ով աղացուցեց, որ նույ-

նիսկ Խորհրդային Միության կազմում հնարավոր է մշակել եւ վարել հայասանակենտրոն եւ հայակենտրոն արտաքին քաղաքականություն՝ մնալով տվյալ ժամանակի եւ քաղաքական դահի համատեքստում... Նա կայացավ իբրեւ արտաքին գործերի փայլուն նախարար մի երկրում, որն ախարհի համար նույնիսկ միջազգային իրավունքի սուբյեկտ չէր: Իր գործով նա դարձավ Հայաստանի նորագույն դատմության եւ նրանում ընթացող քաղաքական գործընթացների անփակելի մաս»:

Զոն Կիրակոսյանի քաղաքական հայացքները, ինչպես գրում է առաջաբանի հեղինակը, սկսել են ձեւավորվել անցյալ դարի 50-ական թվականների վերջերին, 60-ականների սկզբին՝ Նիկիտա Խրուշչով-Յակով Զարոբյան «ձնհալի շրջանում»: Նա տարբեր առիթներով, զանազան հանդիպումների ժամանակ, ընդգծված կրքոտությամբ ու բացասաբար էր արտահայտվում սալինյան ժամանակաշրջանի, Հայաստանին ու հայ ժողովրդին հասցված մեծ վնասի, հին մտածողության դրսեւորումների մասին: Նա խիստ քննադատության էր ենթարկում դատմագիտության մեջ հաստատված դահողանողական, կարծրացած, դոգմատիկ եւ ոչ ազգային մոտեցումները, հանդես էր գալիս հայ ժողովրդի անցյալի խնդիրները ճշմարտացիորեն լուսաբանելու օգտին: Սակայն իր հիմնական գործունեությունը Զոն Կիրակոսյանը նպատակաուղղել է ոչ թե դատմական նյութի վերլուծության արժեքներ ստեղծելուն, այլ ազգային գաղափարախոսության ձեւավորմանը: Ըստ նրա՝ ազգային գաղափարախոսությունն է այն հիմքը, որի վրա դետք է կառուցվեն ոչ միայն առողջ մտածելակերպն ու հայրենասիրությունը, այլեւ անկախության գաղափարը: Ժողովրդին դետք է նախապատրաստել ինքնուրույնության՝ սա է եղել Զոն Կիրակոսյան գործչի հավատամքը: Մի առիթով նույնիսկ, երբ քննարկվելիս է եղել Հայկական ԱԷԿ-ի կառուցման հարցը, նա իր ընկերների շրջապատում համոզմունք է հայտնել, որ առանց ատոմակայանի Հայաստանն անկախ չի կարող գոյատեւել:

1964 թվականին ՀԿԿ Կենտրոնական կոմիտեին հղված հայտնի նամակի տակ, որով առաջարկ է արվել Հայոց ցեղասպանության 50-ամյակը Հայաստանում նշել դեպական մակարդակով, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, դատմական գիտությունների դոկտոր, դրոֆեսոր Ծատուր Աղայանի, դատմական գիտությունների դոկտոր, դրոֆեսոր, ԳԱ արեւելագիտության բաժանմունքի վարիչ Հովհաննես Ինճիկյանի ստորագրությունների կողքին դրված է նաեւ Զոն Կիրակոսյանի ստորագրությունը: Իսկ 1965-ին արդեն նա հրատարակել է «Առաջին համաշխարհային դատերազմը եւ արեւմտահայությունը» աշխատությունը, որը նաեւ հեղինակի դոկտորական ատենախոսությունը դարձավ: Այդ ժամանակ հրապարակի վրա եղած մի շարք ուսումնասիրություններից, որոնք նույնպես շոշափում էին ցեղասպանության թեման, Զոն Կիրակոսյանի աշխատությունն առանձնացավ իր նորովի մոտեցումներով, գիտականությամբ եւ հրապարակախոսական ոգով եւ աննախադեպ արձագանք ունեցավ Հայաստանում, ինչի մասին վկայում են սույն հատորի մեջ ներառված բազմաթիվ գրախոսականները: Հատկանշականն այն էր, որ գիրքն աննախադեպ ընդունելություն գտավ նաեւ Մոսկվայի հասարակական-քաղաքական եւ գիտական շրջանակների կողմից, որոնք մինչ այդ միշտ էլ վերապահությամբ էին վերաբերվում խորհրդահայ դատմագրության մոտեցումներին եւ մեթոդաբանությանը: Համահայկական ընդունելություն գտավ նաեւ Զոն Կիրակոսյանի խմբագրությամբ 1972 թ. լույս տեսած «Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» աշխատությունը, որ արդյունք էր Հայաստանին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերն ի մի բերելու եւ թարգմանելու հսկայածավալ աշխատանքի:

Այս փոքրիկ անդրադարձը մեզ հնարավորություն է տալիս ընդհանուր գծերով միայն ներկայացնել մոտ յոթ հարյուր էջ դարունակող այս հատորը: Եթե փորձենք ավելի ընդհանրացնել, ապա դետք է ասենք՝ մի մեծ կյանքի հանրագումար է այս գիրքը, որից ամեն հայ կարող է իր հասանելիքն ստանալ:

Էդիկ Անդրեասյան

ԹԱԹՈՍ

Հրանտ Թադևոսյան



Հրանտ Թադեոսյանը (Թաթոս) ծնվել է 1940 թվականի ապրիլի 20-ին Արթիկի շրջանի Արևշատ գյուղում: 1965 թվականին ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գեղագիտության ֆակուլտետը:

Հրանտ Թադևոսյանը Հայաստանի նկարիչների միության անդամ է: Նա ունեցել է գեղանկարչական աշխատանքների մի շարք անհատական ցուցահանդեսներ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Նա մասնակցել է նկարիչների մի շարք միջազգային ցուցահանդեսներ - ի ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Լիբանանում և Սիրիայում:

Նրա բազմաթիվ գործեր պահվում են աշխարհի տարբեր երկրների թանգարաններում և մասնավոր հավաքածուներում:

Վերջերս Հայաստանի նկարիչների միության պատկերասրահում բաց - վեց նրա «Լռվա ձորում»ցուցահանդեսը:



ԴՐՈՇԱԿ

Պատկերասրահ



ԴՐՕՇԱԿ






INTERNATIONAL
LAW
REPORTS
LAUTERPACHT
AND
GREENWOOD
120
INTERNATIONAL
LAW
REPORTS
LAUTERPACHT
AND
GREENWOOD
121